

ԼԵԻՈՆ ՀԱՆԹ

122 .

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԵՐԷՆԻ

ԵՐՐՈՐԴ ՊՐԱԿ

891-99-5
6-30

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԵՐԷՆԻ

ԵՐՐՈՐԴ ՊՐԱԿ

Գլխավորական կոփերոյի տարուան համար

Կազմեց

ԼԵՒՈՆ ԶԱՆԹ

ՏՊԱՐԱՆ

ՀԱՄԱԶԳԻԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՊԷՑՐՈՒԹ

1950



282
A 3840
28772

ԵՐՐՈՐԴ ՊՐԱԿ ՆՐԱՅՈՒՄԸ ԲԱՌԱԹԵՔՈՒԹԵԱՆ

Առաջին հատուած

ԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ԿՅՈՐԴՆԵՐԸ

Ա. ԿՅՈՐԴ

Ա. Սնունդներու թեքումին, այսինքն միևնույն քառի զանազան ձեւերով գործածութեան կը ծառայեն նաեւ կցորդները:

Կցորդները անջատ բառեր են, բայց իրենց գործածութիւնը անշատ չէ. նախադասութեան մէջ միւս բառերուն նման իրենց անկախ դերը չունին: Սերտօրէն կը կապուին, կը կցուին գոյականի մը մէկ որոշ հոլովին, այդ հոլովին հետ ամբողջութիւն մը կը կապեն և կռտան այդ հոլովի նշանակութեանը մասնաւոր ուղղութիւն:

Այդ պատճառով ալ կցորդները կրնանք նկատել հոլովական վերջաւորութիւններուն մէկ նոր տեսակի լրացումը: Իրենց լռազցած դերով նման են յօդերուն:

Ինչպէս որ հոլովները կրնան ներկայանալ երբեմն յօդաւոր և երբեմն անյօդ, այնպէս ալ անոնք կ'ըլլան կցորդաւոր և անկցորդ:

Բ. Կցորդները առաջացած են բոլորովին տարբեր-տարբեր ճամբաներով: Եւ ըստ իրենց կազմի կրնանք բաժնել չորս խումբի:

1. Կցորդներուն մէկ մասը յատուկ կցորդ բառեր են, որոնք մեր լեզուին մէջ միայն իբրեւ կցորդ կը գործածուին և ինքնուրոյն գործածութիւն բնաւ չունին. ո՛չ կը հոլովուին, ոչ կը փոփոխուին, անթեք բառեր են, կը ներկայացնեն անթեք բառերուն մէկ տասնեակը:

Այդ անթեք կցորդներն են՝ առանց, մինչեւ, հանդերձ, բացի, դեպի, իբրեւ, իբր, ի, ըստ:

2. Կցորդներէն քանի մը հասը, նորէն մօտաւորապէս տասնհակ մը. ուրիշ տեղեր իբրեւ անուն, իբրեւ գոյական կամ ածական իրենց ինքնուրոյն գործածութիւնը ունին. սովորական անունի մը պէս ալ հոլով, յօդ ու կցորդ կ'առնեն, երբ գոյական են կամ գոյակա-նաբար առնուած:

Բայց իբրեւ կցորդ ալ կը գործածուին, այսինքն կու գան, կը կցուին որոշ իմաստով մը որոշ հոլովի մը և՛ մէկդի գնելով իրենց անկախ գործածութեան ճկունութիւնն ու թեքունութիւնը՝ կը քարա-նան ու կը դառնան տեսակ մը անթեք բառ:

Օրինակ, համաւ բառը, որ թիւ, հաշիւ, համրանք ըսել է և այդ իմաստով ալ թեքուն անուն մըն է. բայց իր այդ սովորական իմաս-տէն չեղած՝ նպատակը ցոյց տալու. գործածութեամբ կը կապուի դո-յականներու տրական հոլովին ու կը դառնայ անթեք կցորդ մը՝ «մեր տան համար», «գործիդ համար», «ծախելու համար»:

Սովորական անուններէ վոխառութիւն են, համար-ի նման, թեղ, առաջ, պէս, չափ, աստիճան կցորդները:

Նորէն անուններէն առաջացած, բայց անունի մը մէկ որոշ ձեւին ինքնայատուկ քարացումովը կազմուած են հետեւեալ կցորդները՝ մաս-ին, վրայ-օք, վերաբերմ-ամբ, ետ-ք, յ-ետ-ոյ:

3. Ձառ խումբ մը կը կազմեն զիրք ցոյց աւելող գոյական անունները, մօտ երկու տասնհակ. թակ, վրայ, մեջ, քով, դէմ, մօտ, հետ այդպէս ալ՝ դուրս, ներս, ետեւ, վերջ, վեր, վար, ի վեր, ի վար, ասդին, անդին, այլ և՛ վերեւ, ներքեւ, առջեւ, ետեւ:

Առնձ բոլորն ալ ունին իրենց անկախ գործածութիւնը, իբրեւ բուն անուն, կը հոլովուին, կ'ըստանան յօդ ու կցորդ: Բայց և ամեն անկախութիւն թողնելով կու գան կը կցուին որոշ հոլովի մը իբրեւ կցորդ:

4. Կցորդներու վերջին խումբ մը կը կազմեն քանի մը բայերու բունները, գործածականները նորէն տասնհակ մը:

Այս բայական ծագում ունեցող բառերէն մէկ-երկու հասը գրեթէ միայն իբրեւ կցորդ կը գործածուին, այսպէս՝ համեմատ, համաձայն, փոխանակ, փոխաբեմ, ընդդէմ: Մինչ միւսները, աւելի սովորական, մէկ կողմէն իբրեւ կցորդ կը ներկայանան, ուրիշ տեղ ալ կրնան իբրեւ ածական կամ մակբայ. ուրեմն միշտ ալ անհոլով, առանց թեքումի. այսպէս են՝ մերձ, կից, զուգըմբաց, զուգահեռ, տարբեր, անկախ, ջոկ, նման:

Գոյականէ ու բայաբունէ առաջացած կցորդները զժուար է ամեն անգամ յստակ որոշելը, թէ ե՞րբ են անոնք գոյական կամ բայաբուն և

11
երր հն կցորդ: Ինչպէս որ շատ յաճախ դժուար է որոշելը զոյականը ածականէն, ուր իր միակ ու հաստատ որոշիչը իր անկախ կամ կախիւ ալ դորձածութիւնն է: Նոյնն է պարագան նաև կցորդներուն համար: Դիրք ցոյց տրուող ուղղական հոլով անուն մը երբ վրան յօդ չունի, կրնանք միշտ իբրև կցորդ նկատել: Բայաբուններն ալ եթէ դրուած են բայի մը վրայ՝ կցորդ չեն, եթէ դրուած են գոյական որոշ հոլովի մը վրայ՝ կցորդ են:

Պ. կցորդները մեր հին լեզուին մէջ կը կոչուէին ճախադրութիւն, որովհետև գրաբարի մէջ այդ դերը խաղացող բառերը ընդհանրապէս վը դրուէին իրենց գոյականին առջև:

Մեր արդի հայերէնին մէջ ընդհակառակը կցորդներուն մեծագոյն մասը կը դրուին իրենց գոյական հոլովին ետեւը, այսինքն յեթադաս են. «նամակիս հետ», «հովիւրուն դէմ», «պարտէզիս համար», «ըսածիդ պէս», «գրկելէս ի վեր», «լիսն ի վար»:

Անթեք՝ կցորդները, այսինքն միայն իբրև կցորդ գործածուող անթեք բառերը, որ գրաբարէն կու գան արդէն, անոնք նախադաս ան միշտ «Մինչև սուն», «իբրև իմաստուն մարդ», «իբր հիւր», «ի նպատ», «ի պատիւ», «ըստ մեր որոշման», «առանց ջրելու»:

Բայաբունէ կազմուած կցորդները երկու դիրքով ալ կը դորձածուին. իրենց հոլովին ետեւէն ալ կրնան դրուիլ, առջեւէն ալ: «Անկախ տըւած խոստումէս» = «տըւած խոստումէս անկախ». «Կու խանակ բարկանալու» = «բարկանալու փոխանալ». «Նման քրոջդ» = «քրոջդ նման». «Ընդդէմ բոլոր մեղադրանքներու» = «բոլոր մեղադրանքներու դէմ»:

Իրենց հոլովադրութեան տեսակէտէն՝ կցորդներուն մեծագոյն մասը կը կապուին տրական հոլովին, տրական հոլովի կցորդներ են. կամ ինչպէս կ'ըսենք տրական հոլով կը պահանջեն:

Աւելի նըւաղ են բացառական հոլովի հետ կապուող կցորդները, այսինքն բացառական հոլով պահանջողները: Քանի մը հատը կը կապուին ուղղական հոլովին հետ: Իսկ դործիական հոլով պահանջող կցորդը գրաբարէն եկող մէկ բառ մըն է միայն:

1. Կեցերուն ցելը դի'ր յաւմար կցորդներ, ամեն կցորդ գործածե' անգամ մը միայն:

Անշուշտ կու գայ մարդը ... իրիկուն:

Գնացին պտոյտի ... քաղաքին վերի մասերը:

Նստեր նարտ կը խաղար փեսային ... :

Բաւական գրքեր գնեց ճամբան կարդալու ... :

Եղբայրդ ալ շատ անփութ է, ճիշդ հօրդ ... :

Այդ դէպքի ... լրագրիւնները նորէն գրեր էին:

Նայէ՛ սա փոքրիկին. այտեր ունի խնձորի ... :

Անպիտանէն ոչինչ առնել չկրցայ ... պարապ խոստումներէ:

Հանգստնակութեան պէտք է մասնակցին ամենքը ... իրենց կարողութեան:

Աղւոր ընդունելութիւն մը կ'ուզեն կազմակերպել ... պատիւ հիւրին:

Պաշտօնեայի ըսածին ... մեր շոգենաւը գայ պիտի վաղը կէսօրին:

Ինչքան գիտեմ՝ հօրմէն ... ուրիշ մարդ չունի:

Անձրեւէն ... հաւերուն ջուր տըւող շատ կը ճարուի: Դուն եթէ շնորհք ունիս անձրեւէն ... այդ ջուրը ճարէ:

Ք. Արսագրե՛ եւ ընդդէ՛ կցորդներ:

Տնօրէնը ինքը բացակայ էր ժողովէն ըստ սովորութեան. տնօրէնին փոխարէն եկեր էր օգնականը: Բացի տնօրէնէն ներկայ էին բոլոր միւսները:

Ուղեկիցս նախ խոստացաւ ինծի, որ մինչեւ այդինները հետս կու գայ, բայց փայտէ կամուրջը անցնելնուս պէս ձիուն գլուխը դարձուց դէպի գիւղ:

Ի փոխարինութիւն իր բարեխիղճ աշխատութեան պաշտօնը բարձրացուցեր են. իսկ իբրեւ զնահատութիւն իր ազնիւ վերաբերումին կարծեմ որոշեր են օթա մը նըւիրեն:

Տղուդ մասին ըսածդ հարցուցի ուրիշներուն ալ. դէշ բան մը չըսին իր վերաբերմամբ, կ'ըսեն՝ դանդաղ է քիչ մը ամեն գործի մէջ: Ստոր համար մարդ չեն հեռացըներ պաշտօնէ. բայց ով գիտէ, քանի որ ինծմէ զատ ամենքը զժգոհ են իրմէն, առանց կրակի մուխ չըլլար:

Յ. Զանա՛, որ արսայայտես միեւնոյն բանը առանց կցորդ գործածելու:

Ըստ երեւոյթին գալու չեն: Առանց սակարկութեան ընդունեցի իր առաջարկած գինները: Ներկայացում մը պիտի կազմակերպենք ի նպատակ պարոցատիրաց Ընկերութեան: — Ես ալ հրաւիրուած էի խորհրդակցութեան իբրեւ պաշտօնակից: — Մեր գիւղին մօտ աւերակ եկեղեցի մը կայ: — Գորգավաճառին հետ քիչ մը ետքը կու գանք ձեր խանութը: — Երկու պղտիկները անկողնի ծածկոց մը փռեր էին սեղանին վրայ, իրենք մտեր էին սեղանին տակ ու տունտեղ կը խաղային իսկական տանտիկիներու պէս: — Մեծ-հայրիկս նստեր էր պատուհանին դէմ, դրասեղանին առջեւ և առանց գլուխը բարձրացընելու կը դրէր տետրոկին մէջ: Ալ չմօտեցայ իրեն՝ աշխատանքը չխանդարելու համար. անշուշտ գրածը գործի վրայօք բան մըն էր:

4. Հետեւեալ ընդգծուած անկցորդ արտայայտութիւնները դարձս'ւր
այնպէս, որ կցորդ գործածուի. առանց իմաստը փոխելու:

Դեղը կու տան նայելով թէ ինչ է հիւանդութիւնը:

Յօդուածին մէջ յաճախ խօսած է մեր բաղաճն:

Ինչ չլուս, թող գրքին մէջ պատկեր չըլլայ:

Հակառակն քաւ իմ ցանկութեան ու ելաւ գնաց:

Սրբ հաց չկայ՝ աշխատելու կարողութիւն չկայ. երբ աշխատանք
չկայ՝ հաց չկայ:

Մի՛ յոխորտար քեամահներուդ, ո՛չ ալ քծնէ՛ բարեկամներուդ,
եթէ կ'ուզես սէր ու յարգանք վայելես:

Երկաթը տաքցուցին այն աստիճան, որ կարմրեցաւ:

Մի՛ կրկնէր ամեն լսած խօսքդ. թուրակ ըլլաս կարծես:

Ուսուցիչս ալ մտածելու տեսն ճակատը կը չփէ, ճիշդ ինչպէս
նայրիկս կ'ընէ:

Շարաթ մը հիւր եղաւ մեզի. հետն էին կիներն ու զաւակները:

Կռուկն ու իր ձագերը կեցեր էին տանիքին եզերքը:

Տոպրակ մը սերմ է բերեր ցանելու:

Աստու նիւրուն, մի՛ մերժեր իր խնդիրքը:

5. Ընդգծե՛ գոյականն ու բայաբուն եղող բառերը միայն հոն, ուր
գործածուած են իբրեւ կցորդ:

Փողոցներուն մէջէն առուներ կը վազէին. առու մըն ալ պատին
տակով կու գար կը մտնէր տան շրջափակին մէջը: Աւագան մըն ալ
կար բակին մէջ, և ծաղիկներ էին ցանուած անոր երկու քովերը:
Իսկ ծաղիկներուն քով՝ կանաչեղէն: Շատ ախորժելի զովութիւն մը
կը տիրէր ծառերուն տակ: Ես ալ փոռեցայ ծառին տակը, խոտերուն
վրան և սկսայ մտածել իմ վիճակիս վրայ:

Մարդը սաստիկ բարկացիր էր աղուն դէմ, ալ չգիտեմ՝ ինչու
համար: Կը վազէր ետեւէն, որ բռնէ: Տղան իսկոյն ներս նետուեցաւ
պատուհանէն. մարդն ալ վազեց նորէն տան դռնէն ներս ու կեցաւ
շիտակ տղուն դէմը, կարծեմ վազվզուքը ծնծով վերջացաւ:

Եկուր հո՛ս, կեցի՛ր քովս, հետդ խօսելիք ունիմ: Դրածիդ մէկ
մասին համաձայն եմ. միւս մասին՝ ոչ: Ինչ որ կ'ըսես ցորենի մա-
սին ու ցորենի մշակման մասին՝ գէշ է: Բայց ինչ որ կ'առաջար-
կես բրինձի համար ու բրինձի մշակման համար՝ բոլորը ծուռ ու չի-
տակ բաներ են: Քանի որ բրինձի մշակումը տեսած չես գործի վը-
րայ՝ գոնէ երթայիր մշակներուն քով և շնորհքով տեղեկանայիր
գրելէդ առաջ:



Բ. ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎԻՆ ԿՑՈՐԴՆԵՐԸ

Ա. 1. Համար կցորդը գործողութիւնն ցոյց տրւող բառերու տրական հոլովին հետ կա՛մ նպատակը ցոյց կու տայ կա՛մ պատճառը: Եթէ տրական հոլովը անյօդ է՝ սովորաբար նպատակը. եթէ տրական հոլովը գիմորդ յօդ ունի՝ ցոյց կու տայ պատճառը:

Օրինակ՝ «Կը վազէինք տաքնալու համար». նպատակ է: «Կը վազէինք տաքնալու համար». պատճառ է: «Տունը մնաց յամառութեան համար», այսինքն յամառութիւնն ընելու համար. «Տունը մնաց յամառութեան համար», այսինքն պատճառը իր յամառ ըլլալն էր:

Իսկ սովորական անուններու տրականին հետ համարը կցորդը ցոյց կու տայ որո՛ւն կամ ո՛ր տեղին յատկացուած ըլլալը. «Եղբարս համար նոր կօշիկ գնեցիք». «Վառարան մը պէտք է մեր վերի սենեակին համար»:

2. Առանց կցորդը գործողութիւնն ցոյց տրւող բառերու տրականին հետ ցոյց կու տայ այդ գործողութեան տեղի չունենալը, չկատարուիլը. «առանց մտածումի», «առանց վայրոյթի», «առանց ուտելու», «առանց ուղիւ»:

Իսկ սովորական անունի մը տրականին հետ ցոյց կու տայ բանի մը միասին չըլլալը կամ չունենալը. «առանց բարեկամի», «առանց հացի», «առանց գործիքի», «առանց սպասաւորի», «առանց քու կամքիդ ու քու հրամանիդ»:

3. Հետ կցորդը տրական հոլովի հետ ցոյց կու տայ գործակցութիւն մը. տրական հոլով անունը կը դառնայ գործակից: «Քրոջս հետ իջայ պարաէզ», այսինքն ես ու քոյրս միասին իջանք. «Տեսայ ընկերդ իր վարպետին հետ». այսինքն ընկերդ ու իր վարպետը միասին. «Դանակի հետ մի՛ խաղար», դանակը կը նկատուի իբրեւ խաղակից:

4. Մասին, վերաբերմամբ, վրայօք կցորդները երեքն ալ նոյն նշանակութիւնը ունին «ինչ որ կը վերաբերի» իմաստով:

Առաջինը «մաս» բառի տրական հոլովն է, յօդաւոր. իբրեւ կցորդ քարաքած: Երկրորդը «վերաբերում» բառի դարար գործիական հոլովն է, իբրեւ կցորդ քարաքած: Այդպէս ալ երրորդը՝ «վրայ» բառի:

Այդէն վրայ բառը, առանց գործիականի ալ նոյն իմաստով կը գործածուի. «Իր կարողութեան մասին» = «Իր կարողութեան վրայ» = «Իր կարողութեան վրայօք»:

Մասին կցորդը իր քարաքածան մէջ պահած ըլլալով երրորդ դէմքի իր յօդը՝ չի թողնէր, որ իրեն կապուած տրական հոլովը երրորդ դէմքի յօդ առնէ իր վրայ. «Այդ հարցի մասին», կարելի չէ ըսել՝

«այդ հարցին մասին»։ «ձոսք դարձաւ իրենց պարտէզի մասին»։
կարելի է ըսել «իրենց պարտէզին մասին»։ Կրնայ գործածուիլ մի-
այն դիմորդ յօդ, եթէ առաջին կամ երկրորդ զէմքով է։ «Ի՞նչ է
քու տպաւորութիւնդ իմ շարադրութեանս մասին»։ «ձոսեցայ ուր
հարկ է քու գործիդ մասին»։ Բայց պիտի ըսենք «խօսեցայ իր գործի
մասին»։

5. Փոխանակ, փոխադրեմ, ճեղ կցորդները երեքն ալ նոյն իմաս-
տը կու տան տրական հոլովին։ Տրական հոլովը կը դարձնեն գոր-
ծողութիւն մը, որ սպասելի էր ու չէ կատարուած։ Կամ կը դարձը-
նեն առարկայ մը, որ իբրեւ ինչ գործածուած ըլլալը ցոյց կու տայ։
«Փոխանակ ծախելու՝ գրաւ է գրեր»։ «Համոզելու փոխարէն կը
յանդիմանէր»։ «Խողքելու տեղ՝ նստեր կու լայ»։ «Մտտիտի տեղ գը-
րիչ կը գործածէ»։ «Վարձքիս փոխարէն խրատներ կու տար ինծի»,
«Փոխանակ հացի, գետնախնձոր կ'ուտեն»։

Բ. 1. Պես ու նման կցորդները տրական հոլովի հետ կը ծառայեն
իրբեւ համեմատութեան օրինակ մը։ «Մաղկի նման բացուեր է», «Նը-
ման անառակ տղու մը», «Ձկան պէս կը լողայ», «Սենեակի պէս տեղ
մը մտանք»։

Սնորոշ դերբայներու տրական հոլովը դիմորդ յօդով և պես կը-
ցորդին հետ կ'ըստանայ յատուկ գործածութիւն մը անմիջապէսի ի-
մաստով։ Հսկուն պէս = լսեց թէ չէ։ հասնելուս պէս = հասայ թէ չէ,
կանչելուդ պէս = կանչեա թէ չէ։

2. Չափ ու աստիճան կցորդներն ալ կը ծառայեն համեմատու-
թեան։

Չափ կցորդը իրեն կապուած տրական հոլովի նիւթական գոյա-
կանը կը դարձնէ համեմատութեան չափ։ Բաժակի մը չափ, զըլ-
խուդ չափ, երկու կանգունի չափ, մեր պարտէզին չափ։

Վերացական բառերու հետ կը նոյնանայ պէս ու նման կցորդնե-
րուն։ «Ստախօսութեան չափ զղուելի բան չառ քիչ կայ» = Ստա-
խօսութեան պէս կամ նման։

Չափ և աստիճան կցորդները անորոշ դերբայներու տրական հո-
լովին հետ ցոյց կու տան մինչեւ մէկ որոշ վիճակի մը հասնելու հա-
մեմատութիւնը։ «Բրտնելու չափ վազեցինք» = ձքրանելու աստի-
ճան, «խենթենալու չափ» = «խենթենալու աստիճան», «մուրալու
չափ աղքատ էին» = «մուրալու աստիճան»։

3 Ըստ և համեմատ կցորդները իրենց կապուած տրական հոլովը
կը դարձնեն հին գործողութեան մը յիշատակումը, որ վկայութեան
կը կանչուի։ «Ըստ մեր որոշման վճարեցի այսօր բոլոր պատրաստ
գումարները»։ «Ձեր պահանջին համեմատ ահա՛ կը զրկեմ ձեզի ապ-
րանքներուն նմուշները»։

Ըստ և համեմատ կցորդները կու տան նաեւ «ինչպէս որ», «երբ որ», «ինչ չափով որ» իմաստը տրական հոլովին: «Պահէ՛ դրամը քովդ և կը գործածես ըստ պահանջին», «ըստ պէտքի, ըստ կարողութեան, ըստ սովորութեան» «պէտքին համեմատ, կարողութեանդ համեմատ, սովորութեանդ համեմատ»:

Գրաբարէն մեզի կը մնայ ճշտօրինիք==օրէնքի համեմատ և ճշտ իսք==այսինքն ըստ իմ դատողութեանս արտայայտութեան ձեւերը:

Գ. 1. Մեզ, ջակ, վրայ, քով, մօտ, դիմ, շուրջ դիրք ցոյց տրուող գոյականները, երբ անյօդ ու անհոլով դրուած են տրական հոլովի մը վրայ կը դառնան կցորդ, կը նկատենք իբրեւ կցորդ:

Թէեւ միշտ ալ կարելի է, իբրեւ տեղի անյօդ ուղղական հոլով մը նկատել անկախ գործածութեամբ, որուն կապուած տրական հոլովը այդ տեղի որուն կամ ինչին պատկանիլը ցոյց կու տայ: «Դրի սեղանին վրայ», «Եր դրի, վրա՛ն դրի, ինչի՞ վրայ», «սեղանին» կամ միացած կերպով, «Եր դրի, սեղանին վրայ» ինչպէս որ կ'ըսենք «սեղանին համար», «սեղանին հետ», առանց երկու բառերը իրարմէ զատելու, առանց տեղը ցոյց տրուող բառը անկախացընելու:

Բայց երբ այդ դիրք ցոյց տրուող անուանները իրենց վրայ յօդ ունին կամ հոլովուած են՝ արդէն անպայման կերպով անկախ գործածութիւն կ'ըստանան և կցորդի մասին խօսք ըլլալ չի կրնար: «Մեր տան դէմի ծառը» «Գլխու մէջները ցու մը կ'ըզգամ», «Ինկաւ թոռին տակը»:

Ի՞նչ կցորդի փոխարէն դիմաց ձեւն ալ կը գործածենք, ինչպէս և աւելի ընդգծումով մը՝ դիմուդիմ:

Քով ու մօտ հոմանիշ կը դառնան կարծես հետզհետէ, թէեւ առաջինը անմիջապէս կողք ըլլալը կ'ընդգծէ, իսկ երկրորդը ընդհանուր մօտիկութիւն մը միայն կը յայտնէ և ամեն ուղղութեամբ:

2. Վերեւ, ներքեւ, առջեւ, ետեւ, միջեւ կցորդները գրաբար՝ գործիական հոլովի ձեւերն են, բայց մեր արդի հայերէնի մէջ իբրեւ առանց ունեցող ուղղական հոլով կ'ըզգանք:

Միջեւ մէջ ըսել է, բայց երկու բանի միջեւիլ:

Ներքեւ, թէեւ կու գայ ներ արմատէն, բայց ջակ ըսել է, որոշ տեղեր ալ վար ըսել է:

Առջեւ-ի փոխարէն նաեւ առաջ հիմնական բառը կը գործածենք իբրեւ կցորդ. մեր դրան առջև=մեր դրան առաջ:

Վերեւ վրայ ըսել է: Միայն թէ վրայ բառը աւելի նիւթական իմաստ ունի, իրապէ՛ս բանի մը վերի երեսը. մինչդեռ վերեւ աւելի ընդհանուր և աւելի անորոշ արտայայտութիւն է՝ վերերը, վրաները, օդին մէջ:

Դ. Բայերուն պարզ կամ բարդ արմատները, առանց բայական վերջաւորութեան երբ կը գործածուին տրական հոլովի հետ, իրենց մերկ վիճակին մէջ կը նմանին կցորդի: Որովհետեւ ամեն բայ ըստ իր իմաստի որոշ հոլով խնդիր կը պահանջէ և այդ որոշ հոլովով խնդիրը քովի մերկ բայարմատին հետ առած՝ կցորդաւոր հոլովի մը տպաւորութիւնը կ'ընէ:

Ամենէն յաճախ գործածուող և ամենէն աւելի կցորդի նմանութիւն առած բայարմատներն են՝ հակառակ, համաձայն, ընդդէմ, հակադիր, մերձ. կից, կիպ. զուգահեռ ու զուգընթաց, որոնք դիրք ցոյց տրուող գոյականներու լրացումը կը դառնան, անոնց չարունակութիւնը:

«Մեր գրասենեակին կից ընդարձակ սենեակ մը կայ»։ «Պզտիկը նստեր էր քրոջը կիպ»։ «Մախել կ'ուզեն իրենց ունեցած հողերը գիւղին մերձ»։ «Քաշէ՛ գիծ մը վերի գծին զուգահեռ»։ «Կառքը կը սլանար գետին զուգընթաց»։ «Համաձայն վերջին նիստի արձանագոյրութեան»։ «Հակառակ իր տըլած խօսքին ու երդումներուն»։ «Մարդը կը մերժէ վճարել ընդդէմ ամեն օրէնքի ու սովորութեան»:

Այս բոլոր օրինակներուն մէջ տրական հոլովները խնդիր են իրենց կապուած բայարմատներուն. բայց նմանութեան ազդեցութեամբ այդ բայարմատները կ'ըստանան որոշ քարացում մեր ականջին համար և կ'ըզգացուին ու կը նկատուին իբրեւ կցորդ:

Ե. Կցորդաւոր անունը այնպէս փոփոխէ՝, որ ցոյց տայ գործողութեան պատճառը:

Հիւանդացաւ ծուլութիւն ընելու համար:

Պիտի մեկնիմ տուն ձեռքիս աշխատանքը վերջացընելու համար:

Բացատրութիւն մը տուր իրեն տօն օրերը մեզի հետ անցընելու համար:

Մենք ալ հրաւիրուած էինք ստորագրելու համար:

Սիրելի՛ս, իրողութիւնն աս է, կ'աշխատինք ուտելու համար և կ'ուտենք աշխատելու համար:

Մեծ մարդիկ յաճախ կը հալածուին իրենց հայրենիքին ծառայելու համար:

Զ. Լրացուէ հետեւեալ կիսաց խօսքեր. լրացումիդ մէջ պէտք է գործածես առանց կցորդի:

Մարդը իր գործը հանեց ոտքի ...

Պատմէ՛ տեսնեմ եղելութիւնը միայն ...

Ամենքդ ալ անպատճառ ներկայ ըլլա՞ք ...

Ի՞նչ կարելի է գրել ...

Ելեք արականութեան հոսանքը, որ կտրեցին, ...

Դուն պիտի արտասանես այս կտորը, բայց...

Յ. Ըսե՛ք միեւնոյն բանը հետ կցորդը գործածելով:

Շիտակն ան է, որ դուն ու եղբայրդ երթաք ու անմիջապէս
կարգադրէք այս հարցը:

Յակոբն ու Մինասը ժամ մըն է իրարու հետ վէճի են բռնուեր:
Ես ալ, ամբողջ բազմութիւնն ալ դուրս ելանք սրահէն:

Տեսայ ձեր տղաքը ու մերինները գնդակ կը խաղային դաշտին
վրայ:

Մոլորակներն ու իրենց արբանեակները կը դառնան արեւ աստ-
ղերուն շուրջը:

Նայէ՛, ընկերդ ու իր մայրիկը կառքին մէջէն քեզի բարեւ կու տան:
Կենդանիներն ու իրենց ձագուկները շատ կը սիրեն խաղալ միասին:

Յ. Փոխարինե՛ք ուրիշ համարժեք կցորդով մը:

Գետնաշարժերու վրայսք նոր երկասիրութիւն մը կարգացի:

Փոխանակ տրտնջալու, քիչ մը աւելի կանուխ ելլէիր, գործդ
կ'ըլլար աւարտած:

Կապիկի պէս դիւրաշարժ է անպիաանը ու աղուէսի պէս խորամանկ:

Ըստ իս այս տարի կ'աւարտեն մեր դիմացի շէնքը:

Ըստ սովորութեան եկեր ես նորէն առանց գլխարկի:

Կծծիութեան կարիք չկայ. բայց դրամդ ծախսելու ես ըստ պէտ-
քի ու ըստ պահանջի:

Ներողութիւն խնդրելու տեղ, յիմարի պէս կեցեր ես ու կը խնդաս:

10. Գրե՛ք նախադասութիւններ, ուր գործածուին հետեւեալ կցորդ-
ները. երկու օրինակ ամեն մէկ կցորդի համար:

Մէջ. դուրս. վրայ. համար. հետ. վեր:

11. Գրե՛ք մէկ-մէկ նախադասութիւն վերը կցորդ եղած բառերը մէջը
նիւսելով. բայց հիմա այլ եւս կցորդ պիտի չսլանք:

12. Հետեւեալ նախադասութիւններուն այնպիսի ձեւ մը տուր, որ
կցորդաւոր հոլով չգործածես, ինքիկե առանց իմաստը փոխելու:

Եկեր եմ քեզի առաջարկս բացատրելու համար:

Գարեգինը իր ընկերոջ հետ տեսայ կ'երթային զէպի ծով:

Յորենի նման, դարին ալ յաճախ կը գործածեն հացի համար:

Կառ-կարմիր դարձաւ խեչափառի պէս:

Դո՛ւն ինչ գտնադատ ունիս այդ մարդուն դէմ:

Հակառակ իմ կամքիս պիտի վերադառնամ ետ:

Ես վարուեցայ կէտ առ կէտ մեր որոշման համեմատ:

Նորէն ինծի չտեսնելու արեւա ըստ իր յիմար սովորութեան:

Իզուր քննադատելու փոխարէն, խնդրեմ, ինքդ առաջ անցիր,
եթէ կրնաս:

Այդ հարցի վերաբերմամբ ես այլ եւս առարկութիւն չունիմ:

Գ. ՄԻՒՍ ՀՈՒՈՎՆԵՐՈՒՆ ԿՑՈՐԴՆԵՐԸ

1. Ուղղական հոլովի հետ կ'աչխատին.

1. Ի կցորդը ուղղական հոլովի մը առջեւ դրուած՝ անոր տրաման հոլովի նշանակութիւն կու տայ. ի պահիւ = պատուին, ի նըպաստ = օգտին, ի յուր, որ լսեն, ի տես = տեսնելուն, երբ տեսաւ ի ցոյց = ցոյցի համար:

2. Իկելի և մինչեւ կցորդները. առաջինը ցոյց կու տայ ուղղութիւնը, իսկ երկրորդը այն տարածութիւնը, որ կը տանի ուղղական հոլովին որոշած տեղը: Մինչեւի տեղ ժողովուրդը կ'ըսէ նաեւ ինչուան:

3. Իվեր և իվար, համարժէք են դէպի վեր ու դէպի վար. լեռն իվեր, ձորն իվար. սանդուղն ի վեր, գետն ի վար: Ուղղականը միշտ կ'ըլլայ յօդաւոր և կցորդը յետադաս:

Ա. Բացառական հոլովին հետ կը բանին.

1. Առաջ, ետք, յետոյ, իվեր կցորդները գրուելով բացառական հոլովի մը վրայ՝ այդ բառը կը դարձնեն ժամանակ բաժնելու սահման մը: Զատիկէն առաջ, հօրս մահէն ետքը, ճաշէն յետոյ, քու գալէդ իվեր:

Ետքը և յետոյ կցորդներու իմաստով կը գործածուի նաեւ վերջ գոյականը, իբրեւ կցորդ, մասնաւորապէս անորոշ դերբայի բացառականին հետ: «Այս ամենը բացառելէ վերջ», «նամակս աւարտելէ վերջ», «նկատողութիւնը լսելէ վերջ», այդպէս ալ «ճաշէ վերջ», «ընթերիքէ վերջ», «խաղէ վերջ», այսինքն ուտելէ, ընթրելէ, խաղալէ վերջ:

2. Բացի կցորդը բացառականի հետ երկու իմաստով կը գործածուի: Կա՛մ բացառութիւն մը կը դարձնէ իր բացառական հոլովը, եթէ իրեն կը հետեւի բացասական բայ մը. «Բացի մաքուր օդէ, ուրիշ ճար չկայ», «Բացի քեզմէ այս գործը ուրիշ մը չի կրնար կատարել»: Կա՛մ կու տայ «ոչ-միայն»-ի իմաստ. եթէ յաջորդողը դրական բայ մըն է՝ «Բացի մաքուր օդէ, պէտք է նաեւ յաւ սնունդ», «Բացի աշխատանքէ, պիտի ունենաս նաեւ կարողութիւն»:

«Բացի» կցորդի իմաստով և ճիշդ նոյն կանոնով կը գործածուի զատել բային արմատը՝ զատ, իբրեւ կցորդ. «Մաքուր օդէ զատ ուրիշ միջոց չկայ», «Հասկընալէ զատ՝ պէտք է քանայի նաեւ հասկընել»:

3 «Զատ» կցորդին նման տարբեր, անկախ, ջոկ և մէկ-երկու աւելի նըստ գործածուող բայարմատներ իբրեւ կցորդ կ'ըզգացունին ու կը նկատուին իրենց բացառական հոլով խնդիրներուն հետ: «Հասցէն տարրեր պահանջներ ալ կան կեանքի մէջ». «Գործը զուխ եկաւ մեր

ջանքերէն անկախ, գլան միշտ բացառիկ էականեր բոլորովին իրենց նմաններէն ջուկ»:

4. Վեր, վար, դուրս, ներս, ասդին, անդին դիրք ցոյց տըւող անուններն ալ, երբ անյօդ են ու անհոլով կը նկատուին իբրեւ կցորդ իրենց բացառական հոլովին վրայ. «Ձէրօէն վար ցրառութեան աստի-ճաններն են, զէրօէն վեր՝ տաքութեան»։ «Վոդովուրդը կը խուժէր դռներէն ներս», «Ակնարկ մը նետեց պատուհանէն դուրս», «Գետակէն ասդին մեր սեփական հողերն են», «Աչքէս անդին կորսուէ՛ն»։ Այս տեսակի բայարմատ-գոյական եղող կցորդները, ինչպէս վերը տեսանք, կրնանք միշտ նկատել պարզապէս ուղղական հոլով խնդիր։

Գ. Գործիական հոլովը մեր արդի աշխարհաբարի մէջ կցորդ չառներ իր վրայ։

Միակ բացառութիւնը գրարարէն մնացած հանդերձ կցորդն է, որ «միասին», «միատեղ» ըսել է և գործիական հոլովի հետ է կապուած։

«Հանդերձ ընտանեօք» կամ «ընտանեօք հանդերձ»։ «Այս բոլորը գիտնալով հանդերձ»։ «Այսկերտներով հանդերձ»։ «Հեռացան երկրէն իրենց ինչքերով ու հարստութիւններով հանդերձ»։

Մեր արդի կենդանի լեզուն «հանդերձ»-ի փոխարէն «հետ» կցորդը կը գործածէ. և շատ անգամ աւելորդ «միասին» մըն ալ հետը։ «Քեզի հետ միասին հաճելի է ճամբորդելը»։ «Ընտանիքին հետ միասին մեկնեի են արդէն ամարսնոց»։ «Այս նկատողութիւններու հետ միասին պիտի յայտնեմ սակայն, որ կատարածդ լուրջ գործ է»։

Գ. Կցորդներուն մէջ բոլորովին ուրոյն դիրք մը ունի իբրեւ կամ իբրեւ կցորդը, որ գործիականէ զատ միւս երեք հոլովներուն վրայ ալ կրնայ դրուիլ։ Ինչ կը գործածուի երկու իմաստով։

Նախ՝ «ինչպէս», «որպէս» նշանակութեամբ, իրեն կապուած անունը դարձնելով համեմատութեան չափ մը։ «Իբրեւ բարեկամ ներկայացայ իրեն»։ «Իբրեւ բարեկամի ներկայացայ իրեն»։ «Իբրեւ բարեկամէ մը բաժնուեցայ իրմէն»։

Երկրորդն ալ՝ «մտաւորապէս», «շուրջ», «կարծես» իմաստով, երբ թըւական անունի մը առջեւն է դրուած. «Մնացողները իբրեւ հարիւր հոգի կը հաշուէինք»։ «Իբրեւ հինգ հազար Փրանքի բարձրացաւ պարտքը»։ «Իբրեւ տասը հոգիէ՝ տուրք կը պահանջէին մեզմէ»։

13. 'Իլ'ը յարմար կցորդներ։ Ամեն կցորդ մեկ անգամ։

Իր պաշտօնէն ... ուրիշ հազար գործեր ունի անիկա։

Երկու տուն ալ ունին ... իրենց կեցածէն։

Խոսեցէ ... ուրիշ բանի պիտանի չէ։

Իր գործերը ազէկ կ'երթան տարիէ մը ... :

Երկու անդամ պատահեցայ իրեն կաղանդէն . . .
Չատիկէն . . . գացեր է գիւղ:
Շատ բան փոխուեցաւ եղբօրս գալէն . . .
Գրիչ վերցընելէ . . . որոշ գիտցի՛ր գրելիքդ, իսկ գրելէ . . .
անգամ մը ստուգէ՛ գրածդ:

14. Դի՛ւր յարմար անուցներ իրենց անհրաժեշտ հոլովներովը, որ
կցաւրդները կը պահանջեն:

Մարդ չտեսաւ . . . գատ:
Կօշիկ գնեց . . . համար:
Վէճի բռնուեցայ . . . հետ:
Թանձն առաւ . . . պէս:
Ի՞նչ ես ուռեր . . . նման:
Կշտացանք այդ միօրինակ երգերէն . . . տատիճտն:
Նախ պէտք է ինքդ գայիր այցելութեան ըստ . . . մեր աշ-
խարհի:

Նոր բան մը չեմ լսած իր . . . մասին:
Հակառակ . . . շատ շուտ աւարտեցի:
Նորէն չեկաւ տրւած . . . հակառակ:
Առանց . . . վարդ չըլլար:
Ներսը մարդ չկայ, բացի . . .
Համաձայն էին ամենքը . . . գատ:
Մեր տունը կարծես նոր կեանք ստացաւ . . . իվեր:
Ես կ'ընկերաւորեմ քեզի մինչեւ . . .
Աղէ՛կ մտածէ . . . առաջ:
Իբրեւ . . . ներկայացաւ մեզի:
Թղթատարին բերած կապոցը յանձնեցի իրեն, իբրեւ . . .
Փոքրիկ հաւաքոյթ մը ունինք այս գիշեր ի . . . մեր հիւրին:
Մասնաւոր հանգանակութիւն մը կատարեցինք մեր մէջ ի . . .
Քսեղձ մարդուն:

Թէեւ անմիջապէս քեզի չի վերաբերիր, բայց կը յայտնեմ քեզի
ի . . .

15. Բացառական հոլով պահանջող եօթը կցորդ գտնածէ՛, ամեն
ձեկը առանձին հալսադասութեան մը մէջ:

16. Փոխարինէ՛ նոյնաթիւ կցորդով մը:

Նոր հարսի պէս կը շարժուիս:
Մեծ շէնք մըն են սկսեր մեր դպրոցին գիմար:
Օրէնքի համեմատ այդպէս վարուիլ կարելի չէ:
Կարդա՛ ծանր և ըստ իմաստի:
Փախանակ մեղադրելու՝ քիչ մըն ալ մտի՛ր իր վիճակը:
Լնկոյզի փոխարէն նուշ են խառներ մէջը:

Յուսահատելու տեղ պէտք է ճիգերդ կրկնապատկես:

Մեր գործի վերաբերմամբ նոր բան մը լսե՞ր ես:

Բացի հոգեւորականէն ամենքը ելան ոտքի:

Ռոճիկէն զատ կողմնակի եկամուտներ ալ ունի իր ապրուստին համար:

Ուշադրութեամբ կարդալէն ետք տնօրէնը ստորագրեց:

Քեֆի էինք երէկ իրիկուն ինչուան լուսնալը:

Սիրուն կտոր մը նըւագեց ջութակի վրայ հիւրի պատուին:

Եւ իր կարգացածը ի ցոյց ըսուած տափակ խօսքեր չէին:

Բացի այդ բնու չգիտէի, որ խանութդ թողնել կ'ուզես:

Գալու չէ իմ լսածիս համեմատ:

Պատին զուգահեռ պէտք է առու մը բերես պարտէզը, ձեռքով ջրելու տեղ:

Այդ բոլորի մասին ես արդէն գրած եմ եղբորս:

Սաստիկ արագ կը քալէր, քրտնելու չափ:

Զատկէն յետոյ կարելի է անցնիմ այդ կողմերը:



ԵՐԿՐՈՐԴ ԱՍՏՈՒԱԾ

ԴԻՄԱԶՈՒՐԿ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Ա. ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՈՒ ՓՈԽԱԴԱՐՁ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Ա. Մինչև հիմա մեր տեսած դերանուները դիմաւոր էին, այսօր իւրաքանչիւր դերանունի համար իրարմէ ասորբերուող երեք ձեւեր ունէին՝ նոյնիսկ թէ գործողութիւնը կատարողը խօսողն է, չսողն է, թէ այդ երկուքէն զատ ուրիշ մէկը:

Այդ՝ այդ եւսածեւ դերանուներուն դէմ մեր լեզուն ունի ուրիշ դերանուներ ալ, որոնք խօսողի ու լսողի մէջ խտրութիւն չեն դնէր. և միշտ ու ամենուն համար միայն մէկ ձեւով կը գործածուին: Այսօրինքն դիմադուրկ են և այդ պատճառով ալ շատ աւելի մօտիկ են ու նման սովորական բուն անուններուն:

Այս դիմադուրկ դերանուներն ալ քիչ են ու մատի վրայ համարուող, բայց առանձին ուշադրութեան կարօտ:

Կը բաժնուին ըստ իրենց իմաստին ու դերին հինգ տեսակի. Յտարաբերական դերանունն ու Անդրադարձ դերանուն, Անջատողական դերանուն ու Հաւաքական դերանուն և վերջապէս մէկ-երկու հատ ալ Անորոշող դերանուն:

Բ. Յարաբերական կը կոչուին այն դերանուները, որոնք բացարդապէս նախադասութեան մը մէջ կը փոխարինեն գլխաւոր նախադասութեան մէկ որեւէ անունը և երկու նախադասութիւնները կը կապեն իրարու:

Յարաբերական դերանուները հինգ հատ են՝ ով, որ, ինչ, ուր, երբ: Ով անձ մը կը փոխարինէ. ինչ՝ իր մը կը փոխարինէ, ուր՝ և՛ անձ կը փոխարինէ և՛ իր. ուր՝ տեղը ցոյց աւելող անուն մը կը փոխարինէ. իսկ երբ՝ ժամանակը ցոյց աւելող բառ մը:

Ճշգրտաբար բոլորովին թողնելու չատ կը դժուարանայ այն մարդը, ով անգամ մը համը տուր է քաղաքային կեանքին: «Տո՛ւր ինձի տա գիրք, որ դրած է սեղանին վրայ»: «Կ'ըստանաս միայն այն գրութիւնը, ինչ խոստացած էի քեզի»: «Ընդարձակ ու գեղեցիկ էր այն դասը, ուր կը ունար մեր չղեկաւորը»: «Ես գիւղն էի այն տարին, երբ մեծ երկրաշարժը պատահեցաւ»:



Այս հինգ յարաբերական գերանունները ունին բոլորն ալ իրենց կրկնակ ձևերը՝ ուլ՝ ուր, ուրբ ուր, ինչ ուր, ուր՝ ուր, եւրբ ուր, «Գրէ՛ ինչ որ ըսեմ», «ուլ որ դայ՝ թող վեր ելլէ», «որբ որ կ'ուզես՝ ընտրէ՛», «երբ որ դայ՝ իմաց տո՛ւր», «ուր որ երթաս՝ հետդ տա՛ր»։ Յարաբերականները մտքով կը հասկընանք, չափ յաճախ կը կրճատուին կենդանի խօսքին մէջ։

Կրկնակ ձևի յարաբերականները միայն իբրեւ գոյական կը գործածուին, իսկ հիմնական յարաբերականները իբրեւ ածական ալ կը գործածուին, արտայայտելով հարցում ու զարմանք. «ո՞ր մարդը», «ո՞ր մարդ», «ի՞նչ կործինք յայտնեցիր», «ի՞նչ գեղեցիկ երկիր», «ո՞վ մարդ», «ո՞վ սարսափ», «ո՞վ իմ միամտութիւնս»։

Յարաբերական գերանունները ազատ կերպով ալ կը գործածուին, առանց ստորագասական նախադասութեան մը կապը գտնալու, բայց միշտ հարցական, զարմացական կամ հետտրական շնչառով. «ո՞վ գիտէ», «ո՞վ բաւ», «ո՞վ տեսար», «ո՞րը գնեցիր», «ո՞րը ընտրեմ», «ե՞րբ եկաւ», «ե՞րբ պիտի վճարեմ», «ե՞րբ կ'երթաս», «ուր կը հասնիս ինծի»։

Ուլ միայն եղակի ուղղական ունի, միացածի տեղ կը գործածենք ուր գերանունի հոլովները։ Ուր լրիւ հոլովում ունի, բացի եղակի բացատականէն, որ փոխ կ'առնէ ուր գերանունէն։ Ուր ունի ուղղական և բացատական և միայն եղակի։ Ինչ կ'ենթադրուի լրիւ ու կանոնաւոր հոլովման։ Եւրբ ունի միայն եղակի, առնալ առանց բացատականի։

Ուր գերանունի տեղ կը գործածուին նաեւ ուրեւիլ, որեւիլ և ինչեւիլ բաղադրեալ ձևերը իրենց կրկնակներով՝ ուրեւիլ ուր, որեւիլ ուր, ինչեւիլ ուր։ Տեւիլ բառն է որ կը հոլովուի լրիւ կերպով և կը գտնէ ուր գերանունի պակաս թողած հոլովները։

ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ՀՈԼՈՎԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ

Եղ.	Ուղ.	ուլ	որ	ուր	երբ	ինչ
	Տրա.		որու	—	երբուան	ինչի
	Բաց.		—	ուրկէ	երբւընէ	ինչէ
	Գործ.		որով	—	—	ինչով
Յոգ.	Ուղ.		որոնք			ինչեր
	Տրա.		որոնց			ինչերու
	Բաց.		որոնցմէ			ինչերէ
	Գործ.		որոնցմով			ինչերով

Կրկնակ ձեւերու հոլովման ժամանակ վերջի յաւելուած ուր-երը անփոփոխ կը մնան. կը հոլովուին հիմնական մասերը. ինչի որ, ինչէ որ, որոնց որ, երբւնէ որ:

Պ. Փոխադարձ կը կոչուին անոնք որոնք գերանուանները, որոնք կը փոխարինեն այն մէկէ աւելի ելող անձերը, որոնցմէ կը բղխի և ուր կը յանգի գործողութիւնը միեւնոյն ժամանակ:

Ատոնք են՝ իրաւ. մեկզմեկ. միմեանց:

Երեքն ալ կը գործածուին միայն գոյականաբար և միայն եզակի. թէև յոգնակի են իմաստով:

Ատոնց ուղղականը երեք են՝ թակայ դառնալ չի կրնար նախադասութեան մէջ. այլ կ'ըլլայ միայն խնդիր, ինչպէս որ էր ինքրիքներ քաղաքիս անձնական գերանուներ:

Ու կը հոլովուին հետեւեալ ձեւով.

իրար	իրարու	իրարմէ	իրարմով
մէկզմէկ	մէկզմէկու	մէկզմէկէ	մէկզմէկով
—	միմեանց	—	միմեանցով

17. Ընկզմէ՝ յարաբերական դերանուններ:

— Տղան, որուն հետ երթալ կ'ուզէիր, արդէն մեկներ է այս առտու: Ո՛վ ըսաւ քեզի, ուրկէ՞ իմացար: — Ինծի ըսաւ դռնապանը, որ շատ լաւ կը ճանչնայ այդ ընտանիքը: Է՞. հիմա ի՞նչ պիտի ընես: Ինչ որ ըրի՝ համոզել չկրցայ. ճիշդի՞ս է պէտք. կ'ըսէ, ի՞նչ գուտ ինծի պահելն հին տուն մը, որ եկամուտ չի բերեր. մինչդեռ եթէ ծախեմ, անոր բերած գրամովը ի՞նչ հրաշալի խառնութ մը կարելի է գնել կեդրոն տեղ մը, ուր երթեակ ըլլայ և որ շահ բերէ ինծի ամսէ ամիս:

Ձմեռը, երբ ձիւնը կը նստի ծառերուն վրայ, տեսարանը հրաշալի է: Թէեւ գարնան ալ, երբ ձիւնը կը վերնայ այն տեսակի թարմ փառաշուքիւն մը կը փռուի ամեն կողմ. ուր ալ որ նայիս, մտքդ սիրտը կը բացուի:

18. Դի՛ր յարաբերական համապատասխան դերանունը:

Լուրերը, ... հկան, բոլորն ալ սուտ են եղեր: Եղբա՛յր, ... կը հնարէ այդ բոլոր սուտերը, ... կը հնարեն և ... կու գոն կը հասնին մեզի:

Նամակը, ... առաուն զրկեր էիր ինծի, գիտե՞ս ... կու գայ և գիտե՞ս ... է գրողը: Մօրեղբայրս է, ... պատերազմի տարին, ... գործերը հոս աւերւեցան անցաւ Պարզիկիս: Հիմա կը գրէ ինձի՝ Վլաստահիկի մարդու մը շատ պէտք ունիմ, ... օգնէ ինծի: Հիմա ... գործի վրայ ես, կ'ըսէ, ... կը շահիս, ... պիտի ըլլայ քու

ապագան: Հոս, կ'ըսէ, գործ չատ կայ այն մարդուն համար, ... աշխատիլ գիտէ և հարստանալու հնարաւորութիւններ: Է՛, ... խորհուրդ կու տաս ինծի, ... պատասխանեմ իրեն: Մէջս զգացում մը կայ, ... կ'ըսէ՝ «սեղդ նստէ՛»:

19. Յարաբերակամ կրկնակ ձեւերը փոխարինե՛ պարզ ու հիմնական ձեւերով:

Կը կարծեմ այս ամառ ալ պիտի երթանք նոյն գիւղը, ուր որ էինք անցած տարի: Ուրկէ որ քաղաքն ալ հեռու չէ. և երթեակի համար ալ յարմարութիւններ կան, որը որ պղտիկ առաւելութիւն մը չէ, երբ որ մարդս առտու-իրիկուն երթալ-գալ ունի:

Սիրելի՛ս, երբ որ վերադառնաս՝ ինծի իսկոյն կ'իմացնես. կու գամ քեզի օգտակար ըլլալու, ինչով որ կրնամ: Ինչ որ չիտակ է՝ չիտակ է: Ով որ խօսք է տըւեր՝ խօսքը պիտի պահէ: Ինչ որ յանձն է առեր՝ պիտի կատարէ: Ուրկէ որ կրնանք՝ պարտք պիտի առնենք. ինչ ալ որ կրնանք՝ գրաւ կը դնենք: Ով ալ որ ըլլայ՝ դիմացինդ. ինչ ալ որ ըլլայ՝ կերպ մը կը կարգադրենք:

20. Դի՛ք յարմար ամդրադարձ դերանուններ:

Այս մարդիկն ալ շարունակ ... կը գովեն:

Կը վիճէին առանց ... խօսք հասկընալու:

Ես ու այս ընկերս երկար տարիներ հեռու էինք ... և անտեղ-եակ ... վիճակին:

Նայէ՛ սըւոնց, երկուքն ալ ձանձրացեր են ..., երկուքն ալ հպարտ ու ... չհաւնող մարդիկ են:

Օգնեցէ՛ք դուք ..., որ Աստուած ալ ձեզի օգնէ:

... նայելով ... հետեւեցին և յաջողեցան. հիմա ալ կը պարծենան ...:



Բ. ԱՆՋԱՏՈՂ ՈՒ ՀԱՒԱՔՈՂ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Ա. Դիմագուրկ զերանուաններու անջատողական խումբը կը կազմեն հասարակ գոյականներէ փոխ առնըւած այն քանի մը բառերը, որոնք իրերու, անձերու և երեւոյթներու մէջէն կը զատեն հատ մը. անորոյ յօդին պէս կամ քանի մը հատեր, բայց ամեն մէկ հատն ալ զատ-վատ և առանց որոյ ըսելու, թէ ո՛րը:

Անջատողական դերանուններն են՝ մեկը, մեկնումեկը. ամեն մեկը, ուեւեւ մեկը, ո՛չ մեկը, միւսը, մեկալը:

Առաջին երկուքը ածականաբար չեն գործածուիր: Բոլորն ալ Գրք գոյականաբար են առնուած՝ իրենց վրայ կա՛մ որոշ, կա՛մ դիմորոշ յոգ մը կ'առնենան. օրինակ՝ մէկ-ս, մէկ-դ, մէկ-ը, մէկ-եր-նիս, մէկ-եր-նիդ, մէկ-եր-նին. այսպէս ալ բոլոր միւսները:

Այս մէկը բառով կազմուածները բնականաբար միայն եղակի կրնան ըլլալ իրենց իմաստով. թէեւ յոգնակիէ մը զատուած եղակիներ. բայց երբ յոգնակի դիմորոշներով կը գործածուին՝ ձեւով յոգնակի կը դառնան՝ իմաստը սակայն պահելով միշտ եղակի.

մէկ-եր-նիս=մէկ-ս	=	մեզմէ մէկը
մէկ-եր-նիդ=մէկ-դ	=	ձեզմէ մէկը
մէկ-եր-նին=մէկ-ը	=	իրեցեմէ մէկը

Այսպէս ալ մէկը բառով բաղադրուած բոլոր միւսները. ամեն մէկ-եր-նիս=ամեն մէկ-ս=մեզմէ ամեն մէկը:

1. Մէկը բառը վերացական գոյական տնուն մըն է, երբ թիւ է անկախ գործածուած, իբրեւ միութիւններու որոշ գումար. «Մէկը ձեռք հանենք երեքէն՝ կը մնայ երկուս» . «Չորսի մէջ քանի՞ հատ մէկ կայ»: Մէկը նիւթական գոյական է, երբ գրուած թըւանշան է. «Մէկը տասնաւորէն ետքը պիտի գրէիր» . «Ձնջէ՛ այդ քու աւելորդ մէկըդ»: Մէկը, երբ ուրիշ տնունի մը քանակը որոշելու կը ծառայէ՝ թըւական ածական մըն է, որը կրնայ և գոյականաբար առնուիլ քովի գոյականին զեղջուծովը. «Վարդերէդ մէկը ինծի տո՛ւբ» . «Ունեցածը երկու խնձոր էր. մէկը կերաւ, մէկը պահեց» . «Ո՞ւր են պնակները, անդանին վրայ մէկը կայ միայն»: Իսկ երբ մէկը բառը գրուած է «մարդ մը» բառին փոխարէն, կը դառնայ տնջատողական դերանուն. «Տեսայ՝ մէկը կ'իջնէր սանդղակներէն», «մէկը կանչեց ետեւէս» . «Ո՞ւր է գիրքս, մէկը տարած պիտի ըլլայ», «Մէկը կը լողար ժայռերուն գոգը»:

Մէկը երբ գոյական է, այսինքն անկախ թիւ մը կամ թըւանշան մը, տրականը կը կազմուի ի մասնիկով: Իսկ երբ ածական է գոյականաբար առնուած կամ դերանուն՝ տրականը կը կազմուի ու մասնիկով: «Մէկին աւելցու՛ր տասը», «Մէկիս գլուխը աւրուեր է» այսինքն գրածիս, «Մէկիդ տակը դիժ քաշէ», «Քանի՞ կ'ընէ տասնմէկին կէսը, իսկ քսանմէկին քառորդը»: «Ճամբան հանդիպեցայ քարձրահասակ մէկուն», «Լսածս պատմել կ'ուզէի ամեն մէկուդ», «Հետաքրքիր չէր և ոչ մէկուն», «Չըլլայ թէ ըսես որեւէ մէկուն», «Մէկուն, մէկալին տկոնջ մի՛ կախեր»: Այսպէս ալ երբ ածական է գոյականաբար՝ «Թռուիւր էին արդէն վարդերէն մէկուն թերթերը», «Երկու կուժ բերաւ, մէկուն կանթն էր կտրած, մէկուն ալ՝ վիզը»:

Մէկը դերանունին տեղ դրարարէն մնացած է ոմն ձեւը, որ կը

գործածենք միայն ուղղական հոլովով՝ արհամարհանքի ու բանի անդ չդնելու իմաստ տալով րոպին։ Անհրա մտաւ ոմն Մարտիրոսեանն։

2. Ամեն մեկը ըսելու փոխարէն կը գործածուի նաեւ ամեն-մէ գրաբար ձեւը, միայն եղակի ուղղականին մէջ։ Այլ և իւրաքանչիւր գրաբար դերանունը, որ գործիականէ զատ եղակի հրեք հոլովներով ալ կրնայ գրուիլ. իւրաքանչիւրը, իւրաքանչիւրին իւրաքանչիւրէն։

Ամեն մեկ տծականաբար առնուած ձեւը ընդհանրապէս կրճատ կը գործածուի, մեկը բառը կ'իյնայ. «Ամեն մէկ մարդ թերութիւն մը ունի = ամեն մարդ թերութիւն մը ունի», «Ամեն մէկ սխալ պէտք է սրբազրուի = ամեն սխալ պէտք է սրբազրուի»։

3. Ոչ-մեկի փոխարէն կը գործածուի նաեւ ոչ-ոք, որ կանոնաւոր հոլովում ունի, բացի գործիականէ։

4. Միւս և մեկալ (մէկ այլ = մէկ ուրիշ) բառերը սովորական տծական անուններ են, որոնք երբ գոյականաբար կը գրուին մէկը դերանունին փոխարէն, նոյն բառը երկրորդ անգամ չկրկնելու համար, դերանունի իմաստ կ'ըստանան. «Մէկը կը գրէր, մէկը կը կտր-դար» կամ «Մէկը կը գրէր, միւսը կը կտրդար», «Մէկը վեր, մէկը վար» կամ «Մէկը վեր, միւսը վար», «Մէկը վեր, մէկալը վար». «Մէկը կ'երթայ, մէկալը կու գայ»։

Բ. Հաւաքական դերանունները անորոշ ձեով մը խմբում յայտնուր բառեր են. կամ ամբողջական խմբում մը, կամ մասնակի խմբում մը։

1. Ամբողջական խմբումին արտայայտող դերանուններն են ամենը և ամենքը, երկուքն ալ միշտ միայն գոյականաբար գործածուած։

Ամենը չատ աւելի սերտ ամբողջութիւն մը կը հասկըցնէ և իր բաղադրիչ մասերը բնաւ աչքի առաջ չունի։ Ամենքը աւելի խախտ տմբողջացում մըն է և միշտ աչքի առաջ ունի. որ այդ ամբողջութիւնը կազմուած է անհատներու և մասերու գումարէն։ «Ամենքը ելան ոտքի». կարելի չէ ըսել՝ «ամենը ելան ոտքի». բայց կ'ըսենք՝ «ինչ ունիմ. չունիմ պիտի ծախեմ ամենքը», հոս այլ եւս մասերն ու բաղադրիչ մասերը աչքի առաջ չունինք։

Այս երկու դերանուններուն փոխարէն ալ կրնանք գործածել բոլոր տծական անունը գոյականաբար առած. և այս պարագային բոլորը իբրեւ դերանուն կ'ըզգանք։

Ամենքը և բոլորը իմաստով միշտ յոգնակի են. «ամենքը ներկայ էին», «բոլորը համաձայն եղան»։

Ամենը կը հոլովուի՝ ամենուն, ամենէն, ամենով իսկ ամենքը կը հոլովուի՝ ամենքին, ամենքէն։

2. Իսկ մասնակի խմբում մը, այսինքն նման բաներու առանձ-

նացումը անորոշ քանակութեամբ մը կու տայ մեզի Բանի ղերանունը և իրմէ կազմուած Բանի մը, մէկ Բանի և Բանի-Բանի բառերը:

Քանի ղերանունը առանձին միշտ հարցական է. կամ զարմացական, ըլլայ գոյականաբար թէ անականաբար գործածուած. «Քանի խնձոր ունիս», «քանի՞ հատ է», «քանի՞ անգամ ըսեմ», «քանի՞ կանչեմ», «քանի՞ տալիր», «ժամը քանի՞ն», «քանի՞ով ծախեցիր», «քանիէն սկսած»:

Յոգնակին կը գործածուի միայն գոյականաբար և բառին իմաստը կը դառնայ զրական. «Քանիներ ինծի միեւնոյն խորհուրդը տըւին», «քանիներու յայտնած եմ արդէն մեկնիլս», «քանիներէն լսած եմ նոյն կարծիքը», «քանիներուն զուարթ կերաւ»:

Քանի մը, մէկ-Բանի և Բանի-Բանի բաղադրանքները եղակիի մէջ իրրեւ անական կը գործածուին, իսկ յոգնակիի մէջ ընդհակառակը իրրեւ գոյական. «քանիներ միեւնոյն երազներով ապրեցան», «մէկ-քանիներուն յանցանքը ամենուն պէտք չէ վերագրել», «քանի-քանիներ եկան ու գացին և քանի-քանիներուն միեւնոյն խոստումը տըւինք»:

Եւ արտայայտութեան ուժը հետեւեալ կարգով է. «ես մէկ-քանիներէ լսած եմ այդ անմիտ տրտւեցը», «ես քանիներէ՛ լսած եմ այդ անմիտ տրտուեցը», «ես քանի-քանիներէ լսած եմ այդ անմիտ տրտուեցը»:

Մէկ Բանիներ ձեւի փոխարէն ունինք նաեւ զրաբարէն եկած ունեմ ձեւը, որ ունի ղերանունի յոգնակին է. կը գործածենք միայն սեղգական ու արական հոլովներով՝ ունեմ, ունեց:

Պ. Դիմազուրկ ղերանուններու վերջին խումբ մը կը կազմեն այն քանի մը ղերանունները, որոնք յապկապէս քանի մը անորոշութիւնը ընդգծել կ'ուզեն:

Այդ անորոշ ղերանուններն են.

այս-ինչ, այն-ինչ, ոչինչ

ինչ-ինչ, ինչ-որ

սրեւե, սեւե, ուլեւե

Ասոնցմէ առաջին շարքը կը գործածուի և՛ իրրեւ անական և՛ իրրեւ գոյական. կը հոլովուի իհարկէ միայն վերջի ինչ-ը. Եւ յոգնակին կը կազմուի նոր մասնիկով՝ այսինչները, այնինչներուն, ոչինչներով. այսինքն իրարու կապուած երկու ղերանունները՝ ձուլուած են արդէն՝ բառը իրրեւ քաղմովանկ կ'ըզգացուի:

Ընացածները կը գործածուին միայն անականաբար. «ինչ-ինչ թիւրիմացութիւններու պատճառով», «ինչ որ անախորժ լուրեր, հաւատաւանջ», «ինչ որ վարանում մը կը տեսնեմ վրայ», «որեւէ կասկած պէտք չէ ունենայ», «որեւէ մէկը»:

21. Ընդգծէ՛ անցատեղան դերանունները:

Խաղը ցրուեցաւ, մէկս վեր բարձրացաւ, մէկը պառկեցաւ, մէկը
գնաց իր բանին։

Երբ հիւրը ներս մտաւ՝ ամենքը ելան ոտքի։ Ինքն ալ ամենուն նախ ընդհանուր խոնարհութիւն մը ըրաւ, ետքը մօտեցաւ ամեն մէկուն և իւրաքանչիւրին ձեռքը թօթուեց։ Բոլորն ալ շատ լաւ տրամադրուած էին, մէկ քանիներուն վրայ նոյնիսկ մեծ ապաւորութիւն ըրաւ ան իր լուրջ խօսուածքով։

Քանի-քանիները ներկայացած են ինծի նոյն խնդիրքով, բայց
ես ոչ-մէկուն առաջարկը ընդունիլ չկրցայ. մէկ-քանիները շատ
բարձր վարձք կը պահանջէին, միւսներն ալ գործին յարմար չթւեցան
ինծի: Ոմանք ալ իրենք հրաժարեցան. մնաց միայն մէկը՝ ոմն Սար-
գիսեան՝ կարծեմ իրար հետ համաձայնինք պիտի. քանի՜-քանի ան-
գամներ այսպէս դժուարութեան մէջ եմ եղեր. ամենքը կու գան,
կը խնդրեն, ամենքին խօսք պիտի հասկըցընես և ամենքը ընդունիլ
չես կրնար: Պիտի ընտրես մէկն ու մէկը:

Քանի մը օր պիտի բացակայիմ քաղաքէս: Հաջուստներդ քանի՞ տարի:

22. Վերի հասումին վրայ բնդգծե՛ զոյգ զծիկով հաւաքական դե-
րսնուցներ:

23. Դի՛ր լարմար անօտարակն դերակուռն մր :

Ձեզմէ ... թող գայ ներսւ ... յանձն չառաւ ներս երթալ, թէև...
կեցեր կը բողբոջէին: Այդ գործը կրնայ կատարեր...: Յանձնէ պաշ-
տօնահաներէն...: Վերջապէս պատմութիւնը աւարտեց ներկաներէն
...: ... կեցեր էր դռան մէջ, իսկ ... ներս կ'առաջնորդէր եկող-
ները: ... կը խօսէր, ... լուռ էին:

24. Ուր որ կտրելի է հաւաքահոն ու անջատող դերամունդները փոխարինե՛լ իրենց նպէսիմաստ երկրորդ ձեւովը:

Գիւղացիին մէկը գլուխը առեր կ'երթար: Ճամբան կը հանդըպի տխմարին մէկուն: Ընդարձակ սրճարանին մէջ ամեն ոք քաղուեր էր անկիւն մը: Ամեն մարդ առեր էր լրագիր մը և իւրաքանչիւրը թաղուեր էր ընթերցման մէջ: Ոմն Յակոբիկ անուն ելաւ հոն քանի մը խօսք րտաւ: Դերկաներէն ոմանք չպատասխանեցին, ոմանց ու չադրութիւնս անգամ չզրաւեց անոր խօսքը: մէկակաները ժպտեցան: Ամեն լսածի պէտք չէ հաւատաւ ընծայել: Ամեն օր իր հետը կը բերէ իր չորն ու քարին:

25. Գրե՛լ քանի մի նախադասություն, ուր գործածուին անորոշող դերանուններ:



ԵՐՐՈՐԴ ԽԱՏՈՒՄ

ԱՍՈՅԹԱՅԻՆ ԲԱՅԵՐ

Ա. ԲՈՒՆԱԿԱՆ ԱՍՈՅՅՆԵՐ

Ա. Մինչև հիմա մեր տեսած բայերը եղած են բոլորն ալ կազմուած մէկ բառէ մը, որ ունի երկու մաս՝ բուն ու վերջաւորութիւնը:

Պարզ կոչուող բայերը այդ բունէն ու վերջաւորութիւնէն զատ ուրիշ ոչինչ չունին իրենց մէջ, եթէ չհաշուենք չորրորդ լծորդութեան մէջ պատահող յօդակապը: Իսկ մէկ երկու խումբ միջնադիր կոչուող բայեր ունէին մէկ կամ երկու որոշ տառերու յաւելում մը բունին ու վերջաւորութեան միջև:

Բայց պարզ ըլլան թէ միջնադիր, անխտիր բոլորի ալ անորոշ դերբայը՝ այսինքն բային անունը, բաղկացած էր մէկ բառէ մը:

Սակայն մեր լեզուն ունի բազմաթիւ բայեր, և չա՛տ կենդանի և չա՛տ գործածուած, որոնք կազմուած են երկու բառով: Երբեմն նոյնիսկ երեք բառով, բայց չատ աւելի նըւազ թիւով ու գործածութեամբ:

Այդ երկու բառերէն մէկը՝ վերջինը՝ կ'ըլլայ միշտ պարզ բայ մը, իսկ առջեւի բառը կա՛մ պարզ բայի մը բունն է, որ ընդհանրապէս առանձին գործածութիւն չունի, կա՛մ որոշ գոյական տնուն մըն է:

Այդ երկու բառերը միասին առած կը ներկայացնեն գործողութիւնը և իրենք ալ կը ներկայանան, իբրև նոր տեսակի բայ մը: Օրինակ, երբ կ'ըսենք՝ «կախ տալ», «թոյլ տալ», «մօտ գալ», «փուլ գալ», «իմաց տալ», «նշան առնել», «գլուխ դնել», «ձեռք բերել», «կրակ կտրիլ»:

Այսպէս երկու բառով ասոյք մը կազմող բայերը կ'անուանենք ասայրային բայեր:

Ասոյթային բայերուն միութեան մէջ վերջին բայը կը խաղայ պարզ բայերու վերջաւորութեան դերը. ան է, որ կը խոնարհուի ու կ'առաջացնէ ասոյթային բայի բոլոր ժամանակները: Իսկ առջեւի

բառը ըլլայ բայութուն թէ գոյական՝ կը խաղայ պարզ բայերու բունին դերը ու կը մնայ միշտ անփոփոխ:

Առաջին բառի այդ երկու հիմնական տարբերութեան համեմատ՝ ասոյթային բայերը կը բաժնենք երկու տեսակի: Կ'ըսենք բունական ասոյթներ, երբ ասոյթի առաջին բառը բայի մը բունն է. կ'ըսենք անունական ասոյթներ, երբ ասոյթին առաջին բառը սովորական գոյական անուն մըն է:

Իրեւ ասոյթային բայի վերջաւորութիւն կը գործածուի ամենէն առաջ ճալ բայը, որ բունական ասոյթներ կազմող բնորոշ բայն է: Այդ ճալ բնորոշ օժանդակին ետէն հասնիլ կը ջանայ զալ բայը: Տալ-ով կազմուած բունական ասոյթները ներգործական բայերուն կը համապատասխանեն, իսկ գալ-ով կազմուածները կը համապատասխանեն չեղոք բայերուն: Փուլ տալ, փուլ գալ. ցրիւ տալ, ցրիւ գալ:

Իսկ անունական ասոյթային բայերը, բացի տալ-էն ու գալ-էն կը կազմուին նաեւ խուժք մը ուրիշ բայերով ալ, որոնց մէջ ամենէն աւելի յաճախ գործածուողներն են ընել, աւնել, դնել, բեռել, ըլլալ բայերը:

Բ. Բունական ասոյթային բայերէն ամենէն յաճախ գործածուածներն են:

Առաջին խումբը հիմնական ճալ բային հետ.

Թափ տալ = թօթուել

Թող տալ = թողնել

Թոյլ տալ = թոյլագրել

Իմաց տալ = իմացընել

Լող տալ = լողալ

Խաբ տալ = շրջաբեցընել

Խոյս տալ = խուսափիլ

Ծափ տալ = ծափել

Ծոր տալ = ծորիլ

Կուլ տալ = կլլել

Կում տալ = թուքը կուլ տալ

Կախ տալ = կախել

Կոխ տալ = կոխել

հարայ տալ = օգնութեան կանչել

հարու տալ = կոտորով զարնել

հուպ տալ = սեղմել

ձիգ տալ = քաշել

ման տալ = փաթթել

շուռ տալ = դարձընել

վաղ տալ = վազել

ցոյց տալ = ցուցընել

ցրիւ տալ = ցրուել

փախ տալ = փախչիլ

փոյ տալ = փլցընել

քարշ տալ = քաշել

քոր տալ = քերել

Երկրորդ խումբը զալ բային հետ.

ժուռ գալ = պտտիլ

կուչ գալ = կծկտիլ

հուպ գալ = կծկըւիլ

ման գալ = պտտիլ

շուռ գալ = դառնալ

ձիգ գալ = երկարիլ

փուլ գալ = փլչիլ

ցրիւ գալ = ցրուիլ

քարշ գալ = քաշքշուիլ

յոր գալ = քերուիլ

Երբորդ խուժբ մը կը կազմըւի, երբ երկու բայաբուն միասին
կապուած են ճալ կամ գալ բայերուն. բայց մանաւանդ ընել բային.

ցաք ու ցրիւ տալ	.	շուռ ու մուռ տալ,
ցաք ու ցրիւ գալ	.	շուռ ու մուռ գալ,
քար ու քանդ ընել	.	անց ու դարձ ընել
վար ու ցան ընել	.	ցիր ու ցան ընել
տակն ու վրայ ընել	.	տակն ու վրայ ըլլալ:

26. Ընդգծե՛ք բունական ասոյթային բայերը, Պէսք է ընդգծես միւս
ամբողջ ասոյթային բայը լրիւ, իր բոլոր մասերով:

Քիչ մը զգուշ խաղացէք. խեղագարի պէս վազ կու տաք ածու-
ններուն շուրջը. կոխ տըւիք բոլոր ծաղիկները:

Տղան կոտորեր էր ծառի մը ճիւղը ու ետեւէն քարչ կու տար ա-
ւելի պէս: Պարսիկպանը որ տեսաւ, թափ տըւաւ մատը աղուն վրայ
ու բարկացաւ: «Ի՞նչ կայ բարկանալու, ըսաւ երես տուած աղան խըն-
դալով. թո՛ղ տուր գործս վերջացընեմ, կը տանիմ քու ճիւղդ. կախ
կու տամ նորէն իր ծառէն»:

Մեծ եղբայրը կ'ուղէր լող տալ սորվեցընէ իր փոքր եղբորը,
Բռնեց թելէն, մտցուց ծովը, մէկ-երկու քայլ տարաւ աւելի խորը,
յանկարծ թող տըւաւ թելը, ինքն ալ մէկ-կողմ խոյս տըւաւ նւ ը-
սաւ. «Մի՛ վախար, ես հոս եմ, լող տո՛ւր որ ելլես ափը»: Փոք-
րիկը սկսաւ ձեծկըւել ջուրին հետ, տակն ու վրայ ըրաւ ջուրը, ինքն
ալ շուռ ու մուռ եկաւ ու բաւական ալ աղի ջուր կու տըւաւ, բայց
ափը հասաւ:

Հապա՛, լող տալը լող տալով կը սորվըւի:

27. Արեւագրե՛ք. կրցածիդ չափ պարզ բայերը ասոյթային բայերու վե-
րածելով:

Կը քալէր մարդը և ետեւէն կը քաշէր իր խեղճ սալակը:

Թոյլատրեցէ՛ք, պարո՛ն, որ ես ալ միանամ ձեր արշաւախում-
բին:

Փլցուցին մեր քովի պարտէզին պատը և մեր ծրագիրներն ալ
հետը փխին:

Ոստիկանը կեցեր, մատովը հեռուն կը ցուցընէր. հոն ի՞նչ կար
ցուցընելու:

Վերի կողմէն պտտեցէք, ցեխերը մի՛ կոխէք. և կօշիկնիդ ան-
գամ մը աղուոր թօթուեցէք:

Ձուկի կը նմանի, հրաշալի կը լողայ այդ աղջիկը ուռած ուրիշ-
ներուն մէջէն:

Հիւրասիրութիւնը երկար ձգուեցաւ, ետքն ալ հրամցուցին խմե-
ւիք մը, մեղրի պէս կը ձորէր:

Շէնքը ամբողջ փլցուցեր էին ու գոցեր էին փողոցին բերանը, որ անցնող-գարձող չըլլայ. ամեն ինչ քանդեր, աւեր էին բոլորովին, տակը վրան էին ըրեր:

ՉԹ. Գրե՛ լող տալ Բայի բոլոր հիմնական ժամանակները, առանց ենթաձեւերու, կը գրես միայն եզակի երեք դիմբեր մէկ տուր փայ իր ժամանակի անունին հետ:

ՉԹ. Ի՛ի՛ր իւրաքանչիւրին դեմը համապատասխան ասոյթային ձեւը:

Գլուխը թափահարեց = թափ տըւաւ. ցրուել = ցրիւ տալ. կը թողնեմ = թող կու տամ:

Փլցուց = . կծկըւեցաւ = . դնացեր էին պտտելու = . հրացանը պատէն կախեց = . ձգեց ու փախաւ = . պղտիկը թուքը կուլ տըւաւ . Գնա՛ մայրիկիդ իմացո՛ւր = . ծաղիկներուդ վրայ ջուր չսղեց = . ամենքը վախերնուն կծկըւեր էին = . գիւղացիք արդէն ըսկըսե՛ր էին վարել ու ցանել = :



Բ. ԱՆՈՒՆԱԿԱՆ ԱՍՈՅՔՆԵՐ

Ա. Սկզբունքով ամեն տեսակի անուններ կրնան ասոյթային բայի մը կազմին մասը դառնալ, այսինքն կարելի է ամեն գոյական անունէ ասոյթային բայ մը շինել:

Այդպէս ալ սկզբունքով ամեն պարզ բայ կրնայ ասոյթային բայի մը երկրորդ մասը դառնալ, այսինքն սերտորէն կապուիլ անունի մը և դառնալ այդ միութեան փոփոխուող ու խոնարհուող վերջաւորութիւնը:

Բայց նկատելի է, որ անուններուն մէջէն նախ մարդկային մարմնի զանազան անդամներն ու մասերը և երկրորդ ալ դիրք ցոյց տըւող բառերը մեծ դիւրութիւն ու հակում ունին զանազան ասոյթաներ կազմելու:

Այդպէս ալ բայերուն մէջէն տալ բայն է հոս ալ պաշտօնական առաջնութիւնը վայելողը, բայց յաճախ կը գործածուին նաև ընել, առնել, դնել, բերել, կտրիլ, ըլլալ բայերը:

Անունները երկու ձեւով մասնակցութիւն ունին ասոյթներու մէջ:

Ընդհանրապէս անունի մը ուղղական հոլովէ է, որ կը մտնէ ասոյթի կազմին մէջ. և այդ պարագային միշտ առանց յօդի, մերկ վիճակով. վրան յօդ առնելուն պէս ասոյթը կը լուծուի, կը դառնայ սովորական նախադասութիւն: «Ձեռք կու տայ» ասոյթային բայ է և

«Կերիք է» կը նշանակէ, բայց երբ ըսեմ «ձեռքը կու տայ» սովորական նախադասութիւն մըն է և ասոյթը չքացած է:

Բայց ուղղական հոլովէն զատ՝ միւս երեք հոլովներն ալ կրնան ասոյթներ կազմել: Այսինքն անունի մը երեք եզակի հոլովական ձևերը բայի մը հետ միացած կը ներկայտնան, իրրև ասոյթային նոր բայ մը: Այսպէս. օրինակ՝ «սրտին առնել», «աչքէ իյնալ», «ձեռքով ընել» իրենց համար անկախ ասոյթային բայեր են:

Այս կերպով հոլովակերտ ունեցող անուններուն հոլովը քարացած վիճակի մէջ է. ինչ ձեռով որ մտած է անգամ մը այդ ասոյթային անորոշ դերբայի կազմին մէջ՝ ալ անկէ ետքը որեւէ փոփոխութեան ենթարկուիլ չի կրնար խոնարհման միջոցին:

Թէ ուղղական և թէ միւս հոլովներով եղող անունները կրնան և յօդաւոր ըլլալ և անյօդ, անգամ մը առած ձևը անփոփոխ կը պահեն խոնարհման ժամանակ: «Աչքն առնել» «աչք առնել», «երեսի զարնել» «երեսին զարնել»:

Խոնարհման ենթարկուող միայն ասոյթի վերջի մասն է՝ բայը: Եւ այդ բայերը կը խոնարհուին իրենց բոլոր ժամանակներով եւ ենթաձեւերով լրիւ: Այսինքն անգամ մը կաղմըւած ասոյթային անորոշ դերբայը կանոնաւոր կերպով կ'ունենայ իր ասոյթային լրիւ խոնարհումը:

Ու, Անուն մը և բայ մը միանալով ասոյթ կազմել կարողանալու համար անհրաժեշտ է, որ այդ երկու բառերուն միացումովը նոր իմաստ մը առաջանայ, որ այս կամ այն չափով տարբեր ըլլայ այդ երկու բառերու տըւած սովորական իմաստէն: Օրինակ «հաց տալ» ասոյթ չէ, քանի որ միայն հացը մէկուն տալ կը նշանակէ. բայց երբ առնենք ու գործածենք, իբրև ճաշկերոյթ տալ, իբրև սեղան տալ բազմութեան մը համար՝ ստեղծած կ'ըլլանք նոր ասոյթ մը, ինչպէս որ «հացի նստիլ» կը նշանակէ սեղան նստիլ:

«Աչք տալ», «սիրտ տալ», «գլուխ տալ», նոյնիսկ «ապտակ տալ» ասոյթներ են, քանի որ տարբեր իմաստ մը ունին, քան աչքը, սիրտը, գլուխը և ապտակը հանել ու մէկ ուրիշին տալ:

Ասոյթի այդ երկու մասերը այլեւս անբաժան ամբողջութիւն մըն են իրենց ուրոյն իմաստով: Եւ այդ պատճառով ալ միշտ միասին պէտք է յիշուին կամ ընդգծուին, երբ նախադասութիւններու մէջ գործողութիւնը ցոյց տըւող բառը կը փնտռուի: «Սիրտ տալ», «աչքն առնել», «գլուխ հանել», «խիղճ ընել» ասոյթներուն մէջ. օրինակ, գործողութիւնը ցոյց տըւողը *սալ*, *առնել*, *հանել*, *ընել* բայերը չեն. որ բոլորովին ա՛յլ իմաստ ունին կամ բոլորովին տկար ու աղօտ ընդհանուր իմաստ մը միայն ունին ասոյթին մէջ, երբ առանձին առնուին: Խօսքին մէջ իսկական գործողութիւնը ցոյց տըւողն է ամբողջ ասոյթը միասին առած:

Գ. Անունական ասոյթները ըստ իրենց կազմին կը բաժնենք երեք խումբի.

ա. Անուն մը տալ բային հետ.

1. Մարմնի անդամներուն հետ. կուրծք տալ, սիրտ տալ, աչք տալ, ձեռք տալ, ճակատ տալ, գլուխ տալ:

2. Դիրքը ցոյց տրուող անուններուն հետ. վեր տալ, վար տալ, դուրս տալ, ներս տալ, ետ տալ, մէջ տալ, դէմ տալ, վրայ տալ:

3. Ուրիշ անուններու հետ. պտոյտ տալ, գրոհ տալ, փոթ տալ, սէր տալ, չաղ տալ, մուր տալ, կոր տալ, կից տալ, աքացի տալ, վերջ տալ, ծայր տալ, մուխ տալ, ծափ տալ, ձայն տալ, վայ տալ:

բ. Անունը ուրիշ բայերու հետ.

1. Օժանդակ բայը գալ. պար գալ, պտոյտ գալ, փոթ գալ:

2. Օժանդակ բայը ընել. խելք ընել, աչք ընել, քիթ ընել, բերան ընել, սիրտ ընել, կամք ընել, միտք ընել, խիղճ ընել, գոց ընել, ետ ընել:

3. Օժանդակ բայը առնել. նշան առնել, աչք առնել, յանձն առնել, վեր առնել, ձեռք առնել, յարուծիւն առնել:

4. Օժանդակ բայը դնել. նշան դնել, գլուխ դնել, (ի) ցոյց դնել, աչք դնել, յոյս դնել, ականջ դնել, ետ դնել, վար դնել, առաջ դնել:

5. Օժանդակ բայը բերել. գլուխ բերել, ձեռք բերել, միտք բերել:

6. Օժանդակ բայը կտրիլ. փայտ կտրիլ, քար կտրիլ, ապուշ կտրիլ, կրակ կտրիլ:

7. Ուրիշ բայերու հետ. սէր ըլլալ, գլուխ հանել, աչք տնկել, կուլ երթալ, զոհ երթալ, խօսք խառնել, սիրտ խառնել:

գ. Հոլովուած անուններով ասոյթներ.

1. Տրական հոլովի հետ. կատակի տալ կամ առնել, ծիծաղի տալ կամ առնել, խաղի տալ կամ առնել, խօսքի բռնել կամ բռնուիլ, սուղի նստիլ, յանկարծակիի գալ, սրտին առնել, քթին տալ, գլխուն տալ, երեսին զարնել, մարդու տալ, մարդու երթալ:

2. Բացառական հոլովի հետ. աչքէ իյնալ, սրտէ իյնալ, մտքէ իյնալ, երեսէ իյնալ, մտքէ հանել, սրտէ հանել, ձեռքէ հանել:

3. Գործիական հոլովի հետ. աչքով ընել, ձեռքով ընել, մատով ընել, խաղով ըլլալ, զործով ըլլալ, խօսքով ըլլալ:

30. Լճագծե ասոյթային բայեր.

Պատիկը գոգնոցը պատուեր էր. կը քաշուէր մօրը ցոյց տալու. վերջապէս սիրտ ըրաւ ու յայտնեց: Աղուոր յանդիմանութիւն մը կերաւ, արցունքները լուռ կուլ տըւաւ և ծպտուն չհանեց:

Քեզի ինչ որ կ'ըսեմ՝ ականջ դիր խօսքիս. դուն եկուր ձեռք

առ այս գործը: Եթէ յանձն առնես՝ զիտեմ որ զլուս կը բերես: Եւ վերջապէս քիչ մըն ալ յոյս դիր բաղդիդ վրայ:

Մարդը վստահ ետ ըրաւ վերաբերելին կոճակները, վերցուց հրացանը, նշան առնելը, արձակելը և նշանը կտոր կտոր ընելը մէկ եղաւ:

31. Վերի ասոյրային արսայայտութիւնները վերածե՛ք սովորական արսայայտութեան. առանց ասոյթի:

32. Դի՛ր ասոյրային բային ետելը. քե ի՞նչ ժամանակով ե ըսուած. կը դնես փակագծի մեջ ժամանակի անուան սկզբնասառը:

Դոյլ մը ջուր բե՛ր ու ըակը վար տո՛ւր: — Գրո՛հ տըւին քաղաքին վրայ: — Թող տալու էր, որ մեկնիս. ինչո՞ւ արգիլեց: — Կը տեսնեմ, կոնակդ քոր կու գայ. ծեծ պիտի ուտես: — Ծովախորշին մէջ երկու տղայ լող կու տային: — Բիչ էր մնացեր, որ բռնըւի, քայց յանկաթ խառ տըւաւ ու փախաւ: — Է՛, վերջ տուր այդ յիմար կատակին և իմաց տըւի՛ր ընկերոջդ. որ եկած եմ: — Ոտանաւորդ գոց ըրե՛ր ես: — Ինչո՞ւ է այս փոքրիկը քիթ ըրեր: — Ըսի՛ կամք որ ընես՝ կը յաջողիս. իսկ սն գիրքը ձեռքերուն մէջ շուռ ու մուռ տըւաւ ու անդին դրաւ:

33. Դե՛հ՝ ձեռք բերել ասոյրային բայի ինը գլխաւոր ժամանակները, առանց ենթաձեւերու. կը գրես միայն եզակի դեմքերը մէկ տողի վրայ ժամանակի անուան ետեւին:

34. Դե՛հ՝ հետեւեալ ասոյրներուն դէմք ամեն մեկուն նշանակութիւնը, բառաբանի պէս:

Աչքով տալ. աչք ընել. աչքը առնել. աչք տնկել. աչքէն իյնալ
աչքը մտնել. աչքի գալ:

Ականջ դնել, ականջ կախել. ականջի ետեւ նետել:

Գիթ ընել. քիթը տնկել. Գլուխ տալ. գլուխ բերել. գլուխ հանել,
Բերան ընել. բերան առնել:

Սիրտ ընել. սիրտը խառնել. սիրտ տալ:

Կուրծք տալ. ճակատ տալ. թիւ տալ. թիւ առնել:

Ձեռք տալ. ձեռք առնել. ձեռք բերել. ձեռքէ հանել:

Ոտքի հանել. ոտքի տակ տալ. ոտքն իյնալ:

35 Ըրե՛հ՝ հոյնը հետեւեալ ասոյրներուն հետ:

Դէմ գալ. դէմ տալ. դէմն առնել. դէմ իյնալ:

Մէջ իյնալ. մէջ նետուիլ. մէջ առնել. մէջ բերել:

Առաջ գալ. առաջ բերել. առաջ քաշել. առաջն առնել. ետեւէն իյնալ:

Վար տալ. վար դնել. վեր առնել. վեր հանել:

Վրայ տալ. վրայ գալ. վրայ բերել. վրան առնել:

Խելքը հանիլ, խելքը տանիլ, խելքի գալ, խելք ընել, խելքէ հանել:

Հոգին հանել, հոգին բերանը բերել, հոգի տալ:

Վերջ տալ, ձայն տալ, ծայր տալ, ուժ տալ:

Քար կտրիլ, յանձն առնել, խօսք խառնել:

Չորրորդ հասում

ԲԱՂԱԴԻՐ ԲԱՅԵՐ

Ա. ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅՈՎ

Ա. Հայերէն լեզուի մէջ բայերը իրենց կազմութեամբ չորս տեսակ են: Պարզ բայեր, միջնադիր բայեր, ասոյթային բայեր և բաղադիր բայեր:

Առաջին երեք տեսակները արդէն ծանօթ են մեզի՝ հիմա կուգանք չորրորդ ու վերջին տեսակի կազմ ունեցող բայերուն՝ բաղադիր բայերուն:

Բաղադիր բայերն ալ մէկ-երկու բառերու միացումով են կազմուած, ասոյթային բայերուն նման:

Հոս ալ միութեան վերջին մասը օժանդակ բայ մըն է. որ կը խաղայ բայի վերջաւորութեան դերը և իր լրիւ խոնարհումով կուտայ բաղադիր բային բոլոր ժամանակները:

Բաղադիր բայի մը կազմին ասոյթայինէն ունեցած տարբերութիւնը այդ սերտ միութեան առաջին մասն է: Ասոյթային բայի առաջին մասը կա՛մ բայի մը բունն էր կա՛մ գոյական անուն մը:

Կրնանք ըսել, որ ասոյթային բայերուն մէջ օժանդակ բայը դրուած է միշտ անունի մը կամ անունանաձե բառի մը վրայ, քանի որ նոյնիսկ բունական բայերուն առաջին մասերը բոլորովին մերկացած են իրենց բայական ձեւէն և աւելի անունի մը ձեւն են առած՝ վազ, թոյլ, ժուռ, ծար, փուլ, կուլ, չուռ:

Դերբայները անշուշտ իրենք ալ գործողութեան մը կամ գործողութիւնը կատարողի մը անունն են, բայց կը պահեն իրենց բայական ձեւը, իրենց յատուկ բայական վերջաւորութիւնը:

Բաղադիր բայերը անմիջապէս բայերէ կազմուած նոր բայեր են:

Բաղադիր բայերուն մէջ օժանդակի դերը կը խաղան եւլ և ըլլալ բայերը: «Տալ»-ը կը գործածուի միայն մէկ պարագայի մը: «Ըլլալ» բայն է, որ կը տիրապետէ բաղադիր բայերուն մէջ: Երբեմն միայն, որոշ պայմաններու մէջ կրնայ փոխարինուիլ «դառնալ» և «ունենալ» բայերով:

Բ. Ամեն տեսակի բայերուն անորոշ դերբայը եւլ բային հետ կը կազմէ բաղադիր բայ մը, որ մեզի արդէն ծանօթ է և որ գործողու-

Թիւնը ուրիշի մը ձեռքով կատարուելը ցոյց կու տայ. վազել տալ, վազցընել տալ, մոռնալ տալ, մոռցընել տալ, մոռցընել տալ, խօսիլ տալ, խօսեցընել տալ, քաշկռտել տալ, ներկայացընել տալ, ներկայացուիլ տալ, աշխատիլ տալ, բերել տալ, բերուիլ տալ:

Եւ կը խոնարհուին հետեւեալ կերպով.

Ապառնի	== Գրել տամ, գրել կու տամ, գրել պիտի տամ, թող գրել տամ, գրել տալու եմ:
Վաղապառնի	== Գրել տայի, գրել կու տայի, գրել պիտի տայի, թող գրել տայի, գրել տալու էի:
Ներկայ	== Գրել կու տամ, գրել տալու վրայ եմ:
Անկասար	== Գրել կու տայի, գրել տալու վրայ էի:
Կասարեալ	== Գրել տըւի:
Յարակասար	== Գրել տըւեր եմ, գրել տըւած եմ, գրել տըւած կամ, գրել տըւած ունիմ:
Վաղակասար	== Գրել տըւեր էի, գրել տըւած էի, գրել տըւած կայի, գրել տըւած ունէի:
Հրամայական	== Գրե՛լ տուր, գրե՛լ տըւէք, գրե՛լ կու տաս, գրե՛լ պիտի տաս:
Աւարս դերբայ	== Գրել տըւած:
Անաւարս դերբայ	== Գրել տըւող:
Անորոս դերբայ	== Գրել տալ:

Անցողական սեռի այս բաղադիր անորոշ դերբայն ալ թալ օժանդակի կրկնութեամբ կ'առաջացընէ երկրորդ աստիճանի անցողականութիւն մը, այսինքն երբ երկրորդի մը միջոցով երրորդի մը կատարել կու տանք գործողութիւնը:

Նախնական անորոշ դերբայը իր ետեւէն կ'ունենայ երկու հատ թալ թալ. Առաջին տալը կը դառնայ այս կրկնաբաղադիր բային բունական մէկ մասը, երկրորդ տալին թողնելով վերջաւորութեան դերը: Ան է, որ կը խոնարհուի ու կ'առաջացընէ այս կրկնաբաղադիր անցողական բային բոլոր ժամանակները կանոնաւոր կերպով:

Ապառնի	== Շինել տալ տամ, շինել տալ պիտի տամ.
Վաղապառնի	== Շինել տալ տայի, շինել տալ պիտի տայի:
Ներկայ ու անկասար	== Շինել տալ կու տամ, կու տայի:
Կասարեալ	== Շինել տալ տըւի:
Յարակասար ու վաղակասար	== Շինել տալ տըւեր եմ, տըւեր էի:
Հրամայական	== Շինե՛լ տալ տուր, շինե՛լ տալ տըւէք:
Դերբայներ	== Շինել տալ տըւած, շինել տալ տըւող, շինել տալ տալ:

Գ. 1. Անորոշ դերբային տրական հոլովը ըլլալ օժանդակին հետ կ'առաջացընէ բաղադիր բայ մը, որ գործողութիւն մը սկսելու դիտաւորութիւնը կը յայտնէ իր բոլոր ժամանակներուն մէջ և ատոր համար ալ շատ կը նմանի մտադիր եղանակի զանազան ենթաձեւերուն: Այս տեսակի բաղադիր բայեր են, օրինակ. վազելու ըլլալ, խաղալու ըլլալ, պառկելու ըլլալ, պառկեցընելու ըլլալ, խաղցընելու ըլլալ, յանձնելու ըլլալ:

Ահա՛ իր խոնարհումը:

Ապառնի	== Գրելու ըլլամ, գրելու կ'ըլլամ, գրելու պիտի ըլլամ, թող գրելու ըլլամ, գրելու ըլլալու եմ.
Վաղապառնի	== Գրելու ըլլայի, գրելու կ'ըլլայի, գրելու պիտի ըլլայի, թող գրելու ըլլայի, գրելու ըլլալու էի.
Ներկայ	== Գրելու կ'ըլլամ.
Անկտեսար	== Գրելու կ'ըլլայի.
Կասարեալ	== Գրելու եղայ.
Յարակաօար	== Գրելու եղեր եմ, գրելու եղած եմ, գրելու եղած կամ, գրելու եղած ունիմ.
Վաղակաօար	== Գրելու եղեր էի, գրելու եղած էի, գրելու եղած կայի, գրելու եղած ունէի:
Հրամայական	== Գրելո՛ւ հղիր, գրելո՛ւ եղէք, գրելո՛ւ կ'ըլլաս, գրելո՛ւ պիտի ըլլաս:
Աւարս դերբայ	== Գրելու եղած.
Անաւարս դերբայ	== Գրելու եղող.
Անորոշ դերբայ	== Գրելու ըլլալ:

2. Անորոշ դերբայի բացառական հոլովը ըլլալ օժանդակին հետ կ'առաջացընէ բաղադիր բայ մը, որ բանէ մը գրկուելու իմաստը կ'առնէ. այսպէս՝ գրելէ ըլլալ, ուտելէ ըլլալ, տեսնելէ ըլլալ, երթալէ ըլլալ:

Ահա՛ իր խոնարհումը.

Ապառնի	== Գրելէ ըլլամ, գրելէ կ'ըլլամ, գրելէ պիտի ըլլամ, թող գրելէ ըլլամ, գրելէ ըլլալու եմ.
Վաղապառնի	== Գրելէ ըլլայի, գրելէ կ'ըլլայի, գրելէ պիտի ըլլայի, թող գրելէ ըլլայի, գրելէ ըլլալու էի.
Ներկայ	== Գրելէ կ'ըլլամ, գրելէ ըլլալու վրայ եմ.
Անկտեսար	== Գրելէ կ'ըլլայի, գրելէ ըլլալու վրայ էի.
Կտարեալ	== Գրելէ եղայ.
Յարակաօար	== Գրելէ եղեր եմ, գրելէ եղած եմ.
Վաղակաօար	== Գրելէ եղեր էի, գրելէ եղած էի.

Հրամայական = Գրեի՛ն՝ եղիր, գրեի՛ն՝ եղէք. գրեի՛ն՝ կ'ըլլաս,
 գրեի՛ն՝ պիտի ըլլաս.
 Աւարտ դերբայ = Գրեի՛ն եղած.
 Անաւարտ դերբայ = Գրեի՛ն եղող.
 Անորոտ դերբայ = Գրեի՛ն ըլլալ:

3. Անորոշ դերբայի դործիական հոլովը ըլլալ օժանդակին հետ կ'առաջացընէ բաղադիր բայ մը, որ բանով մը զբաղուած ըլլալու իմաստը կ'առնէ. խօսելով ըլլալ, խաղալով ըլլալ, տալով ըլլալ, կարդալով ըլլալ, դիտելով ըլլալ:

Կը խոնարհուի նոյն կանոնաւորութեամբ՝ վերի բացառականին տեղը գործիականը դնելով: Հաշուելով ըլլալ, հաշուելով ըլլալի, հաշուելով եղայ, հաշուելով եղի՛ր, հաշուելով եղած, հաշուելով եղող:

4. Այս նոյն իմաստը կ'ըստանայ անորոշ դերբայի տրական հոլովը հետ կցորդին հետ՝ ըլլալ օժանդակին երբ կը միանայ. ասով ալ կ'առաջանայ բաղադիր բայերու նոր շարք մը խաղալու հետ ըլլալ, գրելու հետ ըլլալ, բացատրելու հետ ըլլալ, որոնք նմանապէս բոլոր ժամանակներով ալ կանոնաւոր կերպով կրնան գործածուիլ:

5. Անորոշ դերբային տրական հոլովը վրայ կցորդին հետ և ըլլալ օժանդակով կ'առաջացընէ բաղադիր բայ մը, որ իր բոլոր ժամանակներուն մէջն ալ գործողութիւնը շարունակելու վրայ ըլլալը ցոյց կուտայ. և այդ պատճառով ալ իր իմաստովը կը նմանի անաւարտ եղանակի զանազան ձևերուն: Այս տեսակի բաղադիրներ, են, օրինակ, գրելու վրայ ըլլալ, մեկնելու վրայ ըլլալ, ծախելու վրայ ըլլալ, առողջանալու վրայ ըլլալ:

Կը խոնարհուի նոյն կանոնաւորութեամբ. առողջանալու վրայ ըլլալ, առողջանալու վրայ ըլլալի, առողջանալու վրայ եղայ, առողջանալու վրայ եղի՛ր, առողջանալու վրայ եղած, եղող:

36. Անցողակերպ բայերը դարձնուի բաղադիր անցողականի:

Նամակը կարդացուցի, մէջը կարիւրը բռն մը չկար:

Սպասուհին կը գանգատէր, որ չտաւ կ'աշխատողներին:

Հեքեաթ մը պատմեցի ու սկսային ցուր գոնէ քիչ մը մուցուցի:

Վազցո՛ւր ձիերդ, վազցուցէ՛ք, որ մուծը չկոխած հասնինք:

Ճանապարհին երկար խօսեցուցի. ո՛չ. ինքը յանդարտ չունի:

Գալ չէր ուղեր. համոզեցի ու կերպով մը ներս մտցուցի:

Կը լսէի. աղուոր-աղուոր սուտերը կ'ընկնէի:

Աշակերտները պիտի վարժեցընես, որ սորվին մաքով հաշուել:

37. Վերի նախադասութիւնները այնպէս բերել մը փոխի, որ ան-
ցողակերպ բայերը կառողանաւ կրկնաբաղադիր կերպով գործածել:

38. Գրե՛ հետեւեալ բաղադիր բայերուն ապառնի ժամանակը. եւ
ուր կը յարմարի դի՛ր փոքր նաեւ նոյնը միջնադիր անցողակերպով:

Կարդալ տալ. գրել տալ. խօսիլ տալ. պատմել տալ. շինել տալ.
հաշիւ տալ. քաղել տալ. բարկանալ տալ. հանել տալ. բերել տալ:

Տակը կը գրես նոյն ձեւով վաղ-ապառնի ժամանակներ:

Նսֆն ալ կաթարեցաները եւ բուն հրաւիրականները:

Այլ եւ աւարտ եւ անաւարտ դերբայներ:

39. Ընդգծե՛ բաղադիր բայերը, ասոյթայինները՝ ո՛չ:

Եթէ գրելու ըլլամ՝ քեզի իմաց կու տամ: Նկատեցի, ամեն ան-
գամ, որ ներս կը մտնէի, գրելու կ'ըլլար: Վճարելու եղողը ասանկ
մարդուս հոգին չի հաներ: Դիտեմ որ շատ նեղութիւն քաշեցի սոր-
վելու եղած ատենս: Մարդը հաշուելով եղաւ ու թէք զարկաւ տպու-
րի պնակին. և քիչ մնաց, որ ուսելէ պիտի ըլլար: Ահա՛ նորէն կար-
դաւով կ'ըլլաս, չեմ զարմանար որ ուշանաս:

40. Գրե՛ տողին սկիզբը վերի ընդգծած բաղադիր ձեւերը եւ դէմը
բացատրե՛, ո՛ր բաղադիր բայի ո՛ր ժամանակն է:

41. Գործածե՛ նախադասութիւններու մէջ:

Բերել տալ. ծախել տալ. վճարել տալ:

Բերելու ըլլալ. ծախելու ըլլալ. վճարելու ըլլալ:

Բերելէ ըլլալ. ծախելէ ըլլալ. վճարելէ ըլլալ:

Բերելով ըլլալ. ծախելով ըլլալ. վճարելով ըլլալ:



Բ. ԱՒԱՐՏ ՈՒ ԱՆԱՒԱՐՏ ԴԵՐԲԱՅՈՎ ԲԱՂԱԴԻՐՆԵՐ

Ա. Ամ մասնիկով աւարտ դերբայները ըլլալ կամ ունենալ օժան-
դակներուն հետ կ'առաջացնեն բաղադիր բայերու նոր երկու շարք,
որոնք արդէն կատարուած գործողութեան մը կատարմանը մասին
կը խօսին բոլոր ժամանակներու մէջ և ինակոնաբար կը մօտիկնան
աւարտ ժամանակներու զանազան ձեւերուն:

Ահա՛ իր կանոնաւոր խոնարհման ընթացքը.

Ապառնի

Դրած ըլլամ, դրած ունենամ

դրած ըլլալու եմ, դրած ունենալու եմ

Վաղապառնի

Դրած ըլլայի, դրած ունենայի

դրած ըլլալու էի, դրած ունենալու էի

Ներկայ	Գրած կ'ըլլամ, գրած կ'ուռնենամ
Անկասար	գրած ըլլալու վրայ եմ, գրած ուռնենալու վրայ եմ
Կասաբեալ	Գրած կ'ըլլայի, գրած կ'ուռնենայի
Յարակասար	Գրած եղայ, գրած ուռնեցայ
Վաղակասար	Գրած եղեր եմ, գրած ուռնեցեր եմ
Հրամայական	Գրած եղեր էի, գրած ուռնեցեր էի
	Գրած եղի՛ր, գրած ուռնեցի՛ր
	գրա՛ծ կ'ըլլաս, գրա՛ծ կ'ուռնենաս
Անաւարտ դերբայ	Գրած եղող, գրած ուռնեցող
Աւարտ դերբայ	Գրած եղած, գրած ուռնեցած
Անորոշ դերբայ	Գրած ըլլալ, գրած ուռնենալ

Բ. 1. Անաւարտ դերբայը ըլլալ կամ դառնալ օժանդակներուն հետ կ'առաջացնէ բաղադիր բայերու երկու շարք, որոնք գործողութեան մը կատարողը դառնալու իմաստը ունին իրենց մէջը. գրող ըլլալ, գըրող դառնալ, տանող ըլլալ, տանող դառնալ, ստեղծող ըլլալ, ստեղծող դառնալ:

Կը խոնարհուին լրիւ ու կանոնաւոր.

Ապառնի	բերող ըլլամ, բերող դառնամ
	բերող պիտի ըլլամ, բերող պիտի դառնամ
	բերող ըլլալու եմ, բերող դառնալու եմ
Վաղապառնի	բերող ըլլայի, բերող դառնայի
Ներկայ	բերող կ'ըլլամ, բերող կը դառնամ
	բերող ըլլալու վրայ եմ, բերող դառնալու վրայ եմ.
Անկասար	բերող կ'ըլլայի, բերող կը դառնայի
	բերող ըլլալու վրայ էի, բերող դառնալու վրայ էի.
Կասաբեալ	բերող եղայ, բերող դարձայ
Յարակասար	բերող եղեր եմ, բերող դարձեր եմ
Վաղակասար	բերող եղեր էի, բերող դարձեր էի
Հրամայական	բերո՛ղ եղի՛ր, բերո՛ղ դարձի՛ր
	բերո՛ղ կ'ըլլաս, բերո՛ղ կը դառնաս
Անաւարտ դերբայ	բերող եղող, բերող դարձող
Աւարտ դերբայ	բերող եղած, բերող դարձած
Անորոշ դերբայ	բերող ըլլալ, բերող դառնալ

2. Անաւարտ դերբայը ս գիմորոշով և ըլլալ օժանդակին հետ կը կազմէ նոր տեսակ մը բաղադիր բայերու, որոնք բան մը ընել ձեւացընելու իմաստը ունին. այսպէս՝ կարդացողս ըլլալ, բացատրողս ըլլալ, դիմաւորողս ըլլալ, քննարկողս ըլլալ, շինողս ըլլալ:

Կը խոնարհուի կանոնաւոր բոլոր ժամանակներով. քնացողս կ'ըլլամ, քնացողս կ'ըլլայի, քնացողս եղայ, քնացողս եղեր եմ, քնացողս կ'ըլլաս, քնացողս եղող, քնացողս եղած:

3. Անաւարտ դերութիւն ուղղականը և տրականը իրարու կից և ըլլալ օժանդակին հետ կ'առաջացնեն բաղադրիկ ըստերու շարք մը, որոնք խուռն բազմութեամբ, իրար ձեռքէ խլելով կամ մեծ իրարանցումով կատարուող գործողութիւն ցոյց կու տայ. վազող վազողի ըլլալ, հրամցնող հրամցնողի ըլլալ, տանող տանողի ըլլալ, ծախող ծախողի ըլլալ, կանչող կանչողի ըլլալ:

Կանոնաւոր խոնարհում վազող վազողի կ'ըլլանք, վազող վազողի կ'ըլլայինք, վազող վազողի եղեր ենք, վազող վազողի եղած էինք, վազող վազողի եղող, վազող վազողի եղած:

42. Ընդգծե՛ք բաղադրի՛ր բայերը:

Դուն եթէ եկող ըլլայիր, արդէն շատոնց եկած կ'ըլլայիր: Ծառս ինչ, չհասկըցողս պիտի ըլլամ և պիտի լուռ մնամ: Մէկդ բացատրող թող ըլլայ, միւսներդ ալ համոզուողս եղէք: Յանկարծ ամբողջ բազմութիւնը վազող վազողի եղաւ: Դիտեմ որ առնող առնողի պիտի ըլլան, եթէ այդ գինով ծախելու ըլլաք:

43. Արագրե՛ք ընդգծածներդ եւ դիմը նշանակե՛ք ո՛ր բաղադրի բայի ո՛ր ժամանակը ըլլալը:

44. Գործածե՛ք նախադասութիւններու մէջ հետեւեալ բաղադրի բայերը:

Տանող ըլլալ. նկարող ըլլալ. կանչող ըլլալ:

Խոստացողս ըլլալ. փախչողս ըլլալ. առնողս ըլլալ:

Տանող տանողի ըլլալ. փախչող փախողի ըլլալ. առնող առնողի ըլլալ:

45. Ընդգծե՛ք բաղադրի բայերը:

Դրած ըլլալդ չգիտէի: Հասած ըլլալուդ մասին կը խնդրէի. որ ինծի իմաց տայիր: Իր յաջողած ըլլալէն ամենքս ալ զո՞ն մնացինք: Աս ալ որ ուտեմ երեք ամառն կերած պիտի ըլլամ: Եթէ խորհուրդիս հետեւէիր՝ հիմա արդէն հետը տեսնուած կ'ըլլայիր և զործերդ ալ կարգադրած կ'ըլլայիր: Մի՛ ըսեր, թէ գալդ իդուր անցաւ. վերջապէս այս կողմերն ալ տեսած եղար: Դուն ընկերքդ ըրած եղիր, միայն ցածր ես կը կարգադրեմ: Շատ կը ցաւիմ, բայց անգամ մը ըսած եղայ: Դասը սերտած եղալը թող մատը քարծրացնէ: Արդէն ճաշած եղողները կրնան պարտէզը մնալ: Ասիկա ալ, այո՛, մտքիդ մէջը զըրած ունեցիր: Դուցէ՛ այսքան չղարմանայի, եթէ առաջինէ՛ այդ մասին քիչ մը մտածած ունենայի:

46. Առանձին գրե՛ դաս դաս օղորու վրայ վերը ընդգծածներդ եւ քովը նշանակե՛ ո՞ր բաղադիր բայի ո՞ր ժամանակն է՝

47. Խոնարհե՛ հետեւեալ բաղադիր բայերը առանց ենթաձեւերու ու միայն մէյ-մէկ դեմքով՝

Կարգալ տալ, վճարելու ըլլալ, տեսած ըլլալ, հաւատացողս ըլլալ՝



Գ. ԿՐԿՆԱԲԱՂԱԴԻՐ ԲԱՅԵՐ ԸԼԼԱԼ ՕԺԱՆԴԱԿՈՎ

Ամեն տեսակի բաղադիր բայերուն երեք զերբայները ըլլալ օժանդակին հետ կը կազմեն կրկնաբաղադիր բայեր. այսինքն երեք բայեր կապուած կ'ըլլան իրարու իրրեւ սամբոջնութիւն մը, աստոնցմէ երկուքը զերբայ են, որոնք բունին դերը կը խաղան ու կը մնան միշտ անփոփոխ. ըլլալ օժանդակն է, որ կը խոնարհուի ու կը կազմէ բոլոր ժամանակները։

Նախորդ էջերուն մէջ ըստածները հաւաքելով՝ կը տեսնենք, որ միեւնոյն պարզ բայէն կ'առաջանան 10-12 բաղադիր բայեր. ատոնցմէ սմեն մէկը իր երեք զերբայներն ունի. օրինակ՝ գրել՝ բայէն կը թագին հետեւեալ բաղադիր զերբայները.

անորոց դերբայ	անաւարտ դերբայ	տւարտ դերբայ
1. Գրել տալ	Գրել տըռող	Գրել տըւած
2. Գրելու ըլլալ	Գրելու եղող	Գրելու եղած
3. Գրելէ ըլլալ	Գրելէ եղող	Գրելէ եղած
4. Գրելով ըլլալ	Գրելով եղող	Գրելով եղած
5. Գրելու հետ ըլլալ	Գրելու հետ եղող	Գրելու հետ եղած
6. Գրելու վրայ ըլլալ	Գրելու վրայ եղող	Գրելու վրայ եղած
7. Գրող ըլլալ	Գրող եղող	Գրող եղած
8. Գրողս ըլլալ	Գրող եղող	Գրողս եղած
9. Գրող գրողի ըլլալ	Գրող գրողի եղող	Գրող գրողի եղած
10. Գրած ըլլալ	Գրած եղող	Գրած եղած
11. Գրած ունենալ	Գրած ունեցող	Գրած ունեցած

Արդ՝ սմեն բաղադիր անորոշ զերբայէ կրնայ կազմուիլ 5 կըրկնաբաղադիր բայ, ուրեմն մօտաւորապէս 50-60 բայ, Օրինակ՝ գրել տալու ըլլալ, գրել տալէ ըլլալ, գրել տալով ըլլալ, գրել տալու հետ ըլլալ, գրել տալու վրայ ըլլալ, գրելու ըլլալու ըլլալ, գրելու ըլլալէ

ըլլալ, գրելու ըլլալով ըլլալ, գրելու հետ ըլլալու ըլլալ, գրելու վրայ ըլլալու ըլլալ:

Իւրաքանչիւր բաղադիր անաւարտ դերբայ կու տայ երկու կրկնաբաղադիր, ուրեմն 20-22 հատ բոլորը: Օրինակ՝ գրել տըւող ըլլալ, գրելու եղող ըլլալ, գրելէ եղող ըլլալ, գրած եղող ըլլալ, գրած ունեցող ըլլալ. գրել տըւողս ըլլալ, գրելու եղողս ըլլալ, գրելէ եղողս ըլլալ, գրած եղողս ըլլալ, գրած ունեցողս ըլլալ:

Ամեն բաղադիր աւարտ դերբայ կու տայ մէկ կամ երկու կրկնաբաղադիր բայ, ուրեմն 12 հատ 10-12 բաղադիրներէն: Օրինակ՝ գրել տըւած ըլլալ և գրել տըւած ունենալ, գրելու եղած ըլլալ, գրելէ եղած ըլլալ, գրած ունեցած ըլլալ:

Այսպէսով ամեն պարզ բայի դէմ կայ 10-12 բաղադիր բայեր և 80-90 կրկնաբաղադիր բայեր, որոնցմէ ամեն մէկը սկզբունքով բոլոր ժամանակներով ալ կրնայ գործածուիլ. բայց պորձնականին մէջ կըրկնաբաղադիր բայերուն մեծ մասը իրենց կազմին ու իմաստին համեմատ մէկ-երկու ժամանակ ունին, որ աւելի կը բանի. մնացած ժամանակներն ու ենթաձեւերը չեն յարմարիր, պէտք չեն գար, չափ են գալարուն ու ծանր:

Եթէ աչքի առաջ ունենանք, որ ամեն պարզ բայ ունի սոցորարար իր կրաւորակերպ, անցողակերպ, կրկնակերպ եւ ասոյթային բայերը, որոնք բոլորն ալ նմանապէս կ'առաջացընեն տասնեակներով բաղադիր ու կրկնաբաղադիր բայեր, այն ժամանակ պարզ կը դառնայ. թէ միմիայն մէկ բունէ մը ինչքան-ինչքան բայեր ծագում կ'առնեն, հարիւրներով, որոնց մէկ մասը կենդանի ու գործածական, մէկ մասն ալ հալուագիւտ կամ հնարաւոր:

48. Դի՛ր հեօեւեալ բաղադիր անորոհ դերբայներուն դէմը իրենց բաղադիր աւարտ ու անաւարտ դերբայները:

Պատմել տալ. յանձնել տալ. ծեծել տալ. գրել տալ. խօսելու ըլլալ. երթալու ըլլալ. ծախելու ըլլալ. խօսած ըլլալ. կերած ըլլալ. բացատրած ըլլալ:

49. Քու ստացած բաղադիր աւարտ ու անաւարտ դերբայներուն վրայ աւելցրնելով ըլլալ բային զանազան ժամանակները՝ կազմէ՛ կրկնաբաղադիր բայեր, որ կը գործածես քանի մը նախադասութիւններու մէջ:

50. Ընդգծէ՛ հեօեւեալ նախադասութիւններուն մէջ կրկնաբաղադիր բայերը իրենց ամբողջութեամբ, առանձնացո՛ւր եւ դի՛ր դէմը իր կրկնաբաղադիր անորոհ դերբայը:

Դուն ալ անգամ մը զիմադրող եղած եղի՛ր, ի՞նչ չնաս ունի, ամեն անգամ ալ փախչո՞ղ եղած պիտի ըլլաս:

Յրբ կը մեղադրէի ինծի չբարեւած ըլլալնին, երեքն ալ մէկ-քե-
տան չտեսած ըլլալու եղան:

Շաա պիտի ուրախանայի, եթէ անցած իրիկունը վերադառնալու
եղած ըլլայիք:

Մարդը իր տգէտ տեղովը Սուրբ Դրքին փիլիսոփայութիւնը մեկ-
նողս ըլլալու եղաւ:

Սիրով յանձն կ'առնեմ, ատով գոնէ ես ալ գործ մը տեսնելու ե-
ղած կ'ըլլամ:

Իսկ իր նամակի մասին եթէ նորէն խօսք բանայ, դուն իր նա-
մակը չտեսած ըլլալու եղիր:

51. Հեռեւեալ պարզ անուրիս դերբայներուն դէմը դի'ր իրմէն կազ-
մըւած բաղադիր աւարտ դերբայներ ու ետեւէն ալ կրկնաբաղադիր ա-
ւարտ դերբայներ:

Խածնել, բաժնել, խաղալ, խօսիլ, բանալ:

52. Հեռեւեալ պարզ աւարտ դերբայներուն դէմը դի'ր իրմէն կազ-
մըւած բաղադիր աւարտ դերբայներ ու ետեւէն ալ կրկնաբաղադիր ա-
ւարտ դերբայներ:

Բերած. դրած. վառած. լսած. նկարած:

53. Նոյն ձեւով ալ հեռեւեալ անաւարտ դերբայներուն դէմը դի'ր
իւր բաղադիր ու կրկնաբաղադիր անաւարտ դերբայները:

Շինող. քալող. խոստացող. քաշող. առնող:

54. Գրե՛ քանի մը նախադասութիւններ, ուր նախորդ երեք վար-
ժութիւններուն կրկնաբաղադիր բայերէն մէկ-քանի հասք գործածուին:

55. Գրե՛ հեռեւեալ բայերէն պարզ, բաղադիր ու կրկնաբաղադիր
հրամայականներ. եզակի:

Մատնել. հատնիլ. յենուիլ. խոստանալ. շողալ. լըւացուիլ. զըզ-
ուիլ. կրկնել. համբերել:

56. Գրե՛ նոյն ձեւով այդ բայերու կառարեալներուն եզակի երեք
դէմքեր պարզ, բաղադիր ու կրկնաբաղադիր:

57. Լրիւ խոնարհե՛, միայն մէկ դէմքով, առանց ենթադրելու, հե-
տեւեալ երկու կրկնաբաղադիրները.

Բերելու եղած ըլլալ.

Բերած ըլլալու ըլլալ:

Հինգերորդ հասում

ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՄԱԿԲԱՅ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Ա. ՈՐԱԿԱԿԱՆ ՄԱԿԲԱՅ

Նախադասութեան այն անդամը, որ գործողութեան ինչպէ՞ս կատարուած ըլլալը կամ ե՞րբ կատարուած ըլլալը կը յայտնէ՝ կ'անուանենք՝ մակբայ, եթէ ինչպէս կատարուած ըլլալը ցոյց կու տայ՝ կ'ըլլայ որակական մակբայ, այսինքն գործողութեան կատարման որակը, տեսակը, յայտնող:

Ա. Որակական մակբայ կ'ըլլան ամենէն առաջ ածական անունները, երբ ուղղակի դրուած են ստորոգիչին վրայ, կա՛մ պարզապէս, կա՛մ մը անորոշ յօդով, կա՛մ իկ, ակ, ուկ փաղաքշական մասնիկով, կա՛մ իրենց կրկնակ ձեւովը:

«Արագ կը քալէ». «Տխուր նստեր էր». «Աղուոր մը կշտացաւ». «Բիչ մը յոգնած էր». «Կամացուկ ելաւ ոննեակէն». «Գեղեցիկ մը յանդիմանեց». «Նոր-նոր կը լսեմ». «Ուշ-ուշ կու գաս մեզի». «Շուտ շուտ կը խօսի»:

Բ. Որակական մակբայ կ'ըլլան դոյական անունները հետեւեալ պարագաներուն.

1. Երբ կրկնակ ձեւով գործածուին. կաթիլ-կաթիլ, շարան-շարան, մօտիկ-մօտիկ, հատիկ-հատիկ, տուն-տուն:

2. Դիրք, տեղ ու ժամանակ ցոյց տրուող բառերը. երբ ուղղականն ու բացառականը միասին գործածուին. քովէ քով, զիմացէ զիմաց, օրէ օր, տարուէ տարի. վաղէ վաղ. բերնէ բերան, գիւղէ գիւղ, խանութէ խանութ:

3. Այեւ ու նման, չափ ու ասօրեան, հակառակ ու համեմատ, ըստ և առանց, փոխադէմ ու տեղ, իբր ու իբրեւ կցորդներուն հետ առնուած, «Ան ալ մերժեց ինծի նման». «Կոռեցաւ առիւծի պէս». «Տաք ցուցի այրելու աստիճան». «Վարժ էր զէնքի զինուորի չափ». «Վարուինք ժողովի որոշման համեմատ». «Կարգադրեցի հարցը քու նամակիդ հակառակ». «Առանց դրամի ելաւ ճամբայ». «Գնացքը գալու է ու»

թին ըստ վեճի՜ն ցուցակի»։ «Վճարելու փոխարէն մուրհակ մը տը-
ւաւ»։ «Յորենի տեղ դարի կը գործածեն»։ «Իբրեւ մտերիմ մէկը խօ-
սեցայ հետը»։

4. Շարժում, զգացում, յուզում և այլ հոգեկան ապրումներ
արտայայտող բառերուն գործիական հոլովը. սիրով, վախով, վշտով,
յուսով, սրտով, արցունքով և այլն։

5. Ում, ոյր, ուրիւն, անգ վերացական դարձընող մասնիկով գո-
յականներուն գործիականը. նազանքով, տանջանքով, գալարումով,
լարումով, նեղութեամբ, համարձակութեամբ, չարութեամբ, դայ-
րոյթով։

6. Դոյականներուն գործիականը ընդհանրապէս, երբ ածական
մը կամ տրական հոլով որոշիչ մը ունի իր առջեւ. «Ներկայացաւ
փերիի կերպարանքով»։ «Սկսաւ մլաւել կատուի ձայնով»։ «Կը նա-
յէր ինծի ապուշի նայուածքով»։ «Սպառնալից չեչտով»։ «Դողդոջ
ձեռքերով»։ «Յիւր մագերով»։

7. Լծակից գոյականներուն գործիականները. տնով. տեղով, վե-
րով. վարով, ներսով. դուրսով, զիւզով. քաղաքով, չէնքով. շնորհքով,
համով. հոտով։

Դ. Դերանունները մակբայ կ'ըլլան։

1. Բաղդատական դերանուններուն ուղղականը. «Այնչափ կըրկ-
նեցի»։ «Ուրչափ ըսինք իրեն»։ «Այնքան դիմադրեց»։ «Ինչպէս զար-
մացան»։ «Այսպէս պատահեցաւ»։ «Սանկ ըսէ»։ «Ատանկ չեն վախ-
ցըներ մարդը»։

2. Հետեւեալ բաղդատական դերանուններուն գործիականը. այս-
պէսով, այդպէսով, ասանկով, տտանկով, սանկով. նանկով։

Դ. Դերբայները իբրեւ մակբայ.

1. Բոլոր աւարտ դերբայները, երբ կը դրուին ստորոգիչին վը-
րայ ի՞նչ վիճակի մէջ գործողութիւնը կատարուած ըլլալը ցոյց տա-
լով. «Կարմրած ներս վաղեց»։ «Ուռած. ուռած սկսաւ պտտիլ»։ «Վըշ-
տացած հեռացաւ»։ «Ստիպուած յանձն առի»։

2. Անաւարտ դերբայը իր տրականին հետ կրկնակ ձեւով. «Խը-
լող. խլողի հասցուցին եղածը»։ «Ծաղրող. ծաղրողի խոյտառակեցին
խեղճը»։

3. Անորոշ դերբայներուն բացառականը. «Կեցեր էր դողդալէն»։
«Մտածելէն դէպի վար գնաց»։ «Սուլելէն, երգելէն, ծամելէն»։

4. Անորոշ դերբայներուն գործիականը. նախորդին համարժէք.
«Բարեւելով անցաւ առջեւէս»։ «Ծռելով կ'տնցնիս տակէն»։ «Ոստելով
դէպի վար գացին»։

Այս բոլոր տեսակի դերբայները միշտ կրնան ունենալ իրենց յա-
տուկ խնդիրներն ու մակբայները, որոնք նախադասութեան ստորոգի-

չին հետ անմիջական կապ չունին. «Քարէ քար ցատկելէն կ'իջնէին քետն ի վար»։ «Աւելումս երգ մը երգելով բարձրացան սանդուղներէն»։ «Դեռ նոր սեղանէն ելած՝ նստեր լրագիր կը կարդար»։

Ե. Յատուկ մակբայներ.

1. Խուճը մը բառեր, որոնք միայն իբրեւ մակբայ կը գործածուին և անթեք են. ա'լ. այլեւս, յաճախ, իսկոյն, միշտ, արդ, դեռ, դեռ եւս, երբեք, երբեմն, մերթ, գոնէ, գէթ, թերեւս, միթէ, իրո թէ։

2. Պէս, արար, օրէն, ակի. ուլից (աւին, եւին) մասնիկները անունները մակբայ կը դարձնեն. «Մեծապէս, հոգեպէս, այլապէս, հայրաբար, մտերմաբար, վեհօրէն, բրտօրէն, կրկնակի, շեղակի, բոլորովին, բնաւին, ամենեւին»։

3. Փոխառութիւններ գրաբար հոլովներէ.

Նախ գործիական հոլովներ. հազիւ, խստիւ, կամաւ, հարկաւ, արդեօք, նախօրօք, այսու հանդերձ, այսու ամենայնիւ, անձամբ, դիտմամբ, իրաւամբ։

Երկրորդ՝ բացառական հոլովներ. արտաքուստ, վերուստ, սրտանց, հնուց, իհարկէ, հետզհետէ։

Երրորդ՝ գրաբարի ի, առ, ընդ և ըստ նախդիրներով. «Լեռն ի վեր»։ «Ականջն ի վար»։ «Տեղն ի տեղը»։ «Փոխն ի փոխ»։ «Ծայրէ ի ծայր»։ Առ այժմ, առնչազն, առ առաւելն, առ հարկի, ընդհակառակն, օր ընդ մէջ, օր ըստ օրէ։

Չորրորդ՝ զանազան բայական ձեւերու քաբացումները. կարծեմ, կարծես, դիցուք, գուցէ, մի գուցէ, ինչ և իցէ, երեւի, դարձեալ, գրեթէ։

58. Ընդգծե՛ բոլոր մակբայները։

Շատ յոգնեցան պզտիկները. անշուշտ դժուար է այդ աշխատանքը անոնց համար։ — Մարդը սաստիկ բարկացաւ, յանկարծ վեր ցատկեց իր տեղէն և շիտակ գնաց տուն։ — Իզուր կը համոզէի, որ քիչ մը սառնարիւն ըլլայ։ Բոլոր ներկայ եղողները դժգոհ մնացին։

Գուցէ մեկնիմ ես ալ. գործս գրեթէ աւարտած եմ. թերեւ հասնիմ կէսօրուան գնացքին։ — Կը կարծեմ ուշ պիտի մնաս։ — Ինչո՞ւ այդպէս կը կարծես։

Մենք ալ յաճախ կ'այցելենք իրենց գիւղը։ Հրաշալի է իրենց տունը արդարեւ. Շէնքը հպարտ կը բարձրանայ բլուրին գագաթը և ամբողջովին շրջապատուած է թարմ անտառներով. ուր թռչունները կը ծըլւըլան անընդհատ։ Մարդուս կուրծքը թեթեւ կը շնչէ և կը քալես մեծ հաճոյքով։

Հաւաքոյթին իբրեւ թէ գայիր պիտի. ո՞ւր էիր նորէն. ո՞ւր

կ'անյայտանաս այդպէս օրերով: Հաւաքոյթը շատ զըւարթ անցաւ. հիւրերու տրամադրութիւնը տեղն էր ընդհանրապէս և ցրուեցան գոհ սրտով: Սրտանց կը ցտնկայի, որ դուն ալ անպատճառ ներկայ եղած ըլլայիր, ամեն հաւաքոյթ այսպէս չի յաջողիր և այս յաջողուածին ալ դուն չկայիր դժբաղդարար:

59. Տեսանք այգիէն խաղով կը կրէին կողով-կողով: Այգիին տէրը ուրախ նստեր էր տան առջեւի ծածկին տակ, ծխախոտի տերևները բարակ-բարակ կը կտրտէր, խնամքով կը փաթթէր նուրբ թուղթին մէջ և զգուշ կը շարէր քովի փայտէ տուփին մէջ: Քիչ մը խօսեցանք հետը. քանի մը սիրալիր խօսք ըսաւ ժպտելով և խկոյն առաջարկեց. որ մտնենք թաղերը՝ կուշտ խաղող ուտենք. և բարեացակամ կերպով մը մատովը ցոյց տըւաւ ընտիր տեսակներուն թաղերը. պատիւ մը, որ ամենուն չէր ըներ դիւրաւ:

Դրածդ կարծես ծոյ աշակերտի շարադրութիւն ըլլայ. ինքնին հասկընալի բաները աւելորդ կը գրես. ըսուելիք բաներն ալ կ'ըսես թերի ու խառնակ: Պարապ խօսքեր բնաւ պէտք չէ ըլլան գրութեանը մէջ. և լո՛ւրջ ուշ դարձուր, որ ամեն ինչ յստակ արտայայտուի: Ուրախութեամբ պէտք է աւելցնեմ, որ մաքուր կը գրես. գիրդ գեղեցիկ կը դտնեմ:

60. Նըկուդ գիծ մը քաշէ վերի յատուկ մակբայներուն ցակր:

61. Ընդգծէ դերբայ եղող մակբայները հետեւեալ նախադասութիւններուն միջ:

Բարկացած սկսաւ հայհոյել ձիապանը: Երեսաս զարմացած կը նայէր անոր, իսկ մեծերս կը խնդայինք ակամայ: Զիբոր կը քայէին խրխնջելով. ընդարձակ դաշտը փռուած էր անձրեւէն նոր լըւացուած: Հասանք գետին, որ յորդած էր ու կը հոսէր կատաղած. ալիքները կը թաւայէին ազմկելով ու կը ցլտկէին փրփրելով: Հիացած կը դիտէի գետին այդ բարկացած վազքը. և առանց նկատելու սկսեր էի ձիս արագացնել. և կ'երթայի մինակ բոլոր խումբին առջեւէն երգելով. կ'երթայի երգելէն ու շուրջս դիտելէն: Մինչև որ միւսները հասան ինծի ձիերը մտրակելով. և բոլորս միացած անցանք մեծ կամուրջը ձիերու սմբակներուն տակ անոր կամարները զգրգեցնելով:

62. Վերի նախադասութիւններուն դերբայ մակբայները վերածէ՝ անուն մակբայներու, որ իմաստը չփոխուի:

63. Կետերուն տեղը դիր մակբայներ, նախ անուն մակբայ մը, ետք դերբայ մակբայ մը եւ վերջապէս յատուկ մակբայ մը: Ուրեմն ամեն նախադասութիւն կ'աւելնի երեք անգամ:

Եւ ... հեռացաւ սննեակէն: — Իսկ ես ... ետ շտապեցի: — Կինը ... կը նայէր դաշտերուն: — Տղաքը ... նայեցան իրարու: — Եւ

դասախօսը ... կը շարունակէր իր բացատրութիւնները: — Ատաղ-
ձագործը ... կը բարձրանար սանդուղներէն: — Մարդը ձեռքը մեկ-
նեց ինծի ...:

64. Հետեւեալ դերբայներով կազմուած մակբայները փոխէ՛ ցոյցի-
մաս ու կրկնակ ձեւով գործածուած անուն մակբայներու:

Դոյր ու եղբայր կ'երթային իրարու ձեռք բռնած. և յանկարծ
կանգ առին դէմքերնին իրարու դարձուցած: — Երեխաները կը խա-
ղային գլուխնին իրարու յենած: — Վերէն զոյգ մը կու գար իրարու
թե մտած: — Եւ զոյգերը կը քալէին առանց իրարու քողէն բաժ-
նըւելու: — Կարգադրեցի, որ տեղեակ պահեն մեզի ամեն օրուան պա-
տահածը նոյն օրը հազորդելով:

65. Գրէ՛ ցախադասութիւններ, ուր մակբայներ ըլլան աւարտ ու
անարտ դերբայներ:

66. Անորոշ-դերբայ մակբայները վերածէ՛ վերացական-գոյական
մակբայներու:

Տրտնջալով հեռացաւ բակէն: — Ամբողջ օրը խաղալով անցու-
ցինք: — Շունը կծկտեր էր անկիւնը վախնալէն: — Շահուելով կը
ծախէ. — Խօսելով հասկընալ չուզողին ծեծելով կը հասկըցնեն: — Կա-
տակելով դուրս եկան անյարմար դրութենէն: — Ես երկու անգամ
ոստնելով կ'անցնիմ այդ տարածութիւնը: — Ծախողը նայեցաւ մեզի
տարակուսելով: — Ներկայացանք պարոնին յարգալից բարեւելով: —
Մտաւ իր գրասենեակը չոր-չոր հաղալով:

67. Ընդգծէ՛ այն բառերը, որոնք կը պատկանին մակբային, կապ-
ուած չեն ցախադասութեան ստորոգիչին:

Որսկանը հրացանը ուսը զարկած՝ կ'երթար գիւղ: Հագուստ-
ները հովերուն տըւած՝ երիտասարդը կեցած էր նաւուն եզերքը: —
Մնացեր էի երազկոտ՝ աչքերս լեռներուն գամած: — Նաւավարը կը
հայհոյէր՝ ընկերոջս ըրած անտեղի նկատողութենէն կատուած: — Պաշ-
տօնեան կը կարգար ձեռքի թուղթը՝ խոշոր կլոր ակնոց մը քթին
ծայրը անցուցած: — Վար կ'իջնէր թատրոնի սանդուղներէն՝ մետաք-
սէ աստառով երկար վերարկու մը թէին նետած: — Նկարիչս նստեր
էր պատշգամին ծայրը՝ իր հետաքրքիր նայուածքը աջ ու ձախ
դարձնելէն: — Պատառտած հագուստներով տղայ մը կ'երթար փոշոտ
ճամբով՝ զեղեցիկ եղանակ մը սուլելէն և շատ ճիշդ կերպով:

Բ. ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱԿԲԱՅ

Նախագահութեան մէջ գործողութեան մը երբ կատարուիլը ըսող քառը կ'ըլլայ ժամանակի մակրայ:

Ա. Ուղղական հոլով կ'ըլլան հետեւեալ ժամանակի մակրայները.

1. Ժամանակ ցոյց տըւող բառերուն եզակի ուղղականը, երբ դրուած է ուղղակի ստորոգիչի վրան. «Առտուն հասաւ և իրիկունը երթայ պիտի»: «Անցած տարի շատ ձիւն տեղաց». «Հանդիպիմ պիտի գալ շաբաթ». «Կը յայտնեմ իրեն այսօր». «Պայմանաժամը կը լրանայ վաղը»:

2. Քանի մը բառերու յոգնակի ուղղականը ւ դիմորոշ յօդին հետ. նորերս, վերջերս, ետքերս, մօտերս, անցեալներս, նաեւ ճանցեալները»:

3. Ժամանակ ցոյց տըւող բառերուն եզակի ուղղականը ամեն տն: ցատականին հետ. ամեն օր, ամեն կիրակի, ամեն տարի, ամեն ամիս:

4. Անգամ անունը այս, այդ, այն ցուցականներուն հետ. «Այս անգամ յաջողեցան»:

5. Աւարտ դերբայը. երբ ո'չ-ժամանակի բառերով ժամանակը կ'որոշէ. «Արեւը չեւած». «Հազիւ տուն հասած»:

Բ. Տրական հոլով կ'ըլլան հետեւեալ ժամանակի մակրայները.

1. Քանի մը ժամանակ ցոյց տըւող բառերուն տրական հոլովը, քօլթօվին համարժէք ուղղականին. «Իրիկունան կու գամ = իրիկունը կու գամ». «Ընտրութիւնները տեղի պիտի ունենան գալ ամսուն = գալ ամիս». «Մեկնիմ պիտի գալ շաբաթու = գալ շաբաթ»:

Այսպէս ալ՝ Մեռնդին, Զատիկին, Մեծ Պահքին, այս ինչ տօնին, այն ինչ հանդէսին, մեր առաջին հանդիպումին»:

2. Մասնաւորապէս բոլոր տոմսու անունները, ամսաթիւերը և տարեթիւերը. «Ես ծնած եմ մայիսին». «Պիտի աւարտէ հոկտեմբերին». «Յուշահանդէսը կը բացուի ապրիլին». «Մայիս ութին կը լրանայ ժամանակս. կամ Մայիսի ութին». «Օգոստոսի 31-ին կը վերջանայ մեր արձակուրդը. կամ Օգոստոս 31-ին»:

«1920-ին» = «1920 թրականին». «1920-ի Սեպտեմբերին» = «1920 թրականի Սեպտեմբերին». «1920 Մայիս ութին» = «1920 թրականի Մայիսի ութին»: Այսինքն երբ տարեթիւն ու ամսաթիւը միասին են՝ տրական հոլովի վերջաւորութիւնը կը դրուի միայն ամենավերջի բառին վրայ:

3. Տարեք ու հասակ ցոյց տըւող վերացական բառերուն եզակի կամ յոգնակի տրականը ստացական յօդին հետ. մանկութեանս, արդայութեանդ, ձեր հասակիս, տղայ տարիքիդ, երիտասարդ տարիներուս, թարմ օրերուս, հասունութեանս հետքին:

4. Անորոշ դերբայներուն տրական հոլովը պէս կ'ընտրուի և ըստացական յօդով. «Տեսնելուս պէս, կանչելուդ պէս, ծիծաղելուն պէս ճանչցայն»:

Դ. Բացառական հոլով կ'ըլլան ժամանակի մակբայները առաջ ու ետք կ'ընտրուին հետ. «Հերոդոտէն առաջ պատմիչներ կային». «Խորենացիէն ետքը թէեւ եկան շատերը». «Երկու տարիէն առաջ չեմ կարծիր, որ այս շէնքը աւարտի». «Այս բոլորէն ետքը պէտք է, որ համաձայնիս առաջարկիս». «Մեկնելէս առաջ»:

Դ. Երբ ժամանակը ընդհանրապէս կ'անուանենք առանց իր ըսկիզբը, վերջը կամ տեւողութիւնը աչքի առաջ ունենալու՝ կը դնենք գործիական հոլով. «Ժամանակով թագաւոր մը կար». «Այս ինչ իշխանին օրովը». «Իրիկունով նոր գործ մի՛ հաներ գլխուս». «Լոյսով վերադարձիր». «Մուրով անցանք այդ կողմերէն». «Գիշերով այս ձորէն չանցըւիր»:

68. Ընդգծե մակբայները, ժամանակի մակբայները երկու գիծով. վաղ առտու կանուխ կու գաս մեղի, որ դեռ արեւը չծագած ճամբայ իյնանք և կը յուսամ ժամը ետքին կը հասնինք գիւղ: Գործերնիս վերջացնելէն ետքը կ'այցելենք սիմենթի գործարանը, ճաշից պատճառ մը հաց կ'ուտենք կայարանը և ժամը երկուքին կը նստինք գնացք: Դէ՛, ալ հանգիստ ձգէ՛ ինծի այսօր, որ նախօրէն վաղուան գործերս կարգի դնեմ:

Այս տարի տաքերը շատ շուտ սկսան: Գիշերները քնանալ չըլլար սենեակներուն մէջ: Յերեկներն ալ արեւի տակ միտլ չըլլար: Անցած ամառ շատ աւելի մեղմ էր եղանակը. իրիկունները նոյնիսկ պահանջ ունէինք անպատճառ բան մը վրանիս սունելու և ինչքան յոճախ պտոյտներ ենք ըրած ճաշէն գրեթէ անմիջապէս ետքը. շատ անգամ գլխաւորաց կ'աշխատէինք տաքուն:

69. Հօրեղբայրս 1920-ին անցաւ Սմերիկա վտիտով, թէ արդեօք գործ մը ճարիւ պիտի յաջողի. սակայն տարին չլրացած կը դէր մեզի ուրախութեամբ, որ արդէն ապրուստը ապահովուած էր և մեծ յոյս ունէր շուտով մեզի ալ օգնութեան հասնելու:

Երկու տարի ետքը, 1922-ին, արդէն շնորհքով խանութի մը տէր էր դարձած յաջողութեամբ: 1925-ին անգամ մը վերադարձաւ հայրենիք, բայց հազիւ մնաց երեք ամիս և շտապով ետ գնաց: Հոս գալուն պէս գնեց մեր այս տունը, որ անոր մեկնելէն ետքը մենք քաւական նորոգել տըւինք և զգալի կերպով գեղեցկացաւ:

Անցած տարի նորէն գալ կ'ուզէր, բայց այս անգամ գործերը խանգարեցին, կարծեմ փոքրիկ ձախողանք մըն ալ ունեցաւ այդ

միջոցները. ամեն պարագայի դու չկրցաւ, այսու ամենայնիւ գիտեմ, որ ան բնաւ դժգոհ չէ հիմա իր գործերէն: Վերջերս նոր նամակ ստացանք, տրամադրութիւնը բարձր էր միշտ:

ՉԹ. Տրական հոլով ժամանակի մակբայները դարձն'ւր ուղղական հոլով ուր հնար է:

Երեկոյեան եղանակը փոխուեցաւ: Առաւօտեան (=առտուն) կարծես անձրեւէր պիտի. կէս-օրուան դէմ սկսաւ բացուիլ:

Ես պաշտօնապէս հեռանալ չեմ կրնար ամեն շաբթու. այնպէս որ անպատճառ պիտի երթամ այս շաբթու կամ չատ-չատ Ձատկի շաբթուն. թէ չէ մեր ուղեւորութիւնը պէտք է յետաձգենք յուլիս ամսըւան, երբ արձակուրդ կ'ըստանամ հաւանօրէն:

Ամեն գործ, բարեկա'մս, իր ժամանակին: Գրքիս տպագրութիւնը պիտի լրանայ այս ամսըւայ վերջին: Եթէ հասցընել չկրցայ՝ կ'աւարտենք գալ ամսըւայ սկզբին, կամ զուգէ գալ ամսուայ կէսերուն: Յամենայն դէպս պատրաստ պիտի ըլլայ տարեգլխուն:

ՉԱ. Դի'ր ժամանակի մակբայ մը կեանքուն օգտը. իւրաքանչիւր նախադասութիւնը ա'ն ետեւ անգամ օտարեր օգտակի ժամանակի մակբայ-ներով:

Ջրօսաշրջիկները ... մեկնեցան մեր քաղաքէն: — ... արժէքաւոր իրերը յանձնեւ են դրամատունը: — Պատկերներու ցուցահանդէսը սեղի պիտի ունենայ ... — Այս լեռները ... թաղուած են եղեր ջրերուն տակ: — Կայծակը զարկաւ ... մեր գիւղի եկեղեցիի գրմ-քեթին:

ՉԲ. Ընդգծե՛ մակբայները. բովը դի'ր փակագծի մեջ ո՞ր օգտակի ըլլալը:

Նամակը գրուած էր մեղմ ոճով: — Ամեն կերպ փորձեցի, քայքայ իզուր անցան ջանքերու: — Վարպետ ձեռով մը մարդը զուրա եկաւ զժուարութեան տակէն: — Զեփուռը անուշ բոյրով զարկաւ ղէմքերուն: — Կը հնչէր երաժշտութիւնը ուրախ շնչակով: — Գետը կը փայլէր լուսնին տակ արծաթի գոյնով: — Կը նայէր կինը ինձի խենթի նայուածքով:

Մեծով-պղտիկով պահել էին ներկայացման, տունը բնաւ մարդ չէր մնացել: — Ահագին հարստութիւնը փճացուցին իսպառ, տունով-տեղով ոչնչացան: — Սիրով-սրտով խօսք մը ըսէ՛, անաչէ՛ն, կշտա-ցանք վերջապէս քու անվերջ տրտունջներէդ: — Այսպէսով աւարտեցինք գործը երկու շաբթիւ: — Սանկով-նանկով օրը իրիկուն ես դաւ: — Ի՞նչ ես կեցեր դէմ քիթդ կախած: — Ոտքի ելաւ գէշ բռնազգով մը և աւարտեց խօսքը արցունքով:

Սիրով ընդունեցի իր հրաւերը. թէ և տարակուսանքով կը նայէր ան ինձի, կարծելով որ անպատճառ մերժեմ պիտի: Ուրիշ անգամներ ալ կանչած էր, բայց միշտ հրաժարած էր:

73. Շուհիս կարծեմ բան մը գուշակեր էր. կասկածանքով կը նս-
յէր շուրջը. այսու ամհնայնիւ տեղէն չշարժեցաւ. գուցէ նախապէս
ստուգել կ'ուզէր եղելութիւնը:

Իդէպ ի՞նչ ըրիր քեզի յանձնած թղթերս. քի սէր Աստծու չկորսնցը-
նես. այդ վկայաթղթերուն խիստ պէտք ենք ունենալու. ատոնցմէ
չատերը թէեւ ես բառառբառ կը յիշեմ, բայց յիշելը բնաւ կարեւո-
րութիւն չունի:

Ես յամենայն դէպս պարտք կ'ըզգամ քեզի տեղեկացընելու մեր
տեսակցութեան արդիւնքը, որ ամենեւին գոհացուցիչ չեմ գտներ:

Այս տետրակը տեղ-տեղ պատուրւած է. լաւ է երկու երես նորէն
արտադրես, վերջը տող-տող կը համեմատենք միասին, մանաւանդ
որ մէջ ընդ մէջ քնջուած աւ նորէն գրուած տողեր կան մէջը:

Ձէ՞ որ գրեր էի քեզի առաջընէ, որ այս օրերս գալ չեմ կրնար,
մի գուցէ վշտացած ես: Իրեւի պիտի զարմանաս, եթէ քեզի ըսեմ,
որ օրերով տունէն դուրս եկած չունիմ և տակաւին աշխատութիւնս
աւարտած չեմ: Ինչ և իցէ վերջացընեմ նամակս. դիցուք բաւա-
կան գրելիք ունիմ, բայց այս անգամ այսչափը բաւ է:

74. Հեծեւեալ կօորի իւրաքանչիւր բառը գրե՛ տողի մը սկիզբը ի՞ր
եծելի կէտիմ հետ. իովը դի՛ր հաւասարութեան ճեան մը եւ գրե՛ իւրա-
քանչիւր բառի նախադասութեան մեջ ինչ անդամ ըլլալը եւ ո՞ր տեսակը:

Աղան ուշ եկաւ եկեղեցի աշն առտուն, կէսին միայն հասաւ.
քրտնած էր ցուրտին հակառակ, շնչասպառ կեցաւ, խաչակնքեց, ծըն-
րադրեց: Յետոյ սկսաւ բարձրաձայն աղօթել. աղօթքները կ'ըսէր քա-
հանայէն առաջ և բառերը կ'արտասանէր հատիկ-հատիկ, ամեն պար-
բերութիւն շնչտելով:



Վեցերորդ հասում

ՆԱԽԱԴԱՍՏՈՒԹԵԱՆ

ՄԱԿԴԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Ա. ՈՐԱԿԱԿԱՆ ՄԱԿԴԻՐ

Ա. Նախադասութեան մէջ այն բառերը, որոնք կապուած չեն տեղակի ստորոգիչին և ամբողջ նախադասութեան չեն վերաբերիր, այլ նախադասութեան անդամներէն մէկն ու մէկին վրայ կը դրուին և կը ծառարեն այդ մասնաւոր անդամի իմաստը աւելի որոշելուն ու լրացնելուն, կը կաղմեն նախադասութեան անդամներուն մէկ նոր տեսակը և կը կոչուին մակդիր, այսինքն ուրիշ անդամի մը վրան դրուած բառ. իսկ մակդիրը սաացող անդամն ալ կը կոչուի մակդիրաւոր:

Մակդիրները կը բաժնենք երեք տեսակի. որակական մակդիր, քանակական մակդիր և յատկական մակդիր:

Երբ մակդիրը դրուած է մակդիրաւոր բառին վրայ անոր ինչպէ՞ս ըլլալը, ի՞նչ տեսակի ըլլալը, ինչէ՞ չինուած կամ ինչէ՞ առաջացած ըլլալը, ի՞նչ եղած ըլլալը կամ ինչի՞ յատկացուած ըլլալը ցոյց տալու համար՝ մակդիրը կ'անուանենք որակական, որովհետեւ կը բացատրէ մակդիրաւոր բառին որակը, այսինքն անոր մէկ յատկութիւնը, վիճակը. ինչ ունակութիւններու աէր ըլլալը. «Մի՛ ժողով, սեւ կատու, բուսական կիսնք, փառաւոր զիրք, բուրդէ չապիկ, քաղող մարդիկը, եկող տարի, ծախուած ապրանքները, ծախուած ապրանք, նետելիք մասերը, մաքուր ճերմակիզէնք»:

Բ. Բնականաբար տմինէն առաջ բուն ածական անուններն են, որ նախադասութեան մէջ որակական մակդիր կը դառնան, քանի որ ածականները արդէն ինքնին ուրիշ անունի մը վրայ դրուող յատուկ բառեր են. ստոնք են ի ծնէ մակդիրները:

Բայց դոյական անուններն ալ, զրեթէ բոլորը, կրնան ածականաւորար առնուիլ, որով և կը դառնան նախադասութեան մէջ որակական մակդիր. «Ծախ աւան, արեւ ալքեր, ձիւն ձմեռ, գիշեր ատեն, սուս

վկայութիւն, չուք տեղ, անձրև օր, մշուշ օդ, ցից ժայռեր, ապառաժ քար, ցուցանք մարդ, գլխացաւ գործ, ծաղիկ հասակ, դինուոր մարդ, ոսկի դրամ, կաշի դօտի, ապակի սրուակ, բուրդ չապիկն:

Որակական մակդիրները ընդհանրապէս կ'ըլլան ուղղական հօլով, բայց պակաս չեն նաև միւս հօլովներում մակդիրները:

1) Բացառական հօլով մակդիրը ցոյց կու տայ մակդիրուածի ինչէ շինուած ըլլալը. փայտէ սուր, արծաթէ դպալ, բուրդէ գուլպայ քարէ տախտակն:

2) Գործիական հօլով մակդիրը բան մը ունեցողի իմաստը կու տայ մակդիրուածին. «Տեսքով մարդ, չորս պատուհանով սենեակ մը, չհորհքով մարդիկ, խելօք տղայ, խստիւ արգելք, ազնիւ հոգի, համով կերակուր, Գրիգոր անուշով ծառայ մը, չազանակի գոյնով մագերէն»:

3) Տրական հօլով մակդիրը կը գործածուի սովորաբար պէս, նման, չափ, աստիճան, կցորդներուն հետ և կը ծառայէ իրրև համեմատութեան եզր. «Զիւնի պէս ճերմակ, գայլի նման շուն մը, տղիտութեան աստիճան անտեղեակ, անուշի մը չափ անփոյթ»:

Որակական մակդիրները, եթէ ուղղական են, ո՛չ յօդ կ'առնեն, ո՛չ հօլով ու թիւ, միշտ կը մնան մերկ ու անթեք. եթէ հօլով մըն են, ինչ ձևով որ կան, կը մնան այդպէս անփոփոխ, ինչ փոփոխութիւններու ալ ենթարկուի մակդիրուած բառը:

Իսկ երբ մակդիրուած բառը ինքնին կամ նախորդ կապակցութեամբ հասկընալի ըլլայ ու զիջուի, այն առին անոր կցորդը, թիւը, հօլովը և յօդը բոլորը միասին կ'անցնին մակդիրին. բայց առով իսկ վերջինս կը դադրի մակդիր մը ըլլալէ և նախադասութեան մէջ կը գրաւէ իր կրճատուած մակդիրուածին դիրքն ու արժէքը: Ճիշդի տուր սա դեղին գիրքը = ինծի տուր սա դեղինը (սեռի խնդիր): Փոքրիկ տղաքներէն տեղեկացայ = փոքրիկներէն (սնութեան խնդիր) տեղեկացայն: Մեծ զաւակս է = մեծս (ենթակայ) էն: Վեր խօսէր փոքրիկ սղուս հետ = կը խօսէր փոքրիկս հետ:

Գ. Որակական մակդիր կ'ըլլան նաև երեք դերբայները.

1) Անաւարտ դերբայը ցոյց կու տայ մակդիրուածի բան մը ընող ըլլալը, որոշ գործի մը կամ կարողութեան մը տէր ըլլալը. «Գրող զպիրը, քշող ապրանք, խայթող կենդանիներ, չհող թիւերը»:

2) Աւարտ դերբայը միայն ամ մասնիկով կը բանի և ցոյց կու տայ մակդիրուած բառին վերաբերող և արդէն կատարուած դործողութիւն մը, իրողութիւն մը. «Կերած հացս, խօսուած լեզուներ, պսոռ կած տեղը, կորսուած թաշկինակ մը, սիրած մարդիկս»:

3) Անորոշ դերբայի արական հօլովն է միայն, որ կը գործածուի իրրև որակական մակդիր և ցոյց կու տայ մակդիրուած բառին ինչ ճանի յատկացուած ըլլալը, ինչ բանի ծառայելը. «Տանհլու բեռս, յանձնհլու կապոցդ, սիրուելու երեխայ, իմ վճարհլու բաժինս»:

Դերբայ մակդիրներն ալ կը գրուին միշտ առանց յօդի, թըրի ու հոլովի: Վրան յօդ, թիւ, հսկով ու կցորդ զսնըւիլը նշան է, որ ան դադրած է մակդիր մը ըլլալէ: Ճաղիկ ծախող կնոջմէն առի = ծաղիկ ծախողէն (քնութեան խնդիր) առի»: Ակթոռներ, բերող մարդուն տո՛ւր = աթոռները բերողին (քնութեան խնդիր) տո՛ւր»:

Որակական մակդիր գործած գերբայները բոլորն ալ կը պահեն իրենց բայական ուժը և կրնան իրենց յատուկ լրացուցիչ բառերը ունենալ: Ճեկող մարդը մեր հաշուապահն է». Ամտքով եկող մարդը». Անտառէն ոտքով եկող մարդը». Ճարագորող պաշտօնեան ինքը ինծի ըսաւ». Այդ գրութիւնը շարագորող պաշտօնեան ինքը ինծի ըսաւ». Այդ յիմար գրութիւնը այդպէս անշուրճ կերպով գրող պաշտօնեան անձամբ ներկայացաւ գրասենեակի պետին»: Ճերէկ իրիկուն պարասրահին մէջ կորսնցուցած մատնիդ քոյրս գտեր է». Ճիւռ այնքան ճաշակով ու մեծ խնամքով պատրաստած ծաղկեփունջդ իրաւ որ շատ սիրուն էր»:

75. Ընդգծե՛ որակական մակդիրները, անուն մակդիրները մեկ գիծով, դերբայ մակդիրները՝ երկու գիծով:

Առաջարկած ծրագրիդ ընդունելի կը գտնեմ. կ'ուզէի ճանչնամ վերջին յատակագիծը մշակող ճարտարապետը: Եթէ հին խանութները ծախելու դիտաւորութիւնդ դեռ չես փոխած, ըսէ՛, որ յայտնեմ գնել ուզող ծանոթիս: Մշտ մարդ մըն է թէև, բայց յարմար փողոցի վերայ չնորձքով ու ամ ան չէնք մը, դիտեմ, որ կը փնտռէ: Պարզ չէնք մըն է իր ուզածը, վրայի յարկը երեք-չորս սենեակէ բաղկացած բնակարան մը, վարի յարկին վրայ ալ լայն ճակատով խանութներ:

Դրել ուզած պատմութիւնս հետաքրքիր ու իրական ղէպք մըն է, բայց վարժ գրիչ է պէտք գեղեցիկ գրուածք մը մէջտեղ գնելու համար: Դրած դրութիւնն ղէչ չեն ստացմ. յաջորդ դրութիւն ալ որ աւարտեմ, կը բերեմ քեզի, որ փորձառու աչքով անգամ մը նայիս և յայտնես հին վարպետի ծանրակշիռ կարծիքդ:

Ծարաւ մարդուն փնտածը ջուրն է միշտ, մանաւանդ պաղ ջուրը. աղքատ մարդուն երազածն ալ երկինքէն ինկած հարստութիւն մը:

Անձրեւ օրը հաւերուն ջուր ալւող շատ կ'ըլլայ, կ'ըսէ մողովդպահան առածը:

76. Ձոյց ճախդասութիւններուն մէջ կրկնելով անունը բնդգծե՛ մեկ գիծով, երբ մակդիր է, ընդգծե՛ երկու գծով, երբ մակբայ է:

Տղան աշխուժ կը քալէր քովէս: Կր քալէր քովէս այդ աշխուժ տղան: — Մարդը զարմացած հայեցաւ ինծի: Զարմացած մարդը հայեցաւ ինծի: Զարմացած՝ մարդը հայեցաւ ինծի: — Յամառ կը հայէր

խօսակցի դէմքին: Կը նայէր դէմքին յամառ խօսակցի: Կը նայէր յամառ՝ խօսակցի դէմքին:

Կը լսուէր համաչափ արօժիւր ձիերուն: Կը լսուէր ձիերուն համաչափ արօժիւր: Կը լսուէր համաչափ՝ ձիերուն արօժիւր:— Մօտեցաւ ձիերունին ձեռքերը դողդոջուն: Դողդոջուն ձեռքերը մօտեցուց ձիերունին: Ծերունին դողդոջուն՝ մօտեցուց ձեռքերը:

Շէյխը հիւրին հետ կը վարուէր աղնիւ ձեւերով և այդ աղնիւ վարմունքովը սիրիլի եղաւ անոր: Հիւրը ինքն ալ աղնիւ կը վարուէր:

Անտառէն ազմուկ մը կը լսուէր անոնիլ: Ահոնիլ անտառէն ազմուկ մը կը լսուէր: Անտառէն կը լսուէր անոնիլ ազմուկ մը: Լսուող ազմուկն էր անոնիլ: Ահոնիլն ազմուկ մըն էր, թէ անտառը:

Հրգեհաշէջները կատարեցին իրենց պարտքը սքանչելի անձնուրիութեամբ: Հրգեհաշէջները սքանչելի կատարեցին իրենց պարտքը մեծ անձնուրիութեամբ: Անոնք սքանչելի կերպով կատարեցին իրենց պարտքը:

77. Գրե՛ Գախադասութիւններ անուն մակդիրներով, գրե՛ նոյնպէս դերբայ մակդիրներով:

78. Գրե՛ զոյգ Գախադասութիւններ, ուր միեւնոյն բառը անգամ մը մակդիր ու անգամ մը մակբայ գործածուած ըլլայ:

79. Ընդգծե՛ դերբայ մակդիրները իրենց մասնաւոր լրացուցիչներուն հետ:

Պարտիզպանի կողմէն այսօր մեզի զրկուած ծառատունկերը մեզի համար չեն եղած: Մեզի համար են եղած միայն փոքրիկ թաղարններուն մէջ գրուած վարդենիները:

Կիսադալար ճիւղերու հսկայ գէղ մը շտկած գիւղացին ծանր քայլերով թաւուաքէն դուրս եկաւ: Կտրած ճիւղերու հսկայ գէղ մը չալկած՝ գիւղացին թաւուաքէն դուրս եկաւ:

Նկարիչը վերցուց զոյնդոյն ներկերով քսմաւած երանգապնակը և մօտեցաւ պատատին: Իր աշխատանքին մէջ թաղուած արուեստագէտը չնկատեց, որ մէկը կիսովին լրացուած դրան ձեղքէն իրեն կը դիտէր:

Շարունակ սուտ խօսող մարդուն տունը կրակ է ինկեր. բայց իր խօսքին ու ազմուկին հաւատացող չէ հղեր:— Ուրիշներուն խօսքին չհաւատացող մարդը պէտք չէ դարմանայ. Երբ իր ըսածին ալ ականջ կախող չըլլայ:

Իր հիւրերը հնար եղածին չափ մեծ պատուով բնդունուելու սրտշումը գործադրել չկրցաւ մարդը. հիւրերը եկան առանց նախապէս որեւէ լուր տրուած ըլլալու:



ՅՕ. Գրե՛ք նոյն հիմնական նախադասութիւնները միայն ընդգծուած մակդիրները իրենց մասնաւոր լրացուցիչներուն հետ դուրս ձգե՛ք. փոխառեանքը եղանակէն նոր պերբայ մը դի՛ր իրեն յատուկ մասնաւոր լրացուցիչներով, որ անուրիս իմաստին յաւմարի:

ՅԶ. Ուղղական հոլով մակդիրները հոլովական մակդիրի մը վերածե՛ք՝ առանց խօսքին իմաստը փոխելու:

Նրւէր բերաւ տասնեակ մը արծաթ դրաք — Միտաքս հագուստ էր հագեր: Զուրը աւելի զով կը մնայ կաւ ամաններու մէջ — Հիւսանց իր նշանածին համար զոյգ մը բուրդ գուլպայ — Եղբայրդ շնորհք ունեցող մարդ է: — Խնկացի կենդանիներու շարքէն է և էշը: — Նոր վերջացուցի երեք հատոր վիպի մը ընթերցումը: — Եռագոյն դրոշակը կը ծածսնէր խորհրդարանին վրայ: — Մանիշակի գոյն բանկունակ մըն էր հագած: — Այս տարի մերինները վարձեր են պարտիզաւոր և երկյարկանի տուն մը: — Առիւծ մարդ մըն էր վաշտին պետը, որ իր կրակ աշքերը գամեց նորեկին վրայ:

ՅՃ. Կրճաթե՛ք մակդիրուած բառերը առանց իմաստի փոք պահպանելու:

Փշրւած կտորները կ'ուտենք անմիջապէս, իսկ ամբողջ մնացած կտորները կը տանինք հետերնիս: — Մեր տղաքներուն ըսէ՛, որ վեր գան, իսկ ինքզ մնացի՛ր պարտէզը փոքրիկ տղաներուն հետ: — Հետու տեղերէ շնորհաւորանքներ ստացան: — Փոս տեղերուն մէջէն ստուեր մը շարժեցաւ: — Տո՛ւր յարգանքներս մեր բոլորիս սիրելի անձներուն: — Իզուր կը կարես բարակ ասեղով. այս տեսակի կտրերը աւելի աղէկ է կարես հաստ ասեղով: — Տգէտ մարդիկը մեծամիտ կ'ըլլան: — Գիտուն մարդոց և իրենց դուրձը սիրող մարդոց յատկութիւնն է համեստութիւնը:

ՅԵ. Վերականգնե՛ք մակդիրուածը:

Մաշուած կօշիկներուն փոխարէն նորերը գնեցինք: — Պարապ դոյլերը վա՛ր տար և լեցունը վե՛ր բեր: — Հասած պտուղները շատ արժէքաւոր սնունդ են մարդուն՝ իսկ խակերը ընդհակառակը՝ մեծ վնաս: — Կուշտը քաղցածին մանր կը փրթէ: — Պզտիկները կը հետեւին սովորաբար մեծերու օրինակին: — Դեռ աջը ձախէն զանազանել չըզդիտեր: — Մօտեցաւ ու համբուրեց հայր-սուրբին աջը: — Սեւ մեղան հատեր է, ստիպուած եմ գրելու կապոյտով: — Դիւրին խնցիրներէն կամաց-կամաց կ'անցնինք դժուարներուն:

Բ. ՔԱՆԱԿԱԿԱՆ ՄԱԿԴԻՐ

Ա. Քանակական կ'անուանենք այն մակդիրները, որոնք մակդիրուածի քանի՞ հատ, քանի՞երրորդ, քանի՞ական, քանի՞պատիկ կամ որչափ բլլալը ցոյց կու տան, այսինքն բանի մը թիւն ու համարը, չափն ու կշիռը, բաշխումն ու կարգը:

Քանի հասար ցոյց տըւողը կը կոչենք թըւական մակդիր. քանիականն ու քանիպատիկը ցոյց տըւողը՝ բաշխական մակդիր. քանիերրորդը ցոյց տըւողը՝ դասական մակդիր. իսկ չափն ու կշիռը ցոյց տըւողը՝ չափական մակդիր:

Բ. Թըւական մակդիրներն են.

1. Ամբողջ թիւերը՝ մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, հոթը, ութը, ինը, տասը, տասնմէկ, տասերկու, տասերեք, տասըչորս, տասըհինգ... քսան, քսանմէկ, քսաներկու, քսաներեք, քսանըչորս, քսանըհինգ... երեսուն, քառասուն, յիստուն, վաթսուն, հոթանասուն, ութսուն. ինըսուն, հարիւր, հազար, միլիոն, բիլիոն և իրենց բաղադիրները:

2. Կոտորակ թիւերը՝ կէս, մէկ.երրորդ, երկու.երրորդ, յառորդ, երեք.քառորդ. մնացածը նախ կ'անուանենք համարիչը, և ետքը յայտարարը վրան աւելցնելով երուդ մասնիկը. ճերկու-հինգերորդ-մէկ-վեցերորդ, հոթը-տասնըհինգերորդ:

Տասնորդական կոտորակներուն մէջ նախ կ'արտասանենք ստորակէտէն ետքը եկող թիւը և ետքը տասնորդի, հարիւրերորդ, հազարերորդ և այլն, նայելով թէ ստորակէտէն ետքը քանի թիւ կայ:

3. Անորոշ թըւական քանակութիւններ, որ կ'ըստանանք երեք ձեւով.

Նախ՝ իմաստին անորոշութիւն տըւող քանի մը յատուկ մակդիրներով. չաա, քիչ, որչափ, որքան, քանի՛-քանի, քանի մը:

Երկրորդ՝ մօտ, շուրջ, իբր, հազիւ, գրեթէ քստերը գնելով թըւական մակդիրին առջեւը:

Երրորդ՝ քաւր, քսան, քառսուն, հարիւր, հազար քստերը գործածելով իրեն չափադանդում. «Հազար անդամ կրկնեցինք». «Տասը մարդով կոռւի չերթըցուիր»:

Չորրորդ՝ իրար յաջորդող միաւորները, հնգեակները կամ տասնեակները միասին գնելով. մէկ-երկու, երեք-չորս, տաս-տասնըհինգ, տասը-քսան, երեսուն. քառասուն:

Բոլոր թըւական մակդիրները կը գործածենք եզակի և առանց որեւէ յօդի ու հալովի: Բոլոր թըւական մակդիրներուն մակդիրուածները իրենք ալ եզակի կը դրուին, եթէ իրենց վրայ որսչիչ կամ գիմորոշ յօդ չունին. եթէ այդ յօդերէն մէկը ունին՝ կրնան դրուիլ եզակի ալ, յօդնակի ալ: «Հարիւր զինուոր քաղաքը գրաւեցին»։ «Հա-

քիւր զինուորները քաղաքը զրաւեցին»։ «Քանի մը մարդ կար միայն և այդ քանի մը մարդիկն ալ շուտով ցրուեցան»։

Գ. Բաշխական մակդիրները կ'ըլլան՝

1. Բաժնող բաշխականները, երբ թըւական մակդիրին վրայ աւելցնենք ական մասնիկը՝ մէկ-ական, երկու-ական, տասն-ական կադին»։

Բաժնող բաշխականների կ'ըստանանք նաև թիւերու պարզ կըրկ-նութեամբ՝ մէկ-մէկ, երկ-երկու, երեք-երեք, չորս-չորս եւայլն։

2. Բազմապատկող բաշխականներ կ'ըստանանք պատիկ մասնիկի յաւելումով թըւական մակդիրին վրայ՝ երկպատիկ, եռապատիկ, քառապատիկ, հինգապատիկ եւայլն։ Առաջին երեքին համար կը գործածուին նաև կրկնակի, եռակի ու քառակի ձեւերը։

Դ. Դասական մակդիրները ցոյց կու տան մակդիրութեան քանի-երրորդ ըլլալը շարքին մէջ։ Դասական մակդիրներ կ'ըստանանք ամբողջ թիւերուն վրայ, հինգ թիւէն սկսած, աւելցնելով երորդ մասնիկը. վեցերորդ, տասներորդ, տասնութերորդ. հարիւրերորդ։

Բացառիկ կազմութիւն ունին առաջին չորս գասականները՝ առաջին (փոխտնակ մէկ-երորդ), երկրորդ (փոխտնակ երկուերորդ), երրորդ (փոխտնակ երեքերորդ) և չորրորդ (փոխտնակ չորսերորդ)։

Թիւով չկազմուող և միայն յարաբերական կերպով բանի մը կարգը որոշող դասական մակդիրներն են՝ նախորդ, յաջորդ, հետեւեալ, վերջին, վերջոյնքեւ կամ նախավերջին և յետին։

Ն. Մակդիրութեան ծանրութիւնը, երկարութիւնը ու ծաւալը որոշելու համար իբրև չափ ծառայող իրերը իրենց առջեւի թըւին հետ կը կազմեն չափական մակդիրները։

Իբրև չափ ծառայող առարկան կը դրուի թըւական անունի ու մակդիրութեան բառին մէջտեղը։ Միայն մէկ բառի տեղ երբ մը գործածենք ընտանացար կը դրուի թըւականը չափ ծառայող բառին ետեւը։ «Երկու բաժակ զինի»։ «Կաթիլ մը արիւն»։ «Քանի մը տակառ ջուր»։ «Մէկ-երկու արշին կտու»։ «Արտ մը ցորեն»։ «Շիշ մը ձէթ»։ «Երկու շիշ քաղախ»։ «Հինգ պուխ ոչխար»։ «Երեք տուփ լուցիկ»։ «Ութը կրամ ոսկի»։

Այս իբրև չափ ծառայող առարկաներն ալ միշտ կը դրուին եզակի և անյոգ։ Եւ կրնան ունենալ իրենց մասնաւոր մակդիրները. «Լեցուն բաժակ մը ջուր»։ «Երկու լիւ տուփ կաւիճ»։ «Տասը անգլիկան մղոն տարածութիւն»։

Թըւական մակդիրներուն մակդիրութեամբ երբ կը զեղջըւի՝ անոր թիւը, հոլովը, յոշն ու կցորդը կ'անցնին մակդիրին, որը սակայն կը դադրի այլեւս մակդիր ըլլալէ. «Հինգէն» (հինգ հոգիէն) ստացածս տըւի վեցերորդի մը (վեցերորդ անձի մը)։

Մասնաւորապէս չափական մակդիրներով այս ձևի կրճատ գործածութիւնը չափազանց սովորական երևոյթ է կենդանի խօսքի ընթացքին. «Երկու բաժակով (երկու բաժակ գինիով) հաշիւս մաքրեցի»։ «կողով մըն ալ (կողով մը թուղ) մենք քաղեցինք»։ «Դժուար մը անգամ չկերաւ»։

84. Թիւերը գրե՛ բառերով։

5. 50. 500. 550.

11. 12. 13. 14. 15. 16. 17. 18. 19.

31. 32. 33. 34. 35. 42. 43. 44. 45.

20. 30. 40. 50. 60. 70. 80. 90.

100. 700. 1.000. 3.000. 14.000. 50.000.

$\frac{1}{2}$. $\frac{1}{4}$. $\frac{3}{4}$. $\frac{1}{3}$. $\frac{2}{3}$. $\frac{2}{5}$. $\frac{3}{5}$. $\frac{6}{7}$. $\frac{7}{9}$.

3 5. 2.25. 6.75. 0.50.

10.709. 103.067. 13.050.670.

85. Հաստատու քանակական մակդիրները փոխաբերե՛նք անորոշ կամ մօտաւոր քանակականներով։

Ժողովին ներկայ էր 25 հոգի։— Անտառին քովէն կ'անցնէին երկու գիւղացի և երեք կին։— Տասնըհինգ հազար մարդ վնասուեցաւ վերջին գետնաշարժէն։— Երեք հոգիով սեղան նստանք։— Գնածիս հինգ-վեցերորդ մասը անպէտք դուրս եկաւ։— Բերածիս ուղիղ կէսը ճամբին թափեր է։— Արշինը ինծի նստեցաւ 98 սանտիմ։— Չորս բաժակ խմածիս պէս՝ գլուխս դառնալ կ'ըսկսի։— Այս ծառը հերու տասնըհինգ կողով պտուղ տրւաւ։

86. Մօտաւոր քանակականները վերածե՛ք հաստատու քանակականների։

Մեծ մասը անպէտք եղաւ։— Կէսի չափը ետ պիտի տամ։— Երեք-չորս հոգի կը պտտէին ծառերուն տակ։— Շուրջ եօթանասուն մարդ հաւաքուեր էին արդէն։— Քանի մը ծաղիկ փրցուցի, մէկ քանի հատ ալ ոստ ու սէջ և բուսական մեծկակ փունջ մը չինեցի։— Քանի-քանի անգամներ խորհած եմ այդ մասին և հազար անգամ ալ զգուշացուցի եմ քեզի, բայց իղուր։— Այդ մեծ գաղափարի յաջողութեան համար բիւրաւոր մարդիկ են աշխատեց, հազարաւոր մարդիկ իրենց ունեցածը վրայ են տրւեր և ինչքան-ինչքան երիտասարդ կեանքեր զոհ են գացեր։

87. Թիւերուն տեղը դի՛ր իր դասականը, ուր կարելի է։

Քրիստոնէութիւնը մտաւ Հայաստան (4) դարուն սկիզբը։— Տիգրան Մեծ կ'ապրէր Քրիստոսէն առաջ (1) դարու քառորդին։— Ռուսները մտան Հայաստան տաւջին անգամ (19) դարուն սկիզբը։— Դեռ չեմ կարդացիր այդ վէպին (2) հատորը, իսկ (3) հատորը կարճեմ

դեռ չէ հրատարակուած: — Քրիստոսի (1451) թըւին թուրքերը գրաւեցին Պօլիսը: — Ես ծնած եմ (1923) թըւին: — Վերջին մեծ միջազգային պատերազմը սկսւաւ (1914) թըւին և վերջացաւ (1918)-ին: — Քաղաքատունի թաղաւորութիւնը հիմնըւեցաւ (9) դարուն և տեւեց մինչեւ (11) դարուն կէսերը: — Իսկ մեր կիլիկեան թագաւորութիւնը կը տեւէ (11)-ի կէսէն մինչեւ (14) դարուն (70)-ական թըւերը:

ՅՅ. Դի՛ր շափական մակդիրներ կէսերուն տեղը:

Երկու... կտաւ: — Երկու մեծ ... ձուկ: — Քանի մը ... ափին: — ... աղի արցունք: — Երեք... նոր հագուստ: — Տասը ... ձմերուկ: — Վեց... լուցիկ: — Մէկ-երկու... բողկ: — Երկու փոքրիկ... օղի: — Մեծ... պաղ օշարակ: — Քանի մը ... գուլպայ: — Հինգ... զինուոր: — ... ասուր: — Երեք ... հաց: — Հինգ... ցոյն: — Չորս ... միս: — Յիսուն ... ճամբայ: — Տասերկու... ապրանք:

ՅԶ. Յօրինե՛ք քրաբանական խնդիր մը, ուր գործածուած ըլլան մինչեւ հինգ ամենէն սովորական հասարակ կոտորակները. բոլոր քիւերը պիտի գրես բառերով:

ԾԾ. Հետեւեալ կտրի իւրաքանչիւր բառը իր ետեւի կէտին հետ կը գրես նոր տղի մը սկիզբը եւ ետքը կը նշանակես, քի այդ բառը նախադասութեան ո՞ր անդամն է, ո՞ր տեսակը եւ անմիջապէս ո՞ր բառի հետ է կապուած:

Դիւղացին ջերմեռանդ աղօթքով հանեց գոգնոցէն բռն մը ցոյնն ու նետեց առաւօտեան թարմութենէն մխաթող ցեղերուն մէջ:

Գ. ՅԱՏԿԱԿԱՆ ՄԱԿԴԻՐՆԵՐ

Երբ անուն մը կը դրուի ուրիշ անունի մը վրայ անոր ո՞րը ըլլալը որոշելու համար իր նմաններուն մէջէն՝ այդ վրան դրուած բառը կը դառնայ յատկական մակդիր:

Յատկական մակդիրները հինգ տեսակ են՝ ա) ցուցական, բ) ըստացական, գ) յատկացուցիչ, դ) յատուկ-անուն և ե) բացայայտիչ մակդիրներ:

Ա. Ցուցական մակդիրները կ'որոշեն բանի մը ո՞րը ըլլալը պարզապէս մատնանիչ ընելով, ցոյց տալով:

Այդ մատնանիչ դերը կը խաղան՝

1. Ցուցական դերանունները ամենէն առաջ. այս, այդ այն. աս, առ, ան. սա, դա:

2. Բաղդատական դերանուենները. այդպէս, այդպէս, այնպէս. այսպիսի, այդպիսի. այնպիսի. աստեկ, աստեկ. անանկ ասեկ,

3. Անորոշ դերանուենները. այսինչ, այնինչ,

4. Ձեւ, եղանակ, կերպ, ճեսակ, անուն, համ, գայն բառերուն ուղղական, տրական կամ գործիական հոլովները այս ու այդ ցուցական դերանուեններուն հետ. «Այս ձեւ, այս ձեւի կամ այս ձեւով ղէնք մը». «Այս անուն, այս անունի, կամ այս անունով մէկը». «Այս գոյն, այս գոյնի կամ այս գոյնով գլխարկ մը»:

Բ. Անցակամ մակդիրները ստացական դերանուեններն են, որոնք մակդիրութեամբ որուն վերաբերիլը ցոյց կու տան՝ խօսողին, լսողին թէ ուրիշի՞ մը:

Ուրեմն ստացական մակդիրներն են նախ՝ իմ, քու, իր, մեր, ձեր, իրենց. և երկրորդ՝ ցուցական դերանուեններուն տրական հոլովները փոխառաբար՝ անոր ու անոնց, ասոր ու ասոնց, ասոր ու ասոնց:

Գ. Յատկացուցիչ մակդիր կը դառնան անխտիր ամեն տեսակի անուններուն տրական հոլովները երբ ուրիշ անունի մը առջեւ կը դրուին՝ այդ մակդիրութեամբ որունը ըլլալը, որուն վերաբերիլը. ինչ տեսակի գործածութեան յատկացում ըլլալը. ուրիշ առարկայի մը հետ ինչ դիրք ունենալը ցոյց տալու համար. «Մինասին գիրքը». «Բրոջս ընտանիքը». «Տուփին կափարիչը». «Նեղութեանս վերջը». «Աշխարհքին ծայրը». «Շան ձագուկը». «Ոչխարի բուրդը». «Աչքի բիթը». «Վերի յարկը». «Մէջի կորիզը». «Բովի խոնովը». «Տակի թուղթը». «Ճամբու պայուսակը». «Մախելու ապրանքը»:

Դ. Յատկ. անունի մը որակական ու դասական մակդիրները շատ անգամ կ'անցնին յատուկ-անունին ետեւը, որով իրենք կը գըրաւեն նախադասութեան մէջ մակդիրութեամբ բառին պաշտօնը, իրենք է որ իրենց հոլովով, կցորդով ու յօդով կը պատասխանեն ստորոգիչի հարցին. իսկ յատուկ-անունը ինքը կը մնայ առջեւ. միշտ եզակի ու միշտ ուղղական և կը խաղայ մակդիրի դերը. աս է, որ կ'անուանենք յատուկ անուն մակդիր: «Տիգրան Մեծով Հայոց Պատմութիւնը կը մտնէ նոր յրջան մը». «Արա Գեղեցիկի սիրուն պատմութիւնը Հայոց Ըմբռնումը կը մարմնաւորէ ընտանիքի մասին». «Վառմշապուհ թագուորէն մեծ օժանդակութիւն գտաւ Մաշտոց վարդապետը». «Լևոն վեցերորդէն ետքը այլեւս չունեցանք հայ թագուոր». «Մասիս լեռնէն». «Արաքս գետով». «Ակլա բերդին պարիսպները». «Թիֆլիս քաղաքը». «Եփրատ հրատարակչական ընկերութիւնը». «Արմենիո շոգենաւով մեկնեցաւ». «Անի ճաշարանին քովի առնը»:

Ե. Մինչև հիմա յիշուած ամեն տեսակի մակդիրները ունին նաև աւելի անկապ արտաքինով, յաւելումական ձեւով գործածութիւն մը. կարծես փակագծի մէջ կամ ետքէն վրան աւելցած՝ նախորդ

ըսուածը կարկտանով մը լրացընելու համար: Այսպէս «Ես կորսըն-
ցուցեր եմ նոր գնած գիրքս» — Ես կորսընցուցեր եմ գիրքս՝ նոր գնա-
ծրս — Ես կորսընցուցեր եմ գնած գիրքս՝ նորը»: «Առաջ եկաւ ամե-
նէն բարձրահասակ տղան — Առաջ եկաւ տղան՝ ամենէն բարձրահասա-
կը»: «Առաջարկս ընդունեցին բոլոր չորսն ալ — Առաջարկս ընդունե-
ցին բոլորը՝ չորսն ալ»: «Եւ այսպէսով յաղթեց Լեւոն թագաւորը —
եւ այսպէսով յաղթեց Լեւոնը՝ քաղաւորը — Եւ այսպէսով յաղթեց
թագաւորը՝ Լեւոնը»:

Այսպէս յաւելուածական ձեւով և կարծես կիսանկախ թերատ
նախադասութեան մը պէս անունի մը իմաստը լրացընող մակդիրնե-
րը կ'անուանենք բացայայտիչ մակդիր:

Բացայայտիչ մակդիրները կ'ըլլան երեք տեսակի.

1. Իրենց մակդիրութեան կը յաջորդեն անմիջապէս առանց որեւէ
միջնորդի: Ատոնք բութով մը կը զատուին մակդիրութենէն և բութ
մըն ալ կ'ըստանան իրենց ետեւէն, եթէ նախադասութեան բերումով
հոն ուրիշ կէտ չկայ. «Մարդիկ եկան Քարամուսէն՝ ընդդէն՝ դեռ
գիշեր չեղած»: «Եւ ամենքը իրաւունք տըւին Միքայէլին՝ մեր դըռ-
նապանին, որ ագնիւ տղայ մըն է»:

2. Անկապութիւնը նըւազեցընելու և իմաստը աւելի յստակ դար-
ձընելու համար բացայայտիչ մակդիրին առջեւը կը դնենք այսինքն
շաղկապը և շաղկապէն տույժ սփռակէտ մը, մանաւանդ երբ բացա-
յայտիչ մակդիրը մէկ-երկու բառով է կազմուած: «Բանալին յանձ-
նեցինք հոն կեցած մարդուն, այսինքն պարտիզպանի նորեկ օգնա-
կանին»: «Հովը անուշ չունէ մը կը փչէր այդ ծաղկած ծովուն երե-
սէն. այսինքն այդինքու ծփուն կատարներէն»:

3. Անկապութիւնը մեղմելու երկրորդ միջոցը իբրեւ կցորդն է,
որ կը գրուի բացայայտիչ մակդիրին առջեւը: Այս ձեւով բացայայ-
տիչը կրնայ գրուիլ նախադասութեան մէջը, սկիզբը կամ վերջը:
«Բացատրութիւն կը պահանջէին եղբորմէս. իբրեւ տնօրէնէ — իբրեւ տը-
նօրէնէ բացատրութիւն կը պահանջէին եղբորմէս». «Եւ եղբայրս հա-
շիւ պիտի տար անոնց, իբրեւ այդ մեծ ընկերութեան ներկայացու-
ցիչներուն — Եւ իբրեւ այդ մեծ ընկերութեան ներկայացուցիչներուն
եղբայրս հաշիւ պիտի տար անոնց»:

Բացայայտիչ մակդիրը միշտ թիւով, յօդով ու հոլովով կը հա-
մաձայնի իր մակդիրութեան, կ'ուզէ անմիջական ըլլայ, կ'ուզէ այ-
սինքն-ով կամ իբրեւ-ով:

❶. Ընդգծե՛ բոլոր մակդիրները. յատկանշե՛ր երկու գծով:

Այդ աշխատանքը մեր ուզած արդիւնքը առաջ էր կրնար — իմ
և ուղեկցիս իրերը թողնու հնք քու սենեակդ: Եղբորս տղաք ի-
րենց մեկնելէն առաջ հօրս հասցէին երկու սիրալիր տող էին ձգեր: —

Մեր հարեւանի ընդարձակ այգին տաւը տարով վարձու են տրւեր: — Այդպիսի կոպիտ վարմունքը դիւրաւ չի մարսւիր: — Մեր կարգի բոլոր աշակերտները յաջողութեամբ փոխադրուեցան վերի կարգը:

Այդ կարգի խօսքերուն ականջ կախելու է: — Պահապանի տան դրան քովը շան փոքրիկ սնուկ մը կայ: — Դրոշմը ազնիվը խոշոր փետուր մըն էր ցցեր իր գլխարկին ծայրը: — Գրադարանին վարիչը յանձնարարեց ինծի այս գիրքը. վէպի մը երկրորդ հատորն է. ըսաւ՝ մեծ կապ չունի իր առաջին հատորին հետ: — Նայէ՛ տե՛ղամ մը սա ծառերու սքանչելի գեղեցկութեանը. նայելու ատեն կարծես մարդուս աչքերը կը հանգստանան: — Ուրիշներու գործերովը զբաղուելը պարապ մարդու գործ է:

ՅԶ. Բաց ճեղերը դի՛ր յաւմար ցուցական կամ սացական մակդիր մը:

Մեծ օգուտ մը չունեցան ... խօսքերը: — Հիմա գործածութենէ ինկած են... հազուստները: — ... վարմունքը դատապարտելի է: — ... գետակը կ'անցնի ... հողերուն մէջէն: — ... դիպուած չի կրկնւիր ամեն օր: — ... կարգադրութիւնները ապարդիւն անցան: — ... դպրոցին մէջ ... դասարանը ամենէն բազմաթիւն է: — ... աշխատանքը չի վարձատրիր ... րեւած չահը:

ՅՅ. Վերի նախապատրիւները նորէն արեւագրէ՛ կեցերուն ճեղը յակացուցիչ մակդիր մը դնելով:

ՅԶ. Հետեւեալ օրինակներուն մէջի որակական մակդիրները փոխարինէ՛ յակացուցիչ մակդիրներով առանց իմաստը փոխելու, ուր որ կարելի է:

Ի՛նչ գեղեցիկ են յաճախ ծովային ժժմակները: — Նըւազ հրապուրիչ է նաեւ բուսական աշխարհը: — Պրանսական ժողովուրդը քառասուն միլիոնի շուրջն է: — Արդէն սկսած են կարգաւ ու վերածանել վանեան սեպածեւ արձանագրութիւնները: — Երեք հազարամեակի տեւողութիւն ունի առնուազն Հայ պատմութիւնը: — Անգլիական ամենաթանկագին գանձերէն մէկը կը կազմեն Շեքսպիրի երկերը: — Ո՞ր դարուն մէջ կ'իյնան եւրոպական երեսնամեայ պատերազմները: — Միւր առեւտրական վարժարանը եռամեայ դասընթացք ունի:

Եւ այդպէս իզուր ոչնչացաւ մեր երկամեայ աշխատանքին պտուղը: — Ո՞վ էր Արաւշխեան հորստութեան հիմնադիրը: — Մինչև ժ.Դ. դարը Հայաստանի մէջ տիրողն էր նախարարական պետական կազմը: — Ամեն աշակերտէ բուսական կլոր գումար մը կը պահանջեն գրեհական պիտոյքները: — Ամսական հկամուտս հազար ֆրանկէն անդին է: — Հիմա ամեն տեղ դպրոցներուն մէջ ուշ կը դարձնեն ձեռական աշխատանքներուն: — Պէտք էր նախ ուսումնասիրելինք ջրերուն ստորերկրեայ հոսանքները: — Զրոյին բոյսերուն տեսակները շատ են:

ՊԾ. Ընդգծե՛ք տալիս խնդիրները մեկ գծով, յատկացուցիչ մակդիր-ները երկու գծով:

Այս արտը կը պատկանի մեր փեսային. մեր փեսայի արտն է անիկա: — Կայսեր բաները տըւէ՛ք կայսեր, Աստու թաները տըւէ՛ք Աստուէն, ըսաւ Յիսուս: — Մեր տան երկրորդ յարկի բնակիչները շատ են հաւներ առաջին յարկին, հոն տեղափոխուել կ'ուզեն: — Ի՞նչ ըսել կ'ուզէ առածը՝ «Ալիի գլխարկը անցո՛ւր Վալիին, Վալիի գըլ-խարկը անցո՛ւր Ալիին»: — Մի՛ խառնըիր դուն գործին ուրիշներու. քունը չեղած գործը ձգէ՛ ուրիշներու: — Թուղթին կտորը փակցուց ճակտին. փակցուց ճիշդ մէջտեղը ճակտին: — Այսպէսով հին բարե-կամի մը բարեւները կը յանձնեմ նոր բարեկամի մը, որ տանի հին բարեկամին: — Շատ սիրուն էր ձեռքի պրիչը: Գրիչը շատ սիրուն կը վայելէր ձեռքին: — Հացթուխին աշկերա տըւաւ իր քրոջը տղան: Հացթուխի քրոջը տարաւ տղան: Դրոջը տարաւ հացթուխի տղան: Հացթուխին ու քրոջը տարաւ տղան: — Սեղանին սփռոց մը փռէ՛: Սեղանին սփռոցը փռէ՛: — Աշակերտներուն նոր խնդիր մը տըւի այսօր. աշակերտներուն նոր խնդիրը դուն ալ պէտք է լուծես:

ՊԹ. Մակդիրները բե՛ր իրենց սովորական ճեղը հետեւեալ բանա-սեղծական կամ նախասանական պահանջներով գրուած նախադասու-թիւներուն մէջ:

Վարդեր շատ եմ տեսեր ես կարմիր, բայց չէի տեսեր վարդ մը դեռ այսքան կարմիր: — Հիմա տէրն օրէնքի դարձեր են մատերը մեծամասնութեան: — Գեղեցիկ ծրագիրներ այդ կարգի ամեն գլխու մէջ ալ կը ճարուի: Թանձնեց տուփը դեսպանին՝ ձեռքերով դողողջ: — Զայնով մը խզուած կեցցէ՛ կը պոռար: — Նստեր էր գետին մա-նուկ մը սիրուն: — Բերէք շուտով մեզի գինի երկու բաժակ: — Եւ կը նայէր վերէն լուսինն անտարբեր: — Երկու գիրք են տըւեր ա-նոր. ան նստեր է, կը թղթատէ իր գրքերը նոր:

ՊՇ. Այնպէս փոխէ հետեւեալ նախադասութիւնները, որ յատուկ ա-նունները դառնան յատուկ անուն մակդիրներ առանց խօսքի իմաստը փոխելու:

Դպիր Արգարը առաջինը եղաւ հայերէն գիրք տպագրող: — Նախարարներուն գլուխը անցաւ զօրավար Վարդանը: — Եկողը Յա-կոբն էր՝ վարժապետը: — Շուտով գրաւեցին Արտագետը, այսինքն ամրոցը: — Աշոտ մտաւ Սեւան, այսինքն կղզին: — Ներկայ էր նիս-տին նաեւ Արամը՝ ներքին գործերու նախարարը: — Ընտրուեցու-նաեւ Արտաշէսը՝ Սմբատեան: — Խուճիւն առջեւէն կ'երթար Ակօն խմբապետը: — Մեր պատմիչներէն Խորհնացի Մովսէսը, Փարսիցի Ղազարը, Լաստիվերտցի Արիստակէսը, Գանձակեցի Կիրակոսը բոլորն ալ հոգեւորականներ էին, նոյնպէս կաթողիկոս Յովհաննէսը: — Մեր

հին գրականութեան մէջ յաճախ կը յիշուին յոյն փիլիսոփայ Արիստոտէլը, ասորի Նեստորը և պարսիկ Մանիքէն: — Այս բոլոր գրքերը հրատարակութիւնն են մէկ ընկերութեան մը՝ Թիֆլիզի Հրատարակչականին:

ՅՅ. Հետեւեալ կտորի ամեն ճշտակ մակդիրները դարձուր բացայայտիչ մակդիր:

Ստիպուած եմ կարդալու անպիտան թարգմանութեան վրայ: Շատ սիրուն պատմական ողբերգութիւն մըն է: — Լսիր եմ, որ աներգ ականակոռ շքանշան մըն է ստացիր: — Վա՛ր թեր, խնդրեմ, իմ գաւազանս: — Ես չատ կը սիրեմ այս անասի ուշիմ մանուկները: — Եւ գնաց մինչև թաթարներու խանին դուռը Հայոց Հիթում թագաւորը: — Փոքրիկիս համար երկու ձեռք հագուստ գնեցիր: — Քսանը՜նիւ մղոն ճամբայ կտրեցին միասին: — Երբեք քեզի հետ մէկ երկու բաժակ կարմիր գինի կոնծեն: — Երթամ պիտի այսօր ալ մեր վերի այգին: — Ինը հարիւր անգամ միծցնող զեղեցիկ մանրագէտ մը գնեցիր:

Դ. ՊԱՏԿԱՆԻՉ ՅՕԴ

Ա. Յատկական մակդիրներէն յատկացուցիչը ուրեմն տրական հոլով մըն է միշտ, որ կը գրուի ուրիշ գոյականի մը առջեւը և ցոյց կու տայ այդ գոյականին պատկանելութիւնը, այսինքն որսն պաշտականիլը, որուն վերաբերիլը, ինչ բանի յատկացուած ըլլալը կամ ուր գտնուիլը. Գեւորքի տունը. գիւղին ճամբան, խանութին ապրանքը, դարակի գրքերը, տանելու փունջերը, այս ամսըւան եկամուտը:

Երբ նախընթաց խօսքին իմաստը թոյլատրէ և միտքը հասկընալի մնայ՝ այդ պատկանելութիւն ցոյց տըւող բառին կապուած անունը կրնայ զեղջըլիլ. այն ժամանակ զեղջըւած բառին թիւը, հոլովը և յօդը կու գան, կ'աւելնան նախորդ տրական հոլովին վրայ: Այսպէս՝ գիւղին փողոցը=գիւղ-ին-ը, գիւղին տունները=գիւղ-ին-ները, խանութին ապրանքն=խանութ-ին-էն, գրպանին թաշկինակովը=գրպան-ին-ովը, եփելու խնձորները=եփել-ու-ները, այս շարթըւան եկամուտովը=այս շարթըւան-ովը, մարդուն գլխարկը=մարդ-ուն-ը:

Եւ որովհետեւ բառերուն անհամեմատ ստուար մեծամասնութիւնը կանոնաւոր հոլովման կը պատկանի, այսինքն ի ձայնաւորով կը կաղմէ իր տրականը և ընդհանրապէս վրան որոշիչ յօդով, ասոր համար

ալ ին ձեւն է, որ մեր ականջին կը դառնայ սովորական, իբրեւ բառին և հոլովական վերջաւորութիւններուն մէջտեղը մանող մասնիկ ժը այդ զեղջուռներու միջոցին:

Բ. Եւ այն սասիճան կը շեշտուի ականջի այդ պահանջը, որ ուրիշ տեսակի արականներով կազմուած զեղջուռները միայն ուղղական կը դործածուին. միւս հոլովներուն մէջ մեր ականջին հերիք չեն գար. և մենք աւելորդ ին մըն ալ կ'աւելցնենք ընդհանրապէս՝ անոնց տրականներուն վրայ հոլովական վերջաւորութիւններէն առաջ:

մարդ-ուն գլխարկ-ը == մարդ-ուն-ը
մարդ-ուն գլխարկ-ին == մարդ-ուն-ին-ին
մարդ-ուն գլխարկ-էն == մարդ-ուն-ին էն
մարդ-ուն գլխարկ-ովը == մարդ-ուն-ին-ովը
մարդ-ուն գլխարկ-ները == մարդ-ուն-ին-ները
մարդ-ուն գլխարկ-ներուն == մարդ-ուն-ին-ներուն
մարդ-ուն գլխարկ-ներէն == մարդ-ուն-ին-ներէն
մարդ-ուն գլխարկ-ներովը == մարդ-ուն-ին-ներովը

Այսպէս ալ՝ այս տարուան բերքը = այս տարուան-ը, բայց յաջորդ հոլովներուն մէջ՝ այս տարուան-ին-ին, այս տարուան-ին-էն, այս տարուան-ին-ով. Նոյնիսկ կ'ըսենք՝ քրոջ ին-ը՝ ուղղականի համար, ընկերոջինէն, տիրոջինէն, տիրոջինովը, տաւրոջիններէն: Տղունը, տղու-նին, տղունիններովը:

Այսպէսով այդ միջնադիր ին կտորը կը դառնայ հիմնական ու առանձնայատուկ արտայայտիչը պատկանելութեան հետ կապուած զեղջուռներուն և կը կոչուի պատկանիչ յօդ: Կանոնաւոր հոլովման անթարկելող բառերուն մէջ այդ պատկանիչ յօդը կը դրուի ուրիշ բառին ուղղականին վրայ միւս յօդերէն ու հոլովական վերջաւորութիւններէն առաջ: Փոքրիկ-ին-ը, քով-ին-ին, մէջ-ին-էն, դուրս-ին-ովը, վեր-ին ները, մեծ-ին-ներուն, տոպրակ-ին-ներէն, ձեռք ին-ներովը:

Գ. Իսկ երբ պատկանելութիւնը ցոյց տուող տրականը յոգնակի է՝ բնականաբար պատկանիչ յօդը կ'ըլլայ ուն մասնիկը: Օրինակ, «մեծեր-ուն դասարանը» կը զեղջուրի՝ մեծեր-ուն-ը, մեծեր-ուն-ին, մեծեր-ուն-էն, մեծեր-ուն-ով-ը, մեծեր-ուն-ները, մեծեր-ուն-ներ ուն, մեծեր-ուն-ներէն, մեծեր-ուն-ներովը:

Միայն չզոռումաւոր յոգնակի տրական ունեցող բառերը ուղղականէն զատ միւս հոլովներուն մէջ նորէն ին-ով կը կազմուին. տղոց-ը, տղոց-ին-ին, տղոց-ին-էն, տղոց-ին-ովը, տղոց-ին-ները, տղոց ին-ներէն, տղոց-ին-ներուն, տղոց-ին-ներովը:

Դ. Երբ պատկանիչ յօդ ունեցող բառի մը տրական հոլովը ինքը կը դրուի սուրիշ անունի մը տղեւը անոր պատկանելութիւնը ցոյց

տալու համար՝ քովի անուշը կրնայ նորէն կրճատուիլ տաջացընելով
աւելի բարդ ձեւեր ինչ մասնիկի կրկնութեամբ. հետեւեալ պատկերով.

Ուշ. Մինասին պարտէզին ծառը

Մինաս-ին-ին ծառը=Մինաս-ին-ին-ը

Տրա. Մինասին պարտէզին ծառին վրայ.

Մինաս-ին-ին ծառին վրայ=Մինաս-ին-ին-ին վրայ

Բաց. Մինասի պարտէզին ծառէն

Մինաս-ին-ին ծառէն=Մինաս-ին-ին-էն

Գործ. Մինասի պարտէզին ծառովը

Մինաս-ին-ին ծառովը=Մինաս-ին-ին-ովը

Այսպէս ալ յոգնակին՝ Մինաս-ին-ին-նիբը, -ին-ին ներուն, -ին-
ին-ներէն, -ին-ին-ներովը:

Պարզ կամ կրկնակի պատկանելութեամբ իրարու օղակուած բա-
ռերէն մէկն ու մէկը եթէ իր վրայ դիմորոշ յօդ ունի՝ ւ կամ դ, այդ
դիմորոշը կը պահուի նաեւ պատկանիչ յօդ ունեցող բառին վրայ:
Այսպէս՝ «ամարանոցիս պարտէզը» կամ «ամարանոցի պարտէզս» կը
կրճատուի՝ ամարանոց ին-ս, ամարանոց-ին-էս. «գիւղիս շէնքերուն
կտուրները» կամ «գիւղի շէնքերուն կտուրները» կամ «գիւղի շէնքե-
րաւ կտուրներս» բոլորն ալ երբ կրճատուին կ'ըլլան՝ գիւղ-ին-ին-ներս,
գիւղ. ին-ին-ներ-աւս, գիւղ-ին-ին-ներէս, գիւղ-ին-ին-ներովս:

99. Ընդգծե՛ պատկանիչ յօդ ունեցող բառեր:

Քու պայուսակդ դի՛ր կառապանին քովը, իսկ Գեւորգի՛նը առէ՛ք
ոտքերնուդ տակը: Գիւղին փողոցները միշտ նեղ են ու ծուռ, քաղա-
քինները ընդհակառակը: Ձեռքի հայերէն գիրը աւելի կտոր է, իսկ
գիրքինը աւելի անկիւնաւոր: Անկողնիդ սաւանը փոխեցի այսօր,
բայց վերմակինդ մնաց վաղուան: Հարիւր ընկոյզ տուր ինծի, բայց
տոպրակինէն: Դեռ չվաստկած դրամովդ հաշիւ մի՛ տեսներ, գործդ
սկսէ՛ գրպանինովդ: Կեղծիքը ես՝ կը հասկընամ, թշնամիինը, բայց
բարեկամինէն կը դարչիմ:

100. Նախորդ հրահանգը նորեմ արագրե՛ք եւ ազատե՛ք գրուածքը բո-
լոր պատկանիչ յօդերէն:

101. Արձայայտե՛ պատկանիչ յօդերով, ուր հնար է, առանց իմաս-
տիմ յստակութիւնը պղծութիւն:

Վերարկուին թեւերը մաշուեր էին, հագուստին թեւերը՝ նոյն-
պէս: Նայէ՛, ի՛նչ գեղեցիկ է աստղերուն փայլը, նաեւ լուսնին փայլը:
Վարի դուռնէն դուրս եկաւ օրիորդը, վերի դուռնէն ալ հօրաքոյրս:
Ընտրէ՛ սեղանին վրայ եղած գրիչներէն կամ գլորոցին մէջ եղած գը-
րիչներէն: Իմ գլխարկիս տեղ դրեր եմ Յակոբի գլխարկը, բայց քու-
կին գլխարկովդ աւելի անշնորհ է իր, քան Յակոբի գլխարկովը:

102. Ազատե՛ք պատկանելի յօրերէն, օգտուելով փակագծին մէջ
դրուած անուններէն.

Նորէն սկսայ դիտել գրքիները (նկար): Շատ հաւնեցայ գրքե-
րունը (նկար): Ինծի տըւաւ գրականիները (ընկոյզ): Ինծի տըւաւ գըր-
ագաններունը (ընկոյզ): Բաւական գնեցի զամբիւղիներունէն (նարինջ),
քաւական ալ ձեղի ղրկեցի նոյն զամբիւղներինէն: Արտը վարեցին
հարեւանիներովը (եզ): Այդպէս ալ այգի ձգեցին հարեւաններունի-
նովը (եզ):

103. Եղակի պատկանիչը դարձո՛ւր յոգնակի, առանց պատկանեալի
թիւը փոխելու:

Տետրակինը. տետրակինէն. տետրակինով. տետրակինին. տետրա-
կիները. տետրակիներէն. տետրակիներով:

Յոգնակի պատկանիչը դարձո՛ւր եղակի.

Պարտէզներունը, պարտէզներունին, պարտէզներունէն, պարտէզ-
ներունները, պարտէզներուններէն:

104. Եղակի պատկանիչին պատկանեալը շտապո՛ւր.

Սեղանինը. կտուրինը. գիւղինովը. սենեակինէն. դէմինինը. վը-
րայինովը. սրբիչինը. անպիտանինէն. մատիտինովը. ձեռքինէն. մըտ-
քինովը:

105. Նախորդ հրահանգի պատկանիչ յօդաւոր բառերը գործածե՛ք
նախադասութիւններու մէջ:

106. Հետեւեալ խօսքերը նախ վերածե՛ք երկու բառի, մէկը պատ-
կանիչով. ետք կը վերածես մէկ բառի մը կրկին պատկանիչով:

Մեր այգիին խնձորները: Մինասի տան կտուրը: Դրացիին բակին
դուռը: Քովի խանութին փեղկերուն: Անոր դէմքին գոյնին: Դրքին
մէջի նկարէն: Գրքին մէջի նկարներէն: Վառարանին ունեւիին կո-
թովը:

107. Պատկանեալը վերածե՛ք պատկանիչ յօդի.

Տղոց գրքերէն. քրոջս հիւսուածքներէն. մորդուն տոպրակները.
այս տարուան նկամուտովս. եղբորդ բաժինէն. իրիկուան բերածէդ.
ճրէկուան բաժակներովը. վաղուան աշխատանքիդ:



ԵՍՐՈՒՊԱՆԻ ԴԱՏԱՆԱԾ

ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Ա. ՇԱՂԿԱՊՆԵՐ

Ա. Շաղկապ կ'ըսենք նախադասութեան այն երկրորդական անդամներուն, որոնք երկու բառի կամ երկու նախադասութեան մէջ իբրեւ կապ կը ծառային:

Շաղկապները կա'մ յատուկ անթեք բառեր են, որ միայն իբրեւ շաղկապ կը գործածուին. ինչպէս օրինակ, եւ, կամ, թէ, բայց. կա'մ անուններ են ու դերանուններ, իբրեւ շաղկապ առնուած, ինչպէս օրինակ, եւր, ուր, այլ. և կամ մէկ-երկու բառի միացումով գրաբար ու այսարհաբար քարացած ձեւեր, ինչպէս օրինակ՝ ապա թէ ոչ, անոր համար որ, որպէսզի, որովհետեւ, այսինքն:

Շաղկապները կը բաժնուին երեք տեսակի. ա) Համադրական շաղկապներ, բ) Հակադրական շաղկապներ և գ) Ստորադասական շաղկապներ:

Առնցմէ միայն համադրական շաղկապներն են, որ նախադասութեան մէջ ներքին գործածութիւն ալ ունին՝ նախադասութեան նոյն դերը ունեցող անդամներուն մէջ իբրեւ կապ ներկայանալով: Միւս երկու տեսակները գլխաւորապէս նախադասութիւն մը կը կապեն իր նախորդ կամ յաջորդ նախադասութեան և անոնց մէջ եղած յարաբերութիւնը կը ճշգրտեն:

Բ. Համադրական շաղկապ կ'անուանենք երկու բառի կամ երկու նախադասութեան մէջ դրուած գումարման կապը, որ նոր ըստուծը նախորդին վրայ կ'աւելցնէ:

1. Պարզ յաւելում մը տըւող շաղկապներն են. եւ, ու, այլ, եւս, այլ եւ, նաեւ, ասկէ զայն, բացի այդ:

2. Ընդգծուած յաւելում մը տըւող շաղկապներն են. ե՛ւ...ե՛ւ...

քի'...քի'..., ո'չ...ո'չ..., ո'չ միայն... այլեւ... «Ե'ւ կ'աշխատինք
և' կը զըւարճանանք»։ «Կորսնցուցեր է թէ' դասագիրքը, թէ' տե-
րակաները»։ «Ո'չ տեսած եմ, ո'չ լսած»։ «Ո'չ միայն պէտք է ար-
տագրես, այլ և լրացընես պիտի»։

3. Գերադաս յաւելում մը տըւող շաղկապներն են. նոյնիսկ, մին-
չեւ իսկ, մինչեւ անգամ. ...իսկ, ...անգամ, ո'չ իսկ, եւ ո'չ իսկ.
մանաւանդ՝ մանաւանդ որ, մանաւանդ քի, բոլ քի։

4. Պարզաբանող յաւելում մը բերող շաղկապներն են. այսինքն,
օրինակ, այսպէս օրինակ, օրինակի համար։

5. Եզրակացնող յաւելում մը կը բերեն՝ ուրեմն, այսպէս ու-
րեմն, ապա ուրեմն, ուր ուրեմն, ուստի, հետեւաբար, այնպէս որ, յետեւ։

Գ. Հակադրական կ'անուանենք այն շաղկապները, որոնք ցոյց
կու տան, թէ իրենց պատկանած նախադասութիւնը նախորդին հա-
կառակ կամ անկէ շեղող քան մը ունի։

1. Առաջին խումբը հակասութեան շաղկապներն են. բայց, սա-
կայն, այլ, իսկ, հապա, մինչ, մինչդեռ, ո'չ քի... այլ... չի քի. . հա-
պա (այլ)։ «Ոչ թէ վճարեցի, հապա մուրհակ մը տըւի»։ «Ձէ թէ սը-
տել կը պահանջուի, այլ կամք ցոյց տալ»։

2. Երկրորդ խումբը առարկութեան շաղկապներն են, որոնք
ցոյց կու տան, թէ նախադասութիւնը նախորդէն շեղումի մը պատ-
ճառներն ունի, բայց վճռական չէ. այդ շաղկապներն են. քեւ, քե-
պէ, քեպէսեւ, միայն, միայն քի, բայց եւ այնպէս, այսու ամենայնիւ,
չնայելով որ, կա'մ...կա'մ...։

3. Համեմատութեամբ հակադրութիւն կու տայ քան, քան քի
շաղկապը։ «Աւելի կը սիրեմ մանիշակի գոյնը, քան վարդի»։ «Կը
գերադասեմ, որ ուղղակի մերժես, քան թէ զուր յոյսեր ներշնչես»։
«Իմ աղջիկս աւելի ապրած է քնութեան մէջ, քան քու տղադ»։

Դ. Ստորադասական կ'անուանենք այն շաղկապները, որոնք ցոյց
կու տան թէ իրենց պատկանած նախադասութիւնը իրրեւ անհրաժեշտ
լրացուցիչ մըն է, իրրեւ պայման մըն է նախորդ կամ յաջորդ նա-
խադասութեան։ Ստորադասական նախադասութիւնները անկասու-
թիւն չունին, միշտ ենթարկուած ու կցուած են գլխաւոր նախա-
դասութեան։

1. Ստորադասական շաղկապներու առաջին խումբը կը կազմեն
պայմանական շաղկապները. եթէ, քի, քի որ, երբ, երբ որ, քանի,
քանի որ, մինչեւ, մինչեւ որ, քի ոչ, եթէ ոչ, ապա քի ոչ, քի չի։ «Երբ
գալու ըլլան՝ ոտքի ելէք»։ «Մինչեւ քեզի հարց չտան՝ մի՛ պատաս-
խաներ»։ «Գնա՛ տնպատճառ, թէ չէ ստիպուած կ'ըլլամ ինքս եր-

թաղուք. «Անշուշտ որ հաշիւ մը ունիմ, թէ չէ ինչու պիտի առաջարկէի»:

2. Երկրորդ խումբը կը կազմեն բացատրական շաղկապները. ուր, որպէսզի, ուրովիեցել, այն պատճառով ուր, անոր համար ուր, ինչու ուր, չե՞ ուր: Յեկաւ, որ թղթերը յանձնէ մեզի»։ «Ամեն ինչ պատմեցի իրեն, որպէսզի ապահով ըլլայ»։ «Հիւանդութենէ շատ կը վախնայ, ինչու որ ժամանակին շատ հիւանդութիւն է քաշեր»։ «Ձէ՞ որ անգամ մը եղելութիւնը ըսի քեզի, ալ ինչու՞ նորէն կը հարցընես»։

108. Զատե՛կ՝ նախադասութիւնները եւ ընկզմե՛կ տաղկապները:

Ճամբան շատ քարքարոտ էր ու թեք. թէն մութը արդէն փառատած էր բոլորովին, բայց մշուշը հաստ ու թանձր վարագոյրի մը պէս ամեն ինչ կը ծածկէր մեր աչքէն. աակէ դատ անտառախիտ բլուր մը արգելք էր մեր դիտողութեան: Բիշ-քիշ սակայն մշուշը սկսաւ ցրուիլ. անտառն ալ նօսրացաւ և սքանչելի տեսարան մը բացուեցաւ մեր դէմ. ո՛չ միայն լեռներուն գագաթները, այլ և անոնց սեպ էջքերը այնպէս յստակ գծեր առին, որ կարծես դանդաղ կտորուած ըլլային կապոյտ երկընքին վրայ:

Արևն ալ վերջապէս ցոյց տըւաւ մեզի իր դէմքը: Ի՛նչ մենք և՛ մեր ձիերը կը քալէինք անոր ջերմ ու մեղմ ճառագայթներուն տակ: Մեզմէ ոչ-ոք չէր խօսեր, ո՛չ ընկերս, ո՛չ ես. մինչև անգամ մեր առաջնորդը, որ մինչև հիմա շարունակ կը շաղկարատէր, ան ալ յանկարծ լռեր էր ու կը նայէր հեռուն:

Իսկ ձիերը կը բարձրանային անընդհատ միևնոյն կոնոնաւոր քայլերով, մանաւանդ որ ճամբան ալ սկսաւ քիչ-քիչ հարթուիլ, նոյնիսկ արտեր երեցան մէկ-երկու տեղ. թէպէտ փոքրիկ ու աղքատիկ արտեր. մինչդեռ կէս ժամ առաջ, դեռ անտառ չմտած, ո՛չ թէ աղքատիկ, այլ փութամ արտեր էին և հասուն. մինչև իսկ մէկ-երկու հատը բոլորովին պատրաստ հնձելու. թող թէ աւելի վարը, երբ գիւղէն նոր դուրս կու գայինք, արդէն կալերուն մէջ աշխատանքը սկսած էր:

Այդ ընդարձակ լեռնադաշտակին վրայ մեզմէ գատ ոչ-ոք չկար, ո՛չ իսկ տաւար. չնայելով որ հիանալի պարարտ խոտ էր ամեն կողմ. որովհետեւ տաւարը այս եղանակին կը գտնուէր աւելի բարձր մասերուն վրայ, քան մեր եղած բարձրութիւնն էր:

109. Երկրորդ գիծ մը բաւե՛կ վերի հակադրական շաղկապներուն տակը. երեք գիծ ըլլայ սօրադասական շաղկապներուն տակը. միայն համադրականները մնան մէկ գծով:

110. Նորէն արագրե՛ վերի յօդուածը շաղկապները փոխարինե-
լով ուրիշ նոյնաբոյժի շաղկապով մը:

111. Երկրորդ անգամ գրե՛ վերի յօդուածը զեղջելով շաղկապ-
ները. ուր որ հնար է, առանց իմաստի յստակութեանը վնասելու:

112. Զատե՛ նախադասութիւնները. րնդգծե՛ բոլոր շաղկապները.
պայմանական շաղկապները կ'ընդգծես երկու գծով:

Եթէ կ'ուզես, որ մարդիկ յարգեն քեզի, պէտք է որ նախ դուռն
ինքդ յարգես քեզի: Երբ մարդս ինքզինքը կը յարգէ, երբեք սոոր
գործ մը թոյլ չի տար իրեն, որով և յարգանք կը պարտադրէ
ամենուին:

Հայրս հիմա շատ պիտի ուրախանայ, եթէ իրաւ է բերած լուրդ:
Սակայն մինչև որ լուրը չըստուգուի՝ հօրս ոչինչ չեմ յայտնելու,
որպէսզի ետքը իզուր հիասթափում չպատճառեմ իրեն:

Թէ որ համաձայն ես պայմաններուն՝ գրէ՛ ինծի անմիջապէս,
որ յայտնեմ գործարանաւորիքով: Երբ որ նամակդ ստանամ, իսկոյն
ինքս անձամբ կ'երթամ գործարան: Եթէ կամենաս՝ կրնամ նաև
պայմանագիրը պատրաստել տալ, որպէսզի ամեն ինչ պատրաստ ըլ-
լայ, երբ գաս: Բայց, ինչպէս ըսի, մինչև որ քեզմէ որոշ հրահանգ
չըստանամ, ո՛չ-մէկ քայլ չեմ առներ, որովհետեւ թէ՛ գամ պիտի՝
կ'ըսես, թէ՛ կը յետաձգես. ե՛րբ վերջապէս ժամանակ պիտի գտնես:
Միայն գիտցած եղիր՝ եթէ շատ ձգձգես, մարդը ձեռք կը քաշէ.
քանի որ արդէն շատ մեծ չափ մը չունի մէջը:

Բու նշանաւոր քարեկամդ երեւի դժգոհ է մեզմէ. թէ չէ ինչո՞ւ
պիտի չերեւար այսքան ատենէ իվեր: Վաղը, եկո՛ւր երթանք իրեն,
եթէ ոչ ետքը այլևս ժամանակ չեմ ունենար: Խնդրեմ, այո թէ ոչ
պատասխանդ տո՛ւր. ապա թէ ոչ ինքս մինակ կ'երթամ: Իսկ եթէ,
ո՛չ, բնաւ միտք չունիս երթալու, ան ալ ըսէ, որ այլ ևս այդ մա-
տին խօսք չըլլայ:

113. Զատե՛ նախադասութիւնները. րնդգծե՛ շաղկապները բացառ-
իական շաղկապներուն հետք երկրորդ գիծ մը:

Ուսում տըւինք, որ մարդ դառնայ, որպէսզի շնորհքով գործի
մը կպչի և ո՛չ թէ այսպէս պարապ թափառի: Երբ իրեն այս մասին
ակնարկութիւն մը կ'ընեմ՝ իր պատասխանը միշտ նոյնն է. «Ժամա-
նակ է պէտք, կ'ըսէ, որ մարդ յարմար գործ գտնէ. եթէ ինքներդ
այդ տեսակ գործ մը գիտէք, ինչո՞ւ գաղտնի կը պահէք. պէտք է
երկար փնտռուի, որ յարմար բան մը գտնուի»: Իրողութիւնը այն է
սակայն, որ ահա՛ տարի մըն է նստած է պարապ:

Հին առածը կ'ըսէ. «Արեւը պէտք է տմեն օր քնակարանէդ ներս
մտնէ, որ հիւանդութիւնը հոնկէ դուրս ելլէ»: Ասիկա միշտ կրկնէ՛,
որ միտքդ մնայ: Ես առածները շատ կը սիրեմ. որովհետեւ ատենք

դարերու փորձառութեան պտուղն են, որ ժողովուրդը խտացուցեր է պատկերաւոր խօսքի մը մէջ:

Գիշեր ու ցերեկ կ'առաջանայ անոր համար որ երկիրս կը դառնայ իր առանցքին շուրջը, իսկ ամառ ու ձմեռ կ'ըլլայ այն պատճառով որ երկիրս արեւին շուրս կողմը կը դառնայ:

Յիմարութիւններ մարդիկ շատ կ'ընեն, օրինակ, քեզի նման գողին այդ տեսակ գործ կը յանձնեն: — Մարդուս բնաւորութեան ուժը կ'երեւայ նեղ վայրկեաններուն, այսինքն դժբաղդութեան մը կամ դժուարութեան մը պահուն: — Հայրս հիւանդութենէ շատ կը վախնայ, ինչու որ ժամանակին շատ հիւանդութիւն է քաշած:

Մենք ինչ կարիք ունինք հակառակելու. երբ այդպէս է ընդհանուր տրամադրութիւնը. և ինչո՞ւ պիտի հակառակինք, քանի որ մեր ուղածն ալ վերջապէս ատիկա է: Չէ՞ որ ես ալ միշտ միեւնոյնն եմ պնդած: Եւ քանի որ հիմա ամենքս ալ համակարծիք ըլլալ կը թըրինք, ուրեմն այլ եւս պէտք է գործի ձեռնարկը, այսինքն պէտք է յանձնարարուի ճարտարապետին, որ չէնքին յատկապէս զայստրաստէ:

114. Վերի կտրմբուն շաղկապներ փոխարինե՛ իրենց համարժեք ուրիշ շաղկապներով. հնար եղած ցեղն սլ կրնասէ՛ շաղկապը:



Բ. ԶԱՅՆԱՐԿՆԵՐ

Ա. Զայնարկ կ'ըսենք նախադասութեան այն երկրորդական անդամներուն, որոնք խօսողի զգացումներուն անմիջական յորդումին կը ծառայեն և կամ միջոց մըն են լսողի ուշադրութիւնը խօսողին դարձնելու համար:

Զայնարկները, երբ ներքին յուզումի թափումն է միայն, առանց մասնաւոր կերպով որեւէ մէկուն դիմելու, կը կոչուին բացականշուքիւն: Զայնարկը, երբ մասնաւոր տնձի մը կամ մասնաւոր երեւոյթի մըն է ուղղւած, ըլլայ նորէն իբրեւ յուզումի արտայայտութիւն, ըլլայ պարզապէս կանչելու կամ ուշադրութիւն գրաւելու համար, կը կոչուի դիմառնուքիւն:

Բ. Բացականչութիւնները իրենց ծագումով կրնանք բաժնել չորս խումբի.

1. Պարզ ու իսկական բացականչութիւններ, այսինքն յուզման

4. Կրօնական դիմառնութիւններ՝ Տէ՛ր, Տէ՛ր. Աստուած, Յիսո՛ւս. Քրիստոս, Սուրբ Կոյս Մարիամ, օ՛վ Տիրամայր, Սո՛ւրբ Աստուածածին, Սուրբ Խաչ, օ՛վ սուրբ (այս անուն)։

5. Ծարտասանական դիմառնութիւններ՝ երկի՛նք, դժո՛խք, օ՛վ բնութիւն, ա՛խ երջանկութիւնս, օ՛վ կեանք, օ՛վ մահ, ա՛յ բաղդ։

Դիմառնութիւնները կը գործածուին կա՛մ մերկ, երբեմն ստացական յօդով և աւելի յաճախ դո՛ւն, ո՛վ, ա՛յ, ա՛ կամ ուրիշ բացասականութեան մը ընկերակցութեամբ։

Բոլոր ձայնարկները անխտիր ստորակէտներով կը զատուին նախադասութեան միւս անդամներէն, իբրեւ եկամուտ, իրրեւ ոչ անմիջապէս, հիւսուած բուն նախադասութեան, աւելի կամ նըւազ հարազատ հիւրերն են նախադասութեան։

115. Զատե՛ր նախադասութիւններ. ընդզձե՛ր ձայնարկներ։

Օրիորդը տեղ էր դացեր կէս ժամով և իր փոքրիկ աշակերտները յանձնէր էր դրացի կնոջ մը։

Ա՛խ, այս տնտանգիտ աղաքը. որո՞ւ կ'ըսես. եթէ կրնաս՝ խօսք հասկըցո՛ւր։ Է՛յ, քեզի՛ կ'ըսեմ, ա՛ տղայ, ամեն հանգիւղած բան բերանը չեն առներ. ի՞նչ յիմար սովորութիւն է ատիկա, տնպիտա՛ն։ Հայտէ՛, գնա՛, բայց մարդավարի խաղա՛, աղուո՛րս։ Իսկ դո՛ւն, ազտի՛կ սատանայ, ելիր գեսնէն, ի՞նչ ես փռուեր, պապայիդ անկողի՞նն է գետինը. չե՞ս լսեր, քո՛, չուս։ Դուք ալ հոտ ատանկ խենթ-խենթ մի՛ վազէք. հէ՛յ, խուլցեր էք։ Օ՛խ, ատանկ, կ'իյնաս, հապա՛, խօսքս մտիկ չե՛ս ըներ։ Տէ՛ր Աստուած, զու՛ն համբերութիւն տաս. ո՛ւֆ, սա ձեր վարժուհին ե՞րբ պիտի դայ, որ օձիկս ազատեմ ձեր ձեռքէն։ Դո՛ւն ինչ կը խնդաս երեսիս, փախո՛ւկ։ Չէ՛, դժուար գործ է շիտակը. ահա՛, ինքն ալ եկաւ, փա՛ռք քեզ, Աստուածա՛ծ։ Ի՞նչ ազէկ եղաւ, օրիո՛րդ, որ եկար. ես արգէն, ի՞նչ մեղքս պահեմ, սկսեր էի յուսահատիլ. Աստուած կարողութիւն սայ քեզի, աղջի՛կս. օ՛ֆ, չէ՛, ասիկա իմ քանս չէ։ Տէ՛ր ողորմեայ, շնորհակալութիւնս որն է. ըրա՞ծս ինչ էր որ, հոգի՛ս. ըսելս ան է, զաւա՛կս, որ ուրիշ անգամ աւելի յարմար մէկը կանչես։ Տնաչէ՛ն, արգէն վաթսուսն լցեր է. նորէն նոր վարժուհի՞. հէ՛, քիչիկ մը ուչ է։ Դէ՛, մնաս բարով. յաջողութիւն քեզի, արե՛ւդ սիրեմ։

116. Վերի ձայնարկներէն բացականչութիւն եղածներուն տակը երկրորդ գիծ մըն ալ քաե՛. մեկ գիծով պիտի մնան միայն դիմառնութիւններ։

117. Նորէն արագրէ՛ վերի յօդուածը՝ ձայնարկները փոխարինելով

իրենց համարժեք ուրիշ ձայնարկներով. եւ քովը փակագծի մէջ կը նշեանակես ձայնարկին տեսակը եւ ո՛ր խումբին պատկանիլը:

119. Արագրե՛ նորէն վերի յօդուածը՝ ճնարելով չափ ջնջելով ձայնարկները, միայն այնպէս, որ խիստ անկենդան չդառնայ:

120. Հետեւեալ պատահարը պատմե՛ բացօթեան շէնքերէն ու դիմառնութիւնները շատ սիրով անձի մը բերնով, միայն բնական ու իր տեղը:

Մեր փողոցէն նոր էի դուրս եկեր, պիտի մտնէի հրապարակը. տեսնեմ՝ ահագին բաղմունքիւն է հաւաքուեր. սաստիկ վախճայ, լսին, որ օթօ մը զարնըւեր է հանրակին արագ գալու տուն: Բարեբաղդաբար հանրակը ժամանակին կեցուցեր է վարիչը. թէ չէ սարսափելի դժբաղդունքիւն պիտի պատահէր. կրնաք երեւակայել: Օթայի առջեւի մասը միայն ջարդուեր է և ծռեր է անիւը. բայց մարդու վնաս չկայ:

120. Պատմե՛ միեւնոյնը ո՛չ բնագրին պէս չոփ-չոր. արեւայտե՛ կարելուր կեանքուն մէջ պատմողին վախը, զարմանքը, ուրախութիւնն ու զոհութիւնը. բայց աւելի զուսպ եւ կիրք լեզուով:

Ձայնարկներ շատ գործածելը կիրք խօսուածք չէ:



ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ

ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ԵՕԹԸ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Հիմնական անդամներ

Ա. ՍՑՈՐՈԳԻԶ

Բ. ՆՆԹԱԿԱՅ

Լրացուցիչ անդամներ

Գ. ԽՆԴԻՐ

Դ. ՄԱԿԱՅ

Ն. ՄԱԿԴԻՐ

Երկրորդական անդամներ

Զ. ՇԱԴԿԱՊ

Ի. ԶԱՅՆԱՐԿ

ԻՐԱՔԱՆՁԻՐԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ա. ՍՑՈՐՈԳԻԶ 1. Պարզ 2. Բաղադիր 3. Ասոյթային

Բ. ՆՆԹԱԿԱՅ 1. Ներկայ 2. Զեղչլուած

Գ. ԽՆԴԻՐ ա. Սեռի խնդիր

1. Ներգործական 2. Կրտսորական

բ. Ուղղական բնութեան խնդիր

1. Վիճակի 2. Տեղի 3. Տեւողութեան

գ. Տրական բնութեան խնդիր

1. Միտումի 2. Նպատակի 3. Գործակցութեան
4. Զափի 5. Տեղի

դ. Բացառական բնութեան խնդիր

1. Մագոււմի 2. Զատումի 3. Տեղի 4. Ժամանակի

ե. Գործիական բնութեան խնդիր

Դ. ՄԱԿԱՐԱՅ ա. Որակական մակբայ
1. Ածականէ 2. Դոյականէ 3. Դերանունէ:
4. Դերբայէ 5. Յատուկ մակբայ

բ. Ժամանակի մակբայ
1. Ուղղական 2. Տրական 3. Բացառական
4. Դործիական

Ծ. ՄԱԿԴԻՐ ա. Որակական մակդիր
1. Անուններ 2. Դերբայներ

բ. Բանական մակդիր
1. Թլուական 2. Բաշխական 3. Դասական
4. Զտիական

գ. Յառակական մակդիր
1. Յուցական 2. Ստացական 3. Յատկացուցիչ
4. Յատուկ-անուն 5. Բացայայտիչ

Ջ. ՇԱՂԿԱՊ ա. Համադրական շաղկապներ
1. Պարզ յաւելում 2. Ընդգծուած յաւելում
3. Դերադաս յաւելում 4. Պարզաբանող յաւելում
5. Եզրակացընող յաւելում

բ. Հակադրական շաղկապներ
1. Հակասութեան 2. Առարկութեան 3. Համեմատութեամբ

գ. Անորոշասական շաղկապներ
1. Պայմանական 2. Բացատրական

Զ. ՉԱՅԿԱՐԿՆԵՐ

ա. Բացականչութիւն
1. Բուն բացականչութիւն 2. Չայնունմանութիւն
3. Բառական 4. Նախադասութեամբ

բ. Դիմառնութիւն
1. Կոչական 2. Հայհոյական 3. Փաղաքչական
4. Կրօնական 5. Ճարտասանական

121. Ընկզմե՛ եմբականեր մեկ զծով, ուղղական հոլով բնութեան խնդիրներ երկու զծով եւ անհոլով մակբայներ երեք զծով:

Դռն բերեր ես ինծի իմ հին կօշիկներս, նորերս բե՛ր: Նորերս ես ալ կարգացի լրագրի մէջ ըսածդ:

Կորսըւեր էր մատիտս, իղուր կը փնտռէի գրպաններս ու մօտերս: Նոր գրիչ մը պիտի առնեմ մօտերս:

Կիրակի օրը գիրքերը իրեն յանձնեցի: Կիրակի օր մը կու գամ քեզի, բայց տամն կիրակի գալ չեմ կրնար. մանաւանդ այնպէս տարագ կ'անցնի կիրակի օրը: Ամենուն ալ սիրած օրը կիրակին է. կիրակին հանգստի օր է ու տարբեր կեանքի:

Անցած տարին անուշ կ'ըլլայ. միշտ հաճոյքով կը յիշէ մարդ անցած տարին. սակայն անցած տարի այնքան ձախորդ եղան գործերս, որ իմ անցած տարուան համար նոյնը ըսել չեմ կրնար:

122. Ընդզմե՛ կրաւորական սեռի խնդիր մեկ զծով, բացառական բնութեան խնդիր երկու զծով եւ բացառական մակբայներ երեք զծով:

Առոնց կամքէն ոչինչ կախուած չէ. մեր առաջարկը որպէսզի անցնի՝ պէտք է ընդունուի իրենց տնօրէնէն. այնպէս որ առաջարկը ընելէ առաջ պէտք է տեսնուի տնօրէնին հետ:

Նախագահի չիտակ վարմունքը իսկապէս գնահատուեցաւ ներկաներէն. ներկաներէն և ք'չ մէկը դիտողութիւն չըրաւ. ժողովէն ետքը շատերը համակրանքի ցոյցեր ըրին անոր և ըսին, որ շատ զոհ էին միտցեր անոր անկեղծ ու արդար վերաբերումէն:

Տե՛ս, ահագին ժայռը ըլլարովին մաշուեր է ալիքներու հարուածներէն: Զարմանալու ինչ կայ, որ այդ խեղճ մարդը կը գանգատի կեանքի հարուածներէն: Առաջ բնականաբար այդպէս չէր, երբ դեռ զտրնըւած չէր բաղդի քմայքներէն և կեանքի վրան բարձրէն կը նայէր:

Ձայնս, այո՛, կորըւեր է երգելէն, բայց իմ հոգիս չի կշտանար երգելէն. կեանքս իր սնունդը կ'առնէ երգելէն և պիտի թաղեն ինծի երգելէն:

123. Ընկզմե՛ բնութեան խնդիր գործիական հոլովներ մեկ զծով, գործիական հոլով մակբայներ երկու զծով:

Մէկը հաւատքով կը նայի իր ապագային, միւսը կը նայի անտարբերութեամբ: Կրօնաւորը կը հաւատայ, որ հաւատքով ու ազօթքով փրկէ պիտի իր հոգին:

Ուսմի մարդ կը դառնան աշխատանքով, ուրիշները բողոքով. ու կեանքը կը հոսի աշխատանքով ու բողոքով:

Քաջ մըն ալ առինք զգուշութեամբ և գերանի փտտած մասը
անցանք. զգուշութեամբ միայն կրցանք հասնիլ միւս տփը:

Մարդը երկար կը խօսէր զայրոյթով. ըսի՝ բարեկամ, հանգիստ
խօսէ՛, դուն մեղի ազդել չես կրնար զայրոյթով:

Ամենքը գերուած էին իր հմայքով. և իրաւ որ ան կը պտտմէր
մեծ հմայքով:

Ամանին մէջէն տնախորժ հոտ մը կու գար և աղջիկը անդին
նետեց զգուանքով. և այդ զգուանքով ազատեցաւ աղջիկը ծանր
հիւանդութենէ. ամանը լեցուած է եղբր ճահճային ջրով:

Ակնածութեամբ համբուրեց ծերունիին ձեռքը և ակնածութեամբ
շահեցաւ համակրանքը ծերունիին:

Օրերս կ'անցընեմ խաղալով: Մարդը իր հացը կը հանէ թուղթ
խաղալով:

Քարը որ կերաւ՝ շունը կորսըւեցաւ կաղալով: Սա անպիտանք
գութ շարժել կ'ուզէ կաղալով:

124. Հետեւեալ բառերը գործածէ՛ նախադասութիւններու մէջ իր-
եւ մակդիր:

Ու. մութ. հեռու. մօտիկ. քար. ծով. արև. սուտ. ծակ. գող.
սուր. Գեորգ. Ներսէս. Վան. Արածանի. Արագած. Կարին. «Արա-
րատ». «Անի». «Ֆիրատ»:

125. Այնպէս արագրէ՛ հետեւեալ նախադասութիւնները, որ աւագ
դերբայը կտրուի. առանց իմաստին վնասելու:

Սիրտ չունեցող մարդ մը: — Զատեց երկար հասակ ունեցող
տղաքը: — Ինչ խօսող աչքեր ունի սա նկարը: — Կտուրին ծայրը
նստեր էր մլաւող կատու մը: — Երկար կը պտտմէր գնդապետը իր
ազդող ձայնով: — Բնականաբար այդպէս պիտի վարուէր գէշ կըր-
թութիւն ունեցող մարդը: — Իզուր կը կարդատ այդ բովանդակու-
թիւն չունեցող գրքերը: — Գտանք ընակութեան յարմարող վայր
մը: — Քոյրս երգերը սիրող աղջիկ մըն է: — Ամեն տուրքէ ազատ
եղող առանձնաշնորհալիներ կը գտնուին միշտ: — Կրնաս խօսիլ ըսած-
ներէս դուրս ելող ամեն հարցի մասին: — Այստեղէ տեղեկութիւն
չունեցող լուսնի ընակիչ մըն է: — Սանձի չեկող տղոց համար կան
ուրիշ տեսակի սանձեր: — Զգէ՛. եղբա՛յր, ոչինչով չհետաքրքրուող
մարդիկ են ատոնք:

126. Հետեւեալ քանի մը բառով արտայայտուած մտկոյտները խը-
տացուր բացդ. բառ եղող մակդիրով մը:

Նայէ՛ սա յաղթ տնդամենը ունեցող ըմբիշին. տոխձի սիրտ ու-
նեցող մարդ մը պիտի ըլլայ կարծես:

Դրան առջև նստեր էր նորէն տին սեւ մազեր ունեցող աղջիկը: —
Սիմական ժողովուրդները յայտնի են իբրև խոշոր փիթ ունեցող ցեղ:

Բոցի նման սիրտ ունեցող մարդուն մէկն է։ Հայրը գոհարեղէն ծախող վաճառական մըն էր։

Փունջ մը կազմեց ամենէն աւելի անուշ հոտ ունեցող ծաղիկներէն։ — Իզուր զսպել կը ջանար իր արագ վազք ունեցող ձիերը։ — Այս բանաստեղծին գրուածքը կը նմանի հոտ չունեցող ծաղիկի։ — Ժողովեց իր թիւ ու համար չունեցող զօրքերը, որ արշաւանքի սկսի։ — Դպրոց տարաւ մայրը իր դեռ ո՛չ մէկ ուսում չունեցող մանչը։

127. Լևաթս-դերբայ մակդիրները այնպէս փոխե, որ նորէն մակդիր մնան, միայն առանց դերբայ գործածելու։

Մարդը գլուխը կախած իր ճամբան կ'երթար։ — Կը նայէր շուրջը հետաքրքրուած ուշադրութեամբ։ — Հա՛, ըսաւ, վշտացած շնչոտով մը։ — Ամեն հաճոյքէ զրկուած կեանք մը կ'անցընէ։ Գոնէ ըստ երեւոյթին։ — Քաղաքէն կը հեռանամ միշտ աշխատանքէ տղատուած օրերուս։ — Զգուշութեամբ իրարու փակցողի չվնասուած մասերը։ — Անհամեմատ աւելի վտանգաւոր է անօթեցած կենդանին. կշտացած գազանն անգամ միշտ աւելի խաղաղութիւն սիրող կ'ըլլայ։

128. Հեթեւեալ բառերը գործածե՛ գոյգ նախադասութիւններու մէջ, նախ իբրեւ յաջակակն, վերջը իբրեւ քանակական մակդիր։

Քսակ. փունջ. ցորեն. չարք. տուփ. շիշ. գլուխ. կողով. պըսակ. արտ. խանութ. տոպրակ. բանակ։

129. Մակդիրները առանձին նախադասութիւն դարձո՛ւր. ուրեմն մէկ նախադասութիւնը պէտք է վերածուի երկուի։

Ոտքը կոտրած շուն մը տեսայ։ — Վաղող կենդանին կանգ առաւ։ — Ճերմակ ձեռնոցով ձեռքը մեկնեց տիկնոջ։ — Մարսափահար մարդը ինչ ընելը չգիտէր։ — Կարմիր թաշկինակ մըն էր կապած գլուխը։ — Ու պատուհանէն կը նայէր անկշառմ՝ թարմ ու կանաչ դաշտերուն։ — Կոպիտ պատասխաններ միայն կու տար։ — Երկար երկար աշխատանքէն ծանրացած գլուխը վեր վերցուց հաշուապահը։ — Զարմանքի շարժումս խօսակիցս բարեբաղդաւոր չնշմարեց։ — Զարմանալի պատմութիւնը բոլորիս շատ տարօրինակ թըւեցաւ։ — Է՛, տղայական վարմունք մըն է բրածդ։ — Անվայել խօսքեր են ատոնք քու բերնիդ։ — Եզերքը կոտրած ամանը փակցընել տըւի։ Երկար մտնայ փորձառութեամբ վաւերացուած իրողութիւն մըն է ըսածս։

130. Հեթեւեալ անունները գործածե՛ գոյգ նախադասութիւններու մէջ, ուր անգամ մը մակդիր ըլլան եւ անգամ մը մակդիրուած։

Անձրև. գիշեր. ոսկի. ապակի. թռչուն. պողպատ. աղուէս. ծաղիկ. վարդ. անուշ. մետաքս. փոս. պարոն. օրիորդ. հայր. քոյր. կապոյտ։

131. Ընդգծե՛ ուղղակիան հոլովները, փոխընդանակե՛ք քեզ նախադասութեան ո՞ր անդամն է, ո՞ր տեսակը:

Գեղեցիկ առտու մըն էր: Առտուն արթննալուս պէս ելաւ պարտէզ: Քաղաքը համար կը նախընտրեմ ես առտուն: Առտուն թարմ է, առողջ ու գրաւիչ: Ով իմ կեանքիս առտո՞ւն, դուն ալ աշխուժ էիր ու զըւարթ, բայց, ափսո՛ս, որ դարձեր ես արդէն հեռուոր երազ մը:

Գիշերները ոսկեթելով կը բանէր, որ օրսպահիկը հանել կարողանայ: Սքանչելի են չոր կլիմայ ունեցող երկիրներուն գիշերները: Ո՞վ չսիրեր այս տեսակ գիշերները: Կարծես կը մաքրէ մարդու հոգին այս տեսակ գիշերը: Ի՞նչ աղուոր գիշեր: Մի՛ լուսնար, գիշեր: Ի՞նչ է

132. Ընդգծե՛ք տակաւ հոլովները. փոխընդանակե՛ք իր դերը նախադասութեան մէջ ու տեսակը:

Գրքերուն կազմը գրադարանին մէջ լաւ է ըլլալ նոյն գոյնի ու ձեւի: Դարակ մը պիտի յատկացընեմ նոր գրքերուն: Յատուկ ժամանակ որոշեցինք այդ գրքերու ընթերցումին: Այս տղան գրքի համար հոգի կու տայ: Նստեր ես, կը յօրանջես գրքիդ դէմը: Ես միշտ կ'ուզեմ սիրած գրքերուս քովը ըլլամ: Ի՞նչ տամ այս գրքին: Ի՞նչ է գինը այս գրքին:

Պտուղները ընդհանրապէս կը հասուննան աշնան, աւելի արժէքաւոր են աշնան ցանքերը: Չմեռուան դռները կը բանան աշնան անձրեւները: Մեր աշխարհը անձրեւները միշտ առատ են աշնան: Առաջին ձիւնին երթաս-բարով կ'ըսենք աշնան: Տղուն ամուսնութիւնը սրտէր են գալ աշնան:

Նաւավարը նստեր էր նաւակի քիթին: — Ոստիկանը ապտակ մը իջեցուց պատանիի քիթ ու բերնին: — Կօչկակարին աչկերտը կ'երթար քիթն տակէն բան մը սուլելով: — Այդ երկու աղջիկները կ'աշխատին միշտ քիթ-քիթ: — Լսեցի, որ մեծ փորձանք է եկեր գըլխուն: — Լսելուն պէս վա՛յ տըւաւ գլխուն. վա՛յ գլխուն:

133. Ընդգծե՛ք բացառական հոլովները. դի՛ր փոխընդանակե՛ք ամեն մեկուն խաղցած դերը նախադասութեան մէջ:

Պատիկները կը վախնամ որ շատ պիտի նեղուին տաքէն: — Զըղջիկները գիշերները կը կախուին աշտերու առաստաղէն: — Զօրավարը ետ է կանչըւեր պատերազմի դաշտէն: — Ան ետ է կանչըւեր կեդրոնական կառավարութենէն, իբրեւ թէ իր կատարած մէկ կարեւոր անգաղտնապահութեան երեսէն: — Մութը կոխելէն առաջ պէտք է դուրս եկած ըլլան քաղաքի սահմանէն:

Բազմութենէն սիրուած և բազմութենէն ընտրուած մարդը տեսակ մը գերի է և կախումն ունի միշտ այդ բազմութենէն. պէտք է իր առած քայլերը ընդունելի ըլլան այդ բազմութենէն: Այսպէս պատահանեց խօսակիցս քիթն տակէն ժպտիլէն:

Գործս աւարտելէս ետքը վախ չունիմ ես քու խտնդարելէդ։ Գործս աւարտելէս առաջ է, որ կը վախնամ քու ներկայութենէդ։ — Դիւղէ գիւղ ու քաղաքէ քաղաք կը թափառէին օրերով։ — Երեք օրէ իվեր բան չէ կերած։ և երէկ գիշերւոյնէ սկսած է կազդուրուիլ։ — Անցանք Երեք-չորս սենեակներէ մինչեւ հասանք մեր ուզած պաշտօն-եային, որ մեզի ձեռքով ըրաւ գրասեղանին ետեւէն։

134. Ընդգծե՛ գործիական նոլովները, եւ դի՛ր քովը իրենց արժեքը իբրեւ նախադասութեան անդամ։

Համով-հոտով բան մը պատմէ՛ մեզի. միայն խնդրեմ համով պատմէ։ Ժամանակով ու աշխատանքով կը յաղթենք ամեն դժուարութեան ու արգելքի։ Ժամանակով շատ քաջ թագաւոր մը կար։

Մանիշակի տեսքով ծաղիկ մը տեսաւ ծերունին դաշտով անցնելու տեսն. հետաքրքրութեամբ մօտեցաւ և հիացումով տեսաւ, որ տեսածը ծաղիկ չէր, այլ կապոյտ թելերով թիթեռնիկ մը։

Դեռ բազմաթիւ ժողովուրդներ կան, որ ձեռքով կ'ուտեն կերակուրը։ — Հեռուէն ձեռքով նշան ըրաւ ընկերոջը։ — Ոտքով-ձեռքով երիտասարդը նետուեցաւ իր նոր դործին մէջ։ — Ոտքով կ'երթար ամեն առտու մինչեւ քաղաքին կեդրոնը։ — Ոտքով բանող մեքենայ մը առաւ քրոջը համար։

Յաւով պէտք է յայտնեմ քեզի, որ այն աղուորդ դէմքով տղան ծաղիկ է ինկեր և ամբողջ դէմքը ծածկըներ է փոսիկներով։ Իր այդ փոսիկներով անոր դէմքը չաւնի առաջուան գեղեցկութիւնը, թէեւ իր անուշ նայուածքով խոշոր աչքերը պահած են միշտ իրենց հմայքը։

Տարիներով կը գրէ մարդը և միշտ նոյն առօրեայ միջակութիւններով լեղուն երկերը կը հրամցնէ մեզի. բայց իր յամառութեամբը կ'ըստիպէ, որ յարգանքով ու ներողամիտ կերպով խօսինք իր մասին։

135. Ընդգծե՛ մեկ-երկու նախադասութիւններու մէջ կրկնւող նոյն բառը եւ որո՞ւնք՝ քովը ինչ անդամ ըլլալը։

Ի՞նչ դժբաղդութիւն, Աստուած. ինչո՞ւ կու տայ Աստուած այս տեսակ դժբաղդութիւն մարդուս։ Բարեկամս արժանի չէր այս խիստ հարուածին, ո՛չ, ընդհակառակը. բարեկամս, դուն արժանի էիր գութի ու բաղդաւորութեան։

Ա՛խ, հասկըցայ ձախորդ է գործերնիս։ — Ա՛յր թող, նորէն պէտք է սկսուի աշխատանքը։ — Պառաւը նստեր վայ կու տար գլխուն, թէ՛ «Վա՛յ, խորտակուեցաւ կեանքս»։

«Օ՛խ, քու թեղ ալ ցաւեցաւ» պոռաց տղան բարկութենէն, բայց այդ օխը շատ քիչ միտքարեց։ «Սրիկա՛յ, ինչո՞ւ զարկիր. սը-րիկայ ես դուն, չուն ես դուն»։ Կը պոռար հեռուէն։ Սակայն ի՞նչ օ-

գաւտ, շատ մեծ էր իրմէն այդ «սրիկան», որուն նորէն մօտենալու
սււա՛ղ, չէր համարձակիր:

«Սուրբ կոյս Մարիամ Աստուածածի՛ն, դուն ըլլաս օգնական ինծի
նման խեղճերուն»։ Կ'աղօթէր ծերունին: «Մարիամ Աստուածածինը
միշտ թեւ ու թիկունք է խեղճերուն»։ Վրայ բերաւ ան հաւատքի
խոր շնչով մը:

Նայէ՛ սա փոքրիկի աչքերուն. շատ է ստատանայ: Ա՛յ՛, սառա՛-
նա, ի՞նչ կը դառնաս մեր չորս դին: Հայտէ՛, հեռացի՛ր, թէ չէ սա-
տանան ալ չի փրկեր քեզի իմ ձեռքէս»:

«Այո՛, սիրելի՛ս, մարդուս այոն այո պիտի ըլլայ և ոչը՝ ոչ.
խօսքը փոխող մարդը, ո՛չ, յարգանք վայել չի կրնար»:

136. Ընդգծե՛ մեկ գիծով սեռի խնդիրները եւ երկու գիծով բնու-
թեան խնդիրները:

Իր յոյսը այս մէկ-հատիկ ձին էր. իր ունեցած այդ մէկ-հատիկ
ձին բռներ ծախսը է:— Թռչունը զարնըներ էր թեւէն և զարնըներ
էր շատ ծանր որսորդի մը գնդակէն:— Խոշոր ու հասուն տանձերը
կախուած էին ճիւղերէն և երբ հովը կը փչէր, հասած պտուղները կը
ծնծուէին ճիւղերէն: Հատ մը փրթաւ ճիւղէն, որ անմիջապէս յա-
փըշտակուեցաւ տակի երեսաներէն:

Մեր դատախազը հեռացուցեր են պաշտօնէն: Այդ մարդը ան-
ցած տարի դատախազ նշանակեցին: Հիմա հաւանօրէն նախագահ պի-
տի կարգեն որեւէ դատարանի մը: Նախագահ մը երբ պաշտօնէն հե-
ռացընեն՝ կը զրկեն տեղ մը դատախազ. դատախազ մը երբ պաշտօ-
նանկ ընեն՝ կը դարձնեն ուրիշ տեղ մը դատարանի նախագահ:

137. Ընդգծե՛ մակրայները:

Յատուկ մարդ էին զրկեր մեր ետեւէն. մարդը մեզի կանչելուն
պէս ետ շտապել կ'ուզէր, բայց և այնպէս մեկնելէն առաջ գաւաթ
մը օդին չմերմեց:

Սրտով կը սիրեմ ես այդ հեղինակը, սրտով կը գրէ մարդը. և
սրտով կը յանձնարարեմ քեզի. որ կարգաս իր երկերը:

Անդգուշութեամբ կոխեց ոտքս, բայց իսկոյն քաղաքավարու-
թեամբ ներողութիւն խնդրեց և մեծ յուզումով չգիտէր ինչ ընէ, որ
քանով մը սիրտս տուն:

Քարոզիչը խոհմութեամբ ոչինչ չակնարկեց նախորդ օրուան
դէպքի մասին, բայց ընդհանուր բառով մեղադրեց բռնութիւնն ու
վայրենութիւնը մարդկային վարմունքի:

138. Ընդգծե՛ մակրայները մեկ գիծով, մակդիրները երկու գիծով:

Տխուր դէմքով կը նայէր քեզի, դուն ալ տխուր նայեցար ա-
նոր: Սաստիկ յուզում մը ունեցեր է ու սաստիկ վախեցեր է:

Եղբայրդ թեթեւ վերաբերումով կը մօտենայ ամեն հարցի. իրա՛ւ

է, որ դուն ալ յաճախ թեթեւ կը վերաբերիս, բայց եղբորդ պէս չես նորէն:

Վարպետս առողջ խելքով դատող մարդ մըն է, և երբ մարդ մը առողջ դատէ՝ կարելի է անոր վրայ վստահիլ:

Վերջապէս պարոնը իր տոգոյն ու տկար ճառը աւարտեց. այդպէս դժգոյն ու տկար դեռ չէր խօսած մինչև հիմա:

Այդ քու գովական նկարիչդ անձաշակ պատկերներ կը ցուցադրէ տմեն տեղ և կը ցուցադրէ շատ անձաշակ:

139. Բնդգծե՛՛՛ շաղկապներ:

Բարեկամաբար խօսեցայ հետը, հետեւաբար յոյս ունէի աւելի քաղաքավար վերաբերումի. իսկ ան՝ ո՛չ միայն այն պատասխանը չտրւաւ, որ կ'ըսպասէի, այլ նոյնիսկ ձգեց ու հեռացաւ: Մինչեւ անգամ դրասնենական պաշտօնեան զարմացած մնաց:

Հարցը յետաձգուեցաւ անոր համար, որ դեռ լուս չէր ուսումնասիրուած:

Հագուստները գներ էինք անո՛ր համար, որ չգիտեմ ինչու հագնիլ չուզեց: Հագնիլ չուզեց այն պատճառով որ կտորը շատ էր գոյնզգոյն: Տնեցիք ալ տրդէն չհաւնեցան ա՛յդ պատճառով, որ ես շատ բնական կը գտնեմ:

«Ա՛լ մեր տունը ոտք չդնես» պատասխանեց կինը: Մարդն ալ գլուխը կախ հեռացաւ:

Այլ երկիր, այլ վարք ու բարք. ասիկա սակայն չարիք մը չէ, այլ պիտանի բազմազանութիւն մը:

Շատերը կային հոն, հիւրեր, օրբազանը, այլեւայլ մարդիկ, այլևս այլ մարդիկ:

Մինչեւ իմաց չտամ, տունէն չհեռանա՛ս՝ ըսաւ: Մինչև հիմա կ'ըսպասեմ իրեն. մինչև ե՞րբ սպասեմ. ե՞րբ պիտի վերադառնայ. երբ օր վերադառնայ՝ ստորագրել կու տամ:

Ուրեմն դուն յուսալից ես միշտ. երբեմն իմ յուսահատիլս կու գայ, որովհետև շատ երկար տեւեց այս դատը. այլ և դժբաղդաբար մեծ դեր կը խաղայ կաշառքը. իսկ մենք դրամ խողցընել չենք կրնար. հետեւաբար մեծ բան մը չէ արժեւոր մեր արդար ու իրաւացի ըլլալը:

140. Ո՞ր հոլովներն են, որ միայն բնութեան խնդիր կ'ըլլան. ո՞ր հոլովներն են, որ կ'ըլլան սեռի ու բնութեան խնդիր. և ո՞ր հոլովներն են, որ կրնան ենթակայ ըլլալ:

141. Ենթակայ մը ե՞րբ կրնանք զեղջիւ. և ինչո՞ւ կը զեղջենք:

142. Ինչո՞ւ համար նախադասութեան մէջ զերանուն եզոզ անգամի մը անկումը նըւազ կտրեւոր է ու շատ աւելի սովորական, քան բուն անունի մը զեղջըւիլը:

143. Ժամանակ ցոյց տըւող խնդիրները ի՞նչ հոլովներով կըրնան գրուիլ, և ամեն մէկը իմաստի ի՞նչ առումով:

144. Տեղը ցոյց տըւող խնդիրները ի՞նչ հոլովներով կըրնան գրուիլ. և ամեն անգամ իմաստի ի՞նչ տարբերութիւն կ'ըստանան:

145. Ո՞րոնք են դիրք ցոյց տըւող բառերը. ստոնք ի՞նչ պայմանով կրնանք կցորդ նկատել. և ի՞նչ է տարբերութիւնը գոյական եզոզ անունի մը և կցորդ եզոզ անունի մը միջեւ:

146. Ե՞րբ է, որ բացառական և գործիական հոլով խնդիրները նոյն իմաստը ունին և կրնան իրար փոխանակել:

147. Ո՞ր հոլովներն են, որ ամենէն շատ կը գործածուին հայերէն լեզուի մէջ, և ո՞ր հոլովներն են, որ համեմատաբար ամենէն քիչ կը գործածուին:

148. Ո՞ր հոլովներն են, որ ամենէն աւելի տարբեր-տարբեր տեւակի գործածութիւններ ունին. ո՞ր հոլովն է, որուն գործածութեան տեսակները սահմանափակ են:

149. Տրական ու բացառական հոլովները իմաստի ներքին հակադրութիւն մը ունին. ո՞րն է այդ հակադրութիւնը:

150. Սեռի խնդիրը ինչո՞վ նման է բնութեան խնդրին և ինչո՞վ անկէ կը տարբերի:

151. Ո՞ր սեռի բայերն են, որ կրնան ներգործական սեռի խնդիր ստանալ. ո՞ր սեռի բայերն են, որ կրնան կրաւորական սեռի խնդիր ստանալ. և ո՞ր սեռի բայերն են, որ կրնան միայն բնութեան խնդիր ստանալ:

152. Մակբայները ինչո՞վ կը նմանին խնդիրներուն և ո՞ր տեւակի խնդիրներուն. ի՞նչ է իրենց տարբերութիւնը խնդիրներէն:

153. Գործիական հոլովը ե՞րբ է մակբայ և ե՞րբ է բնութեան խնդիր:

154. Ո՞ր կցորդներն են, որ մակբայ շինելու կը գործածուին և ի՞նչ տեսակի մակբայ:

155. Անորոշ դերութիւն ի՞նչ վիճակի մէջ մակբայ կը դառնայ և ի՞նչ տեսակի:

156. Ո՞ր և քանո՞ւններն են, որ իբրև մակբայ կը գործածուին:

157. Դրարաւի ո՞ր ձեւերն են, որ անցած են աշխարհագրին իբրև մակբայ, ինչո՞ւ են անցեր:

158. Մակդիրը ինչո՞վ նման է մակբային և ինչո՞վ կը տարբերի անկէ:

159. Որակական ու քանակական մակդիրները իրենց ո՞ր յատկութեամբ կապուած են իրարու:

160. Որակական մակդիրը ի՞նչ հոլով կ'ըլլայ:

161. Ի՞նչ հիմնական տարբերութիւն ունի մակդիրը նախադասութեան միւս անունն եղող անդամներէն:

162. Որակական ու յատկական մակդիրներուն մէջ ի՞նչ հիմնական տարբերութիւն մը կայ:

163. Ստացական ու ցուցական մակդիրներուն տարբերութիւնը ո՞ւր է:

164. Յատկացուցիչ և ցուցական մակդիրները ինչո՞վ կը նմանին և ինչո՞վ կը տարբերին իրարմէ:

165. Բառ մը, ե՞րբ ամական կ'անուանենք և երբ մակդիր:

166. Գործողութիւնը ցոյց տրուող բառ մը ե՞րբ բայ կ'անուանենք և ե՞րբ ստորոգիչ:

167. Ո՞ր պարագային յատկացուցիչը դիւրութեամբ կրնանք դարձնել տրական հոլով բնութեան խնդիր, առանց իմաստին փոփոխելու:

168. Ինչո՞ւ համար ցուցական, ստացական կամ յատկացուցիչ մակդիր մը ունեցող բառը որոշիչ կամ դիմորոշ յօդ կ'առնէ վրան:

169. Ի՞նչ տարբերութիւն կայ «Մկրտիչիան Յովսէփ» կամ «Յովսէփ Մկրտիչեան» արտայայտութիւններուն մէջ և՛ իմաստի և՛ քերականութեան:

170. Ձայնարկները ի՞նչ դեր ունին նախադասութեան մէջ. չաղկապներուն դերը որն է: Ինչո՞ւ այդ երկու խումբը կը համարուին նախադասութեան երկրորդական անդամներ:

171. Ի՞նչն է առանձնայատկութիւնը յատուկ մակբայներուն, յատուկ չաղկապներուն և բուն բացականչութիւններուն. ինչի՞ մէջն է ատոնց ամենուն ընդհանուր եղող յատուկութիւնը:

172. Նախադասութեան ո՞ր անդամներն են, որ կրնան հոլովուած ըլլալ. ո՞ր անդամներն են, որ միայն ուղղական կ'ըլլան. ո՞ր անդամներն են, որ կրնան անթեք բառեր ալ ըլլալ:

173. Բնութեան խնդիրներուն այս կամ այն հոլովով դրուելը ինչէ՞ն է կախուած:

174. Նախադասութեան երկար կամ կարճ դարձնողը իր ո՞ր անդամներն են սուփորարար:


175. Դերրայները ի՞նչ դերեր կը խաղան նախադասութեան մէջ. անոնք բա՞յ են թէ անուն:

176. Ի՞նչ տեսակ բառերուն կ'ըսենք անթեք բառ: Ատիկա չի՞ հակասեր հետեւեալ արտայայտութիւններուն: «Այլ զղուեցուցին ինծի իր անվերջ օ'խ. երն ու օ'ֆ երը»: «Քու թէն-ներէդ ու բայց-երէդ ի՞նչ օգուտ ինծի»: «Նորէն ըսէ՛ այդ նախադասութիւնը միայն առանց առանց-ի»:

177. Ինչո՞վ կը տարբերին դերբայական ձևերը բայական ձևերէն: Ատոր չե՞ն հակասեր հետեւեալ արտայայտութիւնները: «Մարդը տարբերութիւն չի դներ գիտեմ-ի ու չգիտեմ-ի մէջ»: «Քարոզիչը իր ճառն սկսաւ կը սիրեմ. ով ու վերջացուց ասելութեամբ»: «Ըսաւ-էն մինչև ըրաւ-ը տարածութիւնը շատ մեծ է»:

178. Ի՞նչ չափով ճիշդ է, եթէ ըսենք՝ «Նախադասութիւնը քանի մը բառով արտայայտուած բաղադիր բառ մըն է, և բառն ալ անգմըւած աւ մէկ բառով մը արտայայտուած նախադասութիւն մըն է»:





ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0070087

